Թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաների համար բարձրարժեք արտադրանքի օրինակ է էներգախնայող շինարարական նյութերը. միննույն ժամանակ, դեկորատիվ նյութերի արտահանումն արդեն իսկ ապացուցել է իր շահութաբերությունը: Հայրենական բազալտը և պեռլիտը կարող է օգտագործվել մեկուսիչ նյութեր արտադրելու, իսկ տրավերտինը և տուֆը՝ դեկորատիվ իրեր ստանալու համար:

**Օտարերկրյա ուղղակի ներդրումները կարող են առանցքային դեր կատարել շինարարական նյութերի և հայրենական ՓՄՁ-ների զարգացմանն աջակցելու հարցում**

Հայաստանում շինարարական նյութերի ոլորտը բաղկացած է հիմնականում ՓՄՁ-ներից: Այն դեռևս փոքր է, և 2012 թվականին նրան բաժին է ընկել ՀՆԱ-ի 1-2%-ը: Այս ոլորտն ընդգրկում է տնտեսական գործունեության մի քանի տեսակներ՝ սկսած հումքի (օրինակ՝ տրավերտին և բազալտ) արդյունահանումից մինչև միջանկյալ արտադրանքների (օրինակ՝ ցեմենտ, մեկուսիչներ) և շինարարության մեջ օգտագործվող վերջնական արտադրանքների (օրինակ՝ կերամիկական սալիկներ և պատուհաններ) արտադրություն:

Շինարարական նյութեր արտադրող ընկերությունները բախվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են սահմանափակ տեխնոլոգիաները, արտահանման մասով գիտելիքների պակասը և ներդրումային փոքր հնարավորությունները: Միայն ներքին ներդրումների հաշվին, երևի թե, հնարավոր չի լինի Հայաստանում ապահովել բարձրարժեք, արտահանման համար պիտանի շինարարական նյութերի արտադրման համար պահանջվող նորարարության և կարողությունների անհրաժեշտ մակարդակ:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները կարող են օգնել այս խնդիրների լուծման հարցում: Անշուշտ, ՕՈՒՆ-ը մեծ դեր է խաղացել երկրի տնտեսական զարգացման գործում՝ 2000-2013 թվականներին՝ կազմելով ընդհանուր ներդրումների ավելի քան 20%-ը: Բացի ազգային եկամուտի մեջ ունեցած ուղղակի ներդրումից, ՕՈՒՆ-ը բարելավում է ՓՄՁ-ների



համար միջազգային արտահանման շուկաների հասանելիությունը, հմտությունները և տեխնոլոգիաները: Հետևաբար, Հայաստանի շինարարական նյութերի պարագայում ՕՈՆ-ի ներգրավման հարցում նպատակաուղղված մոտեցման կիրառումը կարող է նպաստել ոլորտի զարգացմանը և աճի առկա հնարավորությունների օգտագործմանը:

Այդուամենայնիվ, շինարարական նյութերի ոլորտը մեծ մարտահրավերների առաջ է կանգնած նաև բազմազգ ընկերություններին գրավելու և դրանց ազդեցությունը հայրենական ՓՄՁ-ների վրա առավելագույնի հասցնելու հարցում. սա, մասնավորապես, վերաբերում է մեծ շինարարական շուկաների սահմանափակ հասանելիությանը, ոլորտում ՕՈՆ-ի ներգրավման դինամիկային և հայրենական ՓՄՁ-ների կարողություններին:

Առաջին՝ տեղական փոքր շինարարական շուկայի սահմանափակ պահանջարկը՝ զուգակցված արտահանման մասով առկա խոչընդոտների հետ, կարող է ապախրախուսել օտարերկրյա ներդրողներին Հայաստանում իրենց գործունեությունը տեղակայելու հարցում:

Երկրորդ՝ այս որոտում ՕՈՆ-ը պատմականորեն եղել է ցածր մակարդակի վրա, և ոչ մի գլոբալ առաջատար ընկերություն նշանակալից ներդրում չի կատարել Հայաստանում: Օտարերկրյա ներդրողների մասնակցության ցածր մակարդակը և ոլորտում տարվող խթանման կոնկրետ միջոցառումների սահմանափակ լինելու հանգամանքը կարող է թույլ չտալ, որպեսզի Հայաստանն իրացնի իր պոտենցիալը՝ որպես շինարարական նյութերի մասով ներդրումների նշանակետ, չնայած երկրում առկա բնական պաշարներին:

Եվ վերջապես՝ տեղական արդյունաբերական բազան չունի կարողություններ՝ հմտություններ և տեխնոլոգիական միջոցներ: Վերջին 25 տարիների ընթացքում ոչ մետաղական նյութերի մշակման ծավալները տաս անգամ նվազել են: Սա հանգեցրել է ոլորտի ՓՄՁ-ների կարողությունների ցածր մակարդակի, ներառյալ՝ սահմանափակ հմտությունները, տեխնոլոգիաները և ներդրումային պոտենցիալը: Կարճաժամկետ հեռանկարում օտարերկրյա ներդրողների համար կարող է դժվար լինել տեղացի բիզնես գործընկերներ գտնելը, ինչի կարիքը

նրանք ունեն չայաստանում շահութաբեր գործունեություն ծավալելու համար:

**Ելնելով միջազգային լավագույն գործելակերպից՝ կարելի է առանձնացնել գործողությունների երեք խումբ, որոնք կարող են օգնել շինարարական նյութերի ոլորտում ավելի մեծ ծավալով ՕՈՆ-ի ներգրավմանը և տեղական ՓՄՁ-ների զարգացմանը**

Ոլորտին առնչվող միջազգային հաջող գործելակերպի ուսումնասիրությունը ներշնչման աղբյուր է հանդիսանում հայաստանյան բարեփոխումների գործընթացի համար: Այս գեկույցում առաջարկվում է, որպեսզի ՀՀ կառավարությունը գործի հետևյալ բնագավառներում.

- **Ձևավորել չայաստանում արտադրվող շինարարական նյութերի պահանջարկ.** բարելավել շինություններում էներգետիկ արդյունավետության պահանջների մասով կարգավորումը և օժանդակել այդ կարգավորումների կիրառմանը, իրականացնել շինարարության ոլորտում էներգետիկ արդյունավետության տնտեսական օգուտների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ և օպտիմալացնել շինարարության թույլտվությունների ստացման ընթացակարգերը: Ինչ վերաբերում է արտաքին պահանջարկին, ապա ՀՀ կառավարությունը պետք է ընդլայնի արտահանման մասով տեղեկատվության հավաքման, արտահանման խթանման ու ՓՄՁ-ներին արտահանման մեջ ներգրավելու ուղղությամբ տարվող աշխատանքները:
- **Շինարարական նյութերի ոլորտում ավելի մեծ ծավալով ՕՈՆ ներգրավել.** զարգացնել ներդրումների խթանմամբ զբաղվող ազգային գործակալությունը, որպեսզի այն առավել ազդեցիկ մասնակցություն ունենա և հանդես գա որպես մեկ պատուհանի սկզբունքով գործող սպասարկման կետ ներդրողների համար ներդրումային պարբերաշրջանի ողջ ընթացքում, միաժամանակ ըստ անհրաժեշտության նպատակային բանակցություններ իրականացնի ընտրված առանցքային պոտենցիալ ներդրողների հետ: Բացի այդ, ՀՀ կառավարությունը կարող է մշակել այնպիսի գործողություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի թիրախավորել հայկական սփյուռքը՝ արտերկրի ազդեցիկ հայերի

միջոցով, և մշակել ուղղորդման ու կապակցման նախաձեռնություններ՝ ՓՄՁ-ներին և պոստենցիալ ներդրողներին միմյանց կապակցելու համար:

- **Զարգացնել ՓՄՁ-ների՝ արտասահմանցի ներդրողների հետ աշխատելու կարողությունները.** ստեղծել ՕՈՒՆ-ՓՄՁ կապակցման ծրագիր, որը պետք է կառուցված լինի այնպես, որ առավելագույնի հասցնի տեխնոլոգիայի և գիտելիքի ածանցյալ ազդեցությունները տեղական տնտեսության վրա: Դա կարող է ենթադրել տեղական ընկերությունների հմտությունների զարգացում, ինչպես նաև բիզնեսի զարգացմանն ուղղված աշխատանքներ՝ ելնելով առկա հմտությունների և բիզնես կարիքների գնահատումից: Դա կարելի է սկսել շինարարական նյութերի ոլորտում պիլոտային ծրագրի իրականացման միջոցով:



## ԳԼՈՒԽ 1. ՕՈՒՆ-Ը ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈԼՈՐՏԸ

Այս գլխում քննարկվում է, թե ինչպես է կարելի զարգացնել Հայաստանի շինարարության արժեքի շղթան շինարարական նյութերի արտադրությունն ուշադրության կենտրոնում պահելու միջոցով: Համաշխարհային և տարածաշրջանային շինարարական շուկաների ներուժից օգտվելու համար Հայաստանը պետք է կարևորի բարձրարժեք, արտահանելի ապրանքների արտադրությունը: Դրա համար պահանջվում են օտարերկրյա ուղղակի ներդրումներ՝ այդպիսի ապրանքների արտադրության համար անհրաժեշտ տեխնոլոգիաների և սարքավորումների ներդրման համար: Սա նաև հնարավորություն կտա արժեքի շղթայում գտնվող տեղական ընկերություններին մուտք ունենալ նոր շուկաներ և մեծացնել իրենց կարողությունները տեխնոլոգիաների փոխանցման միջոցով:

Հայաստանը շինարարական նյութերի ոլորտում ունի մրցակցային առավելություններ, որը կարող է ներգրավել ՕՈՒՆ՝ պայմանավորված ոչ մետաղական հանքանյութերի բնական պաշարներով և այլ ներդրումների ցածր արժեքով: Սակայն դեռևս առկա են բազմազգ ընկերությունների ներգրավման հետ կապված մարտահրավերներ, ինչպիսիք են՝ սահմանափակ ներքին պահանջարկը և արտահանմանը խոչընդոտող գործոնները, ոլորտի խթանմանն ուղղված բազմաթիվ ջանքերը և ՓՄՁ-ների կարողությունների ցածր մակարդակը:

**Հայաստանի ՓՄՁ-ները բախվում են մի շարք խնդիրների, որոնք կարելի է լուծել ՕՈՒՆ-ի միջոցով**

***ՓՄՁ քաղաքականության համաթիվն ընդգծում է Հայաստանում բարեփոխման ենթակա խնդիրները***

Փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ) զգալի ներդրում ունեն Հայաստանի զարգացման գործում՝ 2012 թվականին ապահովելով համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 42.5%-ը և զբաղվածության 42.2%-ը (ՏՀԶԿ և այլք, 2012 թ.): *ՓՄՁ քաղաքականության համաթիվի համաձայն՝* ՓՄՁ-ներին բաժին է ընկնում ՀՆԱ-ի զգալի տեսակարար կշիռը գյուղատնտեսության, առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտներում, սակայն սահմանափակ տեսակարար կշիռ՝ արդյունաբերության, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում (*ՓՄՁ քաղաքականության համաթիվի* մասին ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար տե՛ս Վանդակ 1-ը):

Սկսած 2000 թվականից՝ ՀՀ կառավարությունը ակտիվ մտտեցում է որդեգրել ՓՄՁ-ների աճին աջակցելու հարցում, ինչը ներառում է նաև ՓՄՁ քաղաքականության իրականացման գործակալության՝ ՓՄՁ ԶԱԿ-ի ստեղծումը: Համաձայն *ՓՄՁ քաղաքականության համաթիվի՝* Հայաստանը, այլ երկրների համեմատ, առաջընթաց է գրանցել ՓՄՁ-ների գործառնական միջավայրի բարեփոխումների, ՓՄՁ քաղաքականության մշակման և սնանկության մասին օրենքների ընդհանուր շրջանակի մասով (ՏՀԶԿ և այլք, 2012 թ.):

Բայցևայնպես, համաթվում կարևորվում է ձեռնարկությունների հմտությունների, նորարարության և միջազգայնացման ոլորտներում բարելավման անհրաժեշտությունը: Այս գերակա ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ) բերող բազմազգ ընկերությունների աճող ներկայությունը կարող է աջակցել բարեփոխումների օրակարգին, ինչին տեղական կառավարությունները պետք է հետևեն:

### **Վանդակ 1. ՓՄՁ զարգացման խնդիրները Արևելյան գործընկեր երկրներում**

Վեց Արևելյան գործընկեր (ԱԳ) երկրները (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա) երևան են եկել որպես կարևոր տնտեսական տարածաշրջան, որն ունի ռազմավարական դիրք Արևելքի և Արևմուտքի միջև, և մոտ է ԵՄ-ի, Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի մեծ շուկաներին:

Չնայած ԱԳ երկրների շրջանում զգալի տարբերություններին՝ չափի, բնակչության, բնական պաշարների և տնտեսական զարգացման առումով, ՓՄՁ-ները կարևոր դեր են խաղում հենց այդ տարածաշրջանում որպես տնտեսական աճի և զբաղվածության շարժիչ ուժ: Նրանց՝ տնտեսական զարգացման ներուժը լծակելու համար ԱԳ երկրների կառավարությունները պետք է հասկանան տեղական ՓՄՁ-ների հիմնական մարտահրավերները և դրանց լուծման համար ներդնեն համապատասխան քաղաքականություններ:

Այդ ջանքերին աջակցելու համար ՏՀԶԿ-ի, Եվրոպական Հանձնաժողովի, Եվրոպական վերապատրաստման հիմանդրամի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից համատեղ մշակվել է «ՓՄՁ քաղաքականության համաթիվ. Արևելյան գործընկեր երկրներ, 2012թ.»: Համաթիվով գնահատվում է ՓՄՁ գործող քաղաքականությունների շրջանակը ԱԳ երկրներից յուրաքանչյուրում՝ ըստ «Եվրոպայի փոքր բիզնեսի ակտում» ամրագրված տաս սկզբունքներին առնչվող հայեցակարգային կետերի:

Համաթիվը՝ վեր է հանել տարածաշրջանում ձեռնարկվող ջանքերը բիզնես գործունեության համար գործառնական միջավայրն օպտիմալացնելու, ընկերությունների գրանցման ընթացակարգերը պարզեցնելու և պետական վարչական մարմինների հետ շփվելիս ՓՄՁ-ների ժամանակը և ծախսերը նվազեցնելու նպատակով: Այնուհանդերձ, դեռևս առկա է գործարարության ուսուցման և կանանց ձեռնարկատիրության, ձեռնարկատիրական հմտությունների, նորարարության և միջազգայնացման մասով ՓՄՁ քաղաքականությունների բարելավման անհրաժեշտություն:

1. Ներկայումս ընթացքի մեջ է գնահատման նոր շրջան, որի արդյունքների հրապարակվելու են 2015 թվականի ՓՄՁ քաղաքականության համաթիվում:

*Աղբյուրը.* ՏՀԶԿ և այլք, 2012թ. ՓՄՁ քաղաքականության համաթիվ՝ Արևելյան գործընկեր երկրներ. 2012թ. Առաջընթացը «Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի» իրականացման մասով, հրապարակված ՏՀԶԿ-ի կողմից, Փարիզ. <http://dx.doi.org/10.1787/9789264178847-en>:

### ***Բազմազգ ընկերություններն աջակցում են տեղական ՓՄՁ-ների զարգացմանը***

Օտարերկրյա ուղղակի ներդրումների հնարավոր օգուտները այն ստացող տնտեսությունների համար պատշաճորեն փաստաթղթավորված


են ՏՀԶԿ-ի (2002 թ.) և այլ միջազգային կազմակերպությունների (UNCTAD, 2001թ., Համաշխարհային բանկ, 2004թ.) կողմից: ՕՈՆՆ-ը դրական ազդեցություն են ունենում ներքին տնտեսության վրա երեք հիմնական ուղղություններով: Առաջին՝ ընդունող երկրում ներդրում կատարող բազմազգ ընկերությունները (ԲԱԸ-ներ) լրացուցիչ բիզնես հնարավորություններ են ընձեռում միջանկյալ ապրանքների տեղական մատակարարներին: Երկրորդ՝ ՕՈՆՆ-ի արդյունքում արտաքին առևտուրն ավելի շատ է ինտեգրվում՝ վերջին հաշվով հանգեցնելով ներդրումների, ինչպես նաև արտահանման ծավալների աճի: Երրորդ՝ դրանք, ամենայն հավանականությամբ, բազմաթիվ դրական արտաքին ազդեցություններ կառաջացնեն տեղական բիզնես ոլորտի վրա, ինչպիսիք են՝ տեխնոլոգիաների և հմտությունների փոխանցումը հետազոտատար միջազգային կորպորացիաներից՝ տեղական մատակարարներին (ՕՈՆՆ վերջին միտումների մասով՝ տե՛ս Վանդակ 2-ը):

Մասնավորապես, ՕՈՆՆ-ը նպաստում են փոքր և միջին ձեռնարկությունների զարգացմանը՝ դյուրացնելով նրանց մուտքը արտաքին շուկաներ և տեխնոլոգիական կողմնակի ազդեցությունների միջոցով: ԲԱԸ-ների հետ կապերը տեղական ՓՄՁ-ներին ավելի մեծ շուկայական ծավալների հասանելիության հնարավորություն են ապահովում միջազգային արտադրության և ԲԱԸ-ների տեղական մասնաճյուղերի բաշխիչ ցանցերի միջոցով: Բացի այդ, գլոբալ արժեքի շղթայի հատվածավորումը ՓՄՁ-ներին հնարավորություն է ընձեռում դառնալ միջանկյալ ապրանքների մատակարարներ մեծ բազմազգ ընկերությունների համար: Որակի մասով առավել խիստ պահանջների բավարարումը վերընթաց ուղղությամբ ապահովելու նպատակով ԲԱԸ-ները հաճախ տեխնիկական աջակցություն, վերապատրաստում և տեղեկատվություն են տրամադրում մատակարարների արտադրության որակը բարձրացնելու համար: Հմտությունների այս տեսակը և տեխնոլոգիաների փոխանցումն ի վերջո թույլ է տալիս ՓՄՁ-ներին բարելավել իրենց կարողությունները<sup>2</sup>:



**Վանդակ 2. Զարգացող և անցումային տնտեսություններն ավելի մեծ դեր են խաղում ՕՈւՆ-ի միջավայրում**

2013 թ. ՕՈւՆ-ի գլոբալ հոսքերը կազմել են 1.45 տրիլիոն դոլար: Քանի որ ակնկալվում է վերականգնման շարունակություն 2014-2016 թ.թ. նախաձգնաժամային մակարդակին հասնելու համար, ապա զարգացող և անցումային տնտեսություններն էլ ավելի մեծ դեր են խաղում, ինչն արտացոլվում է ՕՈւՆ-ի հոսքերի երկարաժամկետ միտումներում:



Ոլորտային տեսանկյունից՝ 2010-2012 թվականներին ՕՈւՆ-ի գլխավոր թիրախներն են եղել ֆինանսական միջոցները և բիզնես գործունեությունը, որոնց մասով արձանագրվել է համապատասխանաբար 30% և 70% ընդհանուր ՕՈւՆ-ի ներհոսք: Մինևույն ժամանակահատվածում շինարարության համաշխարհային ինդուստրիային բաժին է ընկել ՕՈւՆ-ի ընդամենը 2%-ը (տարեկան մոտավորապես 28 միլիարդ ԱՄՆ դոլար), սակայն այս ցուցանիշն ավելի բարձր է անցումային տնտեսություններում՝ կազմելով միջինում ընդհանուր ՕՈւՆ-ի 5%-ը (տարեկան մոտավորապես 4 միլիարդ ԱՄՆ դոլար): 2010-2012 թվականներին Հայաստանում շինարարության ինդուստրան ստացել է ընդհանուր ՕՈւՆ-ի 1%-ը (տարեկան մոտավորապես 7 միլիոն ԱՄՆ դոլար):

*Աղբյուրը. Միավորված ազգերի առևտրի և զարգացման հարցերով կոնֆերանս (2014թ.), Համաշխարհային ներդրումների մասին հաշվետվություն. Ներդրումներ կայուն զարգացման նպատակների մեջ. Գործողությունների ծրագիր, Միացյալ ազգերի կազմակերպություն, Նյու Յորք:*


***Անհրաժեշտ են ՕՈւՆ-ի ներհոսքերը հաստատուն պահելու և դրանք տեղական ՓՄՁ-ներին հասցնելու քաղաքականություններ***

*Հայաստանում ՕՈւՆ-ին բաժին է ընկնում հաստատուն կապիտալի ձևավորման մեծ մասնաբաժին*

Չնայած ՕՈւՆ-ի ներհոսքերն ընդհանուր առմամբ սահմանափակ են՝ օտարերկրյա ներդրողները կարևոր են Հայաստանի տնտեսական զարգացման համար: ՀՆԱ-ի վրա ՕՈւՆ-ի հիմնական ազդեցությունը պայմանավորված է համախառն հաստատուն կապիտալի ձևավորման

(ՀՀԿՁ) խթանմամբ: Բացառությամբ մի քանի տարիների՝ Հայաստանում ՕՈՒՆ-ի ներդրումը ՀՀԿՁ-ում ավելի բարձր է եղել նախկին խորհրդային համակարգերից դեպի շուկայականի անցում կատարող այլ հենանիշային տնտեսությունների և կայուն բարձր՝ աշխարհի մնացած երկրների համեմատ (Գծապատկեր 1):

**Գծապատկեր 1. ՕՈՒՆ ներհոսքերը որպես համախառն հաստատուն կապիտալի տեսակարար կշիռ**



Ծանոթություն. Անցումային տնտեսությունների թվում են Ալբանիան, Բոսնիան և Հերցեգովինան, Վրաստանը, Մոնտենեգրոն, Սերբիան, Մակեդոնիան և ԱՊՀ երկրները:

*Աղբյուրը. Միավորված ազգերի առևտրի և զարգացման հարցերով կոնֆերանս (2014թ.), Համաշխարհային ներդրումների մասին հաշվետվություն. Ներդրումներ կայուն զարգացման նպատակների մեջ. Գործողությունների ծրագիր, Միացյալ ազգերի կազմակերպություն, Նյու Յորք:*

Պատմականորեն դեպի Հայաստան ՕՈՒՆ-ի ներհոսքի մոտավորապես 80% -ը գալիս է հինգ երկրներից, որտեղ իրենց մեծ դերն ունեն Ֆրանսիան, Ռուսաստանը, Գերմանիան և Արգենտինան (տե՛ս Աղյուսակ 1-ը): Ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ 2010-2012 թվականների ընթացքում երկրի հեռահաղորդակցության, կենցաղսպասարկման և ֆինանսական ծառայությունների ոլորտներում ներդրումներին բաժին է ընկել ընդհանուր ՕՈՒՆ-ի ամենամեծ մասնաբաժինը (սա վերջին տարին է, որի վերաբերյալ կան տվյալներ) (ԱՎԾ, 2013թ.): Հեռահաղորդակցության ցանցի, հանքարդյունաբերության ակտիվների, էլեկտրաէներգիայի ստացման և բաշխիչ համակարգերի մեծ մասի, պատմական նշանակություն ունեցող կոնյակի գործարանների և երկրի հիմնական օդանավակայանների սեփականաշնորհումը պայմանավորում է Հայաստանում օտարերկրյա առևտրային ներկայության առյուծի բաժինը, որը ներառում է մի քանի բազմազգ ընկերություններ, ինչպիսիք են՝ Օրանժը, Վիմպելկոմը, Պեոնո Ռիկարը, Կրեդիտ Ագրիկոլը և Լիտոկոլը (օրինակը տե՛ս Վանդակ 3-ում):

**Աղյուսակ 1. ՕՈՆՆ ներհոսքերը Հայաստան՝ ըստ ոլորտների և երկրների (2010-2012թթ. միջին ցուցանիշ)**

ՕՈՆՆ ներհոսքը՝ ըստ ոլորտների, 2010-2012թթ. միջին ցուցանիշ		ՕՈՆՆ ներհոսքը՝ ըստ երկրների, 2010-2012թթ. միջին ցուցանիշ	
Ոլորտ	Ընդհանուրի %	Երկիր	Ընդհանուրի %
Հեռահաղորդակցություն	34.2	Ռուսաստան	34.6
Էլեկտրականություն, գազ, հոսանք	12.4	Ֆրանսիա	27.4
Ֆինանսական ծառայություններ	8.9	Գերմանիա	5.4
Հանքարդյունահանման այլ տեսակներ	8.3	Արգենտինա	5.1
Անշարժ գույքի գործառնություններ	7.6	ԱՄՆ	2.4
Հիմնական մետաղների արտադրություն	6.5	Լիբանան	2.3
Վերգետնյա/խողովակով փոխադրում	5.2	ՄԹ	1.6
Այլ	16.9	Այլ	21.2

Աղբյուրը. ԱՎԾ (2013թ.), Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013թ., Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, [www.armstat.am/en/?nid=45&year=2013](http://www.armstat.am/en/?nid=45&year=2013):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտասահմանում մեծ թվով հայեր են բնակվում՝ սփյուռքի ներկայացուցիչները ևս օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով իրենց ավանդն են ունենում երկրի զարգացման գործում: Ուսումնասիրություններից մեկը ցույց է տվել, որ 1994–2004 թվականներին Հայաստանի տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների մոտ 70%-ը առնչություն է ունեցել սփյուռքին, և նրանց բաժին է ընկել այդ ժամանակահատվածում ընդհանուր ՕՈՆՆ-ի մոտավորապես 25%-ը (ԳՄՀԸ և ԻՎԻ Քոնսալթինգ, 2011թ.):

### **Վանդակ 3. Բազմազգ ընկերություններն ինովացիան արտադրատեսակներ են բերում Հայաստանի շինարարության շուկա**

Հայաստանում ներդրումներ կատարող բազմազգ ընկերությունները կարող են նպաստել տեղական ՓՄՁ-ների զարգացմանը: Դրան հասնելու եղանակներից է ինովացիոն արտադրատեսակների ներդրումը, որոնք տեղական ընկերությունները սկսում են կիրառել իրենց գործունեության մեջ՝ այս կերպ օգնելով նրանց առաջ ընթանալ այն արժեքի շղթայում, որտեղ իրենք իրականացնում են իրենց գործունեությունը:

«Լիտոկոլը»՝ բարձր էֆեկտիվության շինարարական արտադրանք արտադրող իտալական ընկերությունը, 2007 թվականին Հայաստանում հիմնադրեց դուստր ձեռնարկություն: Այն իտալացի և հայ ներդրողների համատեղ ձեռնարկություն է, որը հիմնեց բարձր էֆեկտիվության շինարարական արտադրանքի նոր գործարան. այդ արտադրատեսակներից են ցեմենտի հիմքով սոսնձանյութերը, սինթետիկ խեժանյութի հիմքով սոսնձանյութերը:

Ընկերության ինովացիոն արտադրատեսակների յուրացումը դյուրացնելու նպատակով ընկերությունը իր թիրախ հաճախորդներին ներգրավում է կրթական գործունեության մեջ, ինչպես օրինակ՝ սեմինարներ, տեխնիկական խորհրդատվություններ և տեխնիկական օժանդակություն:

Սա նպատակ ունի տեղեկատվություն տարածել նոր, բարձրարժեք արտադրատեսակների վերաբերյալ և օգտակար գիտելիքներ հաղորդել այն շինարարական ընկերություններին, որոնք պատրաստակամ են ընդունել/որդեգրել նոր տեխնոլոգիաներ:


*Աղբյուրը.* «Բսթ Ինվեսթ» (2014թ.), «Հայաստանի կայուն շինարարություն», «Բսթ Ինվեսթ» վեբ կայք, [www.east-invest.eu/en/investment-promotion/armenia-2/RA-sustainable-construction](http://www.east-invest.eu/en/investment-promotion/armenia-2/RA-sustainable-construction), 2014 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ, Լիտոկոլ (2014թ.), «Սեմինարներ, տեխնիկական դասեր», «Լիտոկոլ Հայաստանի» վեբ կայք [www.litokol.am/eng/seminars-3](http://www.litokol.am/eng/seminars-3), 2014 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ, հարցազրույցներ «Լիտոկոլ» ընկերության ղեկավարության հետ:

### *ՕՈՆ-ի ներհույքերը հաստատուն պահելն էական է Հայաստանի զարգացման համար...*

2000 թվականի սկզբների կտրուկ աճից հետո Հայաստանում ՕՈՆ մակարդակն իր բարձրակետին հասավ 2008 թվականին և շարունակեց անընդհատ նվազել 2008 թվականից հետո՝ ճգնաժամի տարիներին: Վերջին տվյալների համաձայն (UNCTAD, 2014թ.)՝ ՕՈՆ ներհույքերը 2008 թվականի 950 միլիոն ԱՄՆ դոլարից նվազել են՝ 2013 թվականին հասնելով մոտավորապես մինչև 370 միլիոն ԱՄՆ դոլարի: Համապատասխանաբար,

ընդհանուր ՕՈՆ-ի ներքին պաշարները ՀՆԱ-ի կազմում նվազել են մոտավորապես 50%-ի չափով (Գծապատկեր 2):

**Գծապատկեր 2. 2000-2013 թ.թ. ՕՈՆ ներհուքերը Հայաստան**



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն՝ UNCTAD-ի (2014թ.) տվյալների հիման վրա, Համաշխարհային ներդրումների մասին հաշվետվություն 2014թ. Ներդրումներ կայուն զարգացման նպատակների մեջ. Գործողությունների ծրագիր, Միացյալ ազգերի կազմակերպություն. Նյու Յորք:

Հաշվի առնելով, թե ավանդաբար ինչ մեծ մասնաբաժին են ունեցել ՕՈՒՆ-ը ընդհանուր ներդրումների կազմում՝ այս նվազման միտումը պետք է հետադարձել՝ միննույն ժամանակ նվազեցնելով երկիր մտնող ՕՈՆ-ի անկայունությունը: Քանի որ ակնկալվում է համաշխարհային ՕՈՆ-ի վերականգնում աճող մրցակցության պայմաններում, Հայաստանը պետք է ակտիվորեն գործի ապագա հոսքերի իր բաժինը ձեռք բերելիս: Սա բարեփոխումների օրակարգի կոչ է ուղղված բիզնես միջավայրի շարունակական բարելավմանը՝ միննույն ժամանակ կարևորելով այն տնտեսական ոլորտների խթանման աշխատանքները, որոնցում Հայաստանն ունի հզոր մրցակցային առավելություն:

*...ինչպես նաև ապահովել ամուր կապեր բազմազգ ընկերությունների և տեղական ՓՄՁ-ների միջև*

Ընդհանուր առմամբ, ԲԱԸ-ների և ՓՄՁ-ների միջև բիզնես կապերը պետք է առաջանան ինքնաբուխ՝ որպես շուկայական ուժերի արգասիք:

Մակայն շուկաներին կարող է չհաջողվել նման կապեր ստեղծել՝ ելնելով մի շարք պատճառներից: Օրինակ՝ օրտարերկրյա ձեռնարկությունները կարող են տեղյակ չլինել հնարավոր տեղական մատակարարների մասին կամ տեղական ՓՄՁ-ների կարողությունները կարող են զիջել այն մակարդակը, որը պահանջվում է օտարերկրյա ընկերությունների կողմից:

Ոլորտային շուկայի ընդհանուր նկարագրությունից ստացվող պատկերացումները և ՏՀԶԿ-ի կողմից օտարերկրյա ընկերությունների հետ կատարված մանրամասն հարցազրույցները ցույց են տվել, որ Հայաստանում չկա տեղական ՓՄՁ-ների մասով համապարփակ ոլորտային տվյալների բազա: Որոշ դեպքերում օտարերկրյա ներդրողները նախընտրել են ստանալ մատակարարումներն իրենց երկրից՝ տեղական մատակարարներ չլինելու կամ նրանցից բավարարված չլինելու պատճառով: Միևնույն ժամանակ, առանձին արժեքի շղթաներում Հայաստանի ՓՄՁ-ների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց մեծ մասը կցանկանար ամուր կապեր հաստատել ԲԱԸ-ների հետ: Ավելի քան 70%-ի համար արժեքավոր է իրենց արտահանման հնարավորությունները մեծացնելու, արտադրական հզորությունները բարելավելու և առևտրային/ոլորտային միջոցառումներին մասնակցելու հնարավորությունը (ՏՀԶԱԿ, 2014ա, 2014ա, ներքին աշխատանքային փաստաթղթեր):

Նման հանգամանքներում պետական մարմիններն ունեն ԲԱԸ-ների և ՓՄՁ-ների միջև կապեր ստեղծելու և դրանք խորացնելու հնարավորություն, այսպիսով՝ առավելագույնի հասցնելով ՕՈՆՆ-ի դրական ազդեցությունը ներքին տնտեսության վրա: Դա անելու համար կան քաղաքականության գործիքներ, ինչպիսին է կառավարության կողմից հովանավորվող բիզնես կապերի ծրագրերը, ՓՄՁ-ներին վերապատրաստման տրամադրումը և ապրանքների միջազգային ստանդարտների ընդունումը (ՏՀԶԿ, 2009թ.):

Այս ձեռնարկում վեր են հանվում մարտահրավերները և մշակվում Հայաստանում ՕՈՆՆ-ի ներգրավման և դրա ազդեցությունը տեղական ՓՄՁ-ների վրա՝ առավելագույնի հասցնելու վերաբերյալ առաջարկություններ՝ հատկապես ուշադրության կենտրոնում պահելով շինարարության արժեքի շղթան:

## **Շինարարության ոլորտը Հայաստանին ընձեռում է հնարավորություններ**

### ***Շինարարության արժեքի շղթան կարևոր դեր է խաղում ինչպես գյոբալ, այնպես էլ տեղական մակարդակում***

Շինարարությունը Հայաստանի տնտեսության կարևոր մասն է կազմում, որին 2000-2013 թվականին միջինում բաժին է ընկել ՀՆԱ-ի մոտ 16%-ը: Չնայած շինարարության ոլորտում տեղ գտած որոշ անկայունությանը, ինչը պայմանավորված է վերջին տարիների շինարարական բումով՝ միևնույն ժամանակահատվածում այս ոլորտի մասնակցության մասնաբաժինը ներքին տնտեսության մեջ հաստատուն կերպով 10%-ից բարձր է եղել (ԱՎԾ, 2014; ՏՀԶԱԿ, 2014ա): Հայաստանում ՓՄՁ-ները կարևոր դեր են խաղում շինարարության արժեքի շղթայում՝ պայմանավորելով ոլորտի ՀՆԱ-ի 40%-ը 2007-2010 թվականներին. սա վերջին տարին է, որի մասով կան տվյալներ (ՄԱԿ ԵՏՀ, 2014):

2012 թվականին շինարարության գյոբալ պահանջարկը գնահատվել է 8.7 տրիլիոն դոլարի չափով: Ակնկալվում է ոլորտի ընդլայնում տարեկան 4.3%-ով (ինչն ավելի արագ է, քան համաշխարհային տնտեսության աճը)՝ 2025 թվականին 15 տրիլիոն դոլարի հասնելու և իր տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ի 13.5%-ին հասցնելու հեռանկարով (Oxford Economics, 2013թ.): Չնայած Չինաստանը շարունակում է մնալ գյոբալ աճի հիմնական առաջատարը՝ 2025 թվականին պայմանավորելով շինարարական ոլորտի համաշխարհային արդյունքի ավելի քան քառորդ մասը, Հայաստանի հարևան տարածաշրջանում ևս ակնկալվում են բարձր արդյունքներ: Ըստ կանխատեսումների՝ մասնավորապես Ռուսաստանը և Թուրքիան մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածում Արևելյան Եվրոպայի երկրներից ավելի արագ՝ տարեկան ավելի քան 5%-աճ են գրանցելու:

Այս միտումները հայաստանյան ընկերություններին Հայաստանի սահմաններից դուրս «նայելու» և հարևան տարածաշրջանային աճի ներուժից օգտվելու հնարավորություն են ընձեռում շինարարության արժեքի գյոբալ շղթայի ընտրված հատվածներում:


### ***Շինարարության արժեքի շղթայում կարելի է նախանշել հինգ հիմնական փուլեր***

Շինարարությունը՝ լինի դա անկախ բնակարանային նշանակության շենքերի, առևտրային տարածքների, թե ենթակառուցվածքների կառուցում, ենթադրում է մի շարք տարբեր քայլեր և տարաբնույթ մասնագիտություններ՝ սկսած անշարժ գույքի հետ կապված գործունեությունից (օրինակ՝ հողի ձեռքբերում և նախագծի ֆինանսավորում), միջանկյալ ապրանքների արտադրությունից (օրինակ՝ շինարարական նյութերի արտադրություն) ընդհուպ մինչև օբյեկտների կառավարում (օրինակ՝ շահագործման և ընթացիկ պահպանման աշխատանքներ): Վանդակ 4-ում այս արժեքի շղթան ներկայացված է ներկայումս Հայաստանում գործող ընկերությունների օրինակներով, ինչպես նաև բերված են շինարարական նյութերի արտադրության վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ:

#### Վանդակ 4. Շինարարության ոլորտի արժեքի շղթան

Շինարարության ոլորտի արժեքի շղթան կարելի է տրոհել հինգ հիմնական քայլերի, որտեղ շինարարական նյութերը միջանկյալ դիրք են զբաղեցնում. նախագծողները հաճախ որոշում են, թե նախագծի իրականացման համար ինչ նյութեր են օգտագործվելու, իսկ կապալառուները պատասխանատու են շինարարության փուլում օգտագործվող նյութերի փաստացի գնման համար: Ստորև բերված է այս արժեքի շղթան, ինչպես նաև դրա յուրաքանչյուր փուլում գործունեություն իրականացնող Հայաստանյան ընկերությունների օրինակներ:

#### Շինարարական (նյութերի) ոլորտի արժեքի շղթա





Շինարարական նյութերի արտադրությունը կարելի է բաժանել չորս քայլով ենթաարժեքի շղթայի:

**Հումքի արդյունահանում.** հանքարդյունաբերական վայրերի հետազոտություն և հանքանյութերի արդյունահանում, որտեղ դրանք կարող են անցնել նաև նախնական մշակում:

**Միջանկյալ արտադրանքի պատրաստում.** վերամշակման հիմնական փուլեր, ինչպիսիք են՝ փշրելը և աղալը: Մրանք կապիտալատար գործողություններ են, որոնց համար պահանջվում են ծանր մեքենա-սարքավորումներ և էլեկտրահանրագիայի մեծ սպառում:

**Վերջնական արտադրատեսակների արտադրություն.** հետագա մշակում, որի արդյունքում ստացվում է շինարարական ընկերության կողմից օգտագործման ենթակա պատրաստի արտադրանք: Այն ներառում է ցեմենտի, ագրեգատների, մեկուսացնող նյութերի, սալիկների և սոսնձանյութերի արտադրությունը:

**Մեծածախ և մանրածախ իրացում.** շինարարական նյութերի իրացումը շինարարական շուկայում: Մեծածախ իրացման դեպքում արտադրողը վաճառում է միջնորդ դիստրիբյուտորներին կամ խանութներին, իսկ մանրածախ իրացման դեպքում նյութերն ուղղակիորեն վաճառվում են շինարարական ընկերություններին:

*Աղբյուր. ՏՀԶԿ վերլուծություն. ՏՀԶԱԿ (2014ա), «Հայաստանի շինարարական նյութերի շուկայի ընդհանուր վերլուծություն» ERDSC, ՏՀԶԿ ներքին աշխատանքային փաստաթուղթ, Երևան; «Կանաչ» կառուցապատման և վերականգնվող էներգիայի մասով կլաստերային փորձի վերաբերյալ շնորհանդես՝ ներկայացված ՏՀԶԿ կարողությունների զարգացման թեմայով սեմինարի ընթացքում, ՓՄՃ քաղաքականությունների կատարելագործում Արևելյան գործընկեր երկրներում, Տրենտո, Իտալիա, 19-22 մայիսի, 2014 թ. Habitec (2014թ) :*

*Շինարարության նկատմամբ պահանջարկը պայմանավորված է եկամուտների և բնակչության աճի միտումներով*


ՀՆԱ-ի աճը, բնակչության աճը, ուրբանիզացիան և կյանքի մակարդակը ձևավորում են շինարարության ապագա զլոբալ պահանջարկը: Այս ուժերի փոխազդեցությունն է պայմանավորելու աճը յուրաքանչյուր երկրի ներսում և զարգացած ու զարգացող երկրների միջև միտումների տարբերությունները: Օրինակ՝ Չինաստանում «մեկ երեխա» քաղաքականությամբ պայմանավորված բնակչության աճի անկումն, ամենայն հավանականությամբ, կփոխհատուցվի առավել ապահովված սպառողների առկայությամբ, մինչդեռ զարգացող երկրներում համեմատաբար արագընթաց ուրբանիզացիայի միտումները կնպաստեն շինարարության կայուն աճին (Գծապատկեր 3): Հայաստանում, չնայած բնակչության կայուն թվաքանակին, մեկ շնչի հաշվով եկամուտների աճը

կարող է նպաստել և պայմանավորել շինարարության պահանջարկի ձևավորումը:

**Գծապատկեր 3. Բնակչության գլոբալ աճը և ուրբանիզացիայի միտումները**

Ջարգացող երկրներ

Ջարգացած երկրներ



Աղբյուրը. The Economist (21 հունիսի 2014թ.), «Վերադարձի ուղիներ», *The Economist*, [www.economist.com/news/international/21604576-cities-are-bound-grow-they-need-planning-be-liveable-roads-redemption](http://www.economist.com/news/international/21604576-cities-are-bound-grow-they-need-planning-be-liveable-roads-redemption); UN DESA (2014թ.) Բնակչության հաշվարկի և կանխատեսումների տվյալների շտեմարան [http://esa.un.org/unpd/wup/unup/index\\_panel1.html](http://esa.un.org/unpd/wup/unup/index_panel1.html):

**Այս արժեքի շղթայում նյութերի մատակարարները կարող են օգտվել գլոբալ միտումներից**

Այս զեկույցը հիմնականում վերաբերում է շինարարական նյութերի արտադրությանը շինարարության ոլորտի լայնընդգրկուն համատեքստում: Դա պայմանավորված է այս ոլորտում Հայաստանի ունեցած կարևոր մրցակցային առավելությամբ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է հարուստ բնական պաշարների և արտահանման ներուժի առկայությամբ, փոքր ներքին շուկայի կողմից պարտադրվող սահմանափակումների հաղթահարման հանգամանքով:

Շինարարական նյութերի ոլորտն ընդգրկում է տնտեսական գործունեության մի շարք կատեգորիաներ: Ոլորտը բաղկացած է



այն դեռևս փոքր ոլորտ է: Այս հաստվածում գործում են մոտավորապես 2 000 ՓՄՁ-ներ, որոնց բաժին է ընկնում ավելացված արժեքի մոտ 50%-ը: Ընտրված 30 ընկերությունների շրջանում կատարված հարցման արդյունքում պարզվել է, որ ՓՄՁ-ների կեսի մոտ աշխատողների թիվը չի գերազանցում 50-ը, իսկ նրանց տարեկան շրջանառությունը հիմնականում 1 մլն. դոլարից պակաս է (ՏՀԶԱԿ, 2014բ):

### *Շինարարության ոլորտն է պահանջարկ թելադրում*


Գրեթե բոլոր արտադրական ճյուղերում միջանկյալ ապրանքների արտադրությունը հիմնականում պայմանավորվում է ավելի ստորին օղակներում գտնվող ոլորտներով, օրինակ՝ ավտոմոբիլային արտադրությունը՝ ռետինի և պլաստմասսայի արտադրանքների դեպքում, ինժեներական աշխատանքները՝ մեքենասարքավորումների դեպքում, տպագիր, փաթեթավորման և հիգիենիկ արտադրանքը՝ փայտանյութի և թղթի դեպքում:

Շինարարության ոլորտը շինարարական նյութերի պահանջարկի հիմնական շարժիչն է: Շինարարական նյութերին բաժին է ընկնում շինարարության ճյուղում ներդրվող բոլոր միջոցների մոտ կեսը<sup>3</sup>, որտեղ ոչ մետադական հանքային արտադրատեսակներին բաժին է ընկնում ծախսերի առյուծի բաժինը (Աղյուսակ 1.ա): Հայաստանում գործող շինարարական ընկերությունների հետ անցկացված մանրամասն հարցազրույցների ընթացքում ընդգծվել է, որ ամենամեծ բիզնես ծախսը հումքի ձեռք բերումն է, ինչը պատկերված է Աղյուսակ 1.բ-ում (ՏՀԶԱԿ, 2014բ): Որքան էլ վիճելի լինի, սակայն շինարարության ոլորտի դինամիկան լինի դա բնակարանային, ոչ բնակարանային շինարարություն, թե ենթակառուցվածքային ենթածրագրեր, իր ազդեցությունն է ունենալու արժեքի շղթայի վերին օղակում առաջարկվող ապրանքների և ծառայությունների շուկայի վրա, ներառյալ շինարարական նյութերի պահանջարկը:

**Աղյուսակ 2. Շինարարության մեջ ներդրվող միջոցների ծախսերի կազմում նյութերի մասով ծախսերի տեսակարար կշիռը**

**ա. ԵՄ 27 մուտքի/ելքի աղյուսակներ**

**բ. Հայաստանում գործող շինարարական ընկերություններից ստացված փաստական տվյալներ**



Որո՞նք են Ձեր բիզնեսի հիմնական ծախսային հոդվածները:

	Տարեկան ընդհանուր ծախսերի
Հումք	53%
Աշխատուժ	28%
Էլեկտրաներգիա	2%
Տրանսպորտ	3%
Ադմինիստրա-ցիա	7%
Մաշվածություն	1%
Այլ	7%

**1. Հարցված ընկերությունների միջին ցուցանիշներ**

Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն Ecorys-ի մասով (2012թ.) *FWC Sector Competitiveness. Ուսումնասիրություն N° B1/ENTR/06/054: Շինարարության ոլորտի կայուն մրցունակություն*, Վերջնական հաշվետվություն, Ecorys Research and Consulting, Rotterdam; ERDSC (2014թ.), «Հայաստանի շինարարական նյութեր արտադրող ընկերությունների շրջանում անցկացված հարցում», ERDSC, ՏՀԶԿ ներքին աշխատանքային փաստաթուղթ, Երևան:


**Արտահանման պոտենցիալ ունեցող նյութերն ուշադրության կենտրոնում պահելը շահավետ ռազմավարություն է հատկապես փոքր տնտեսությունների համար**

Փոքր և բաց տնտեսություններում արտահանման հնարավորությունները ներդրումներ կատարելու որոշումները պայմանավորող կարևոր գործոններն են (Singh և Jun, 1995թ.): Հայաստանում ներդրումներ կատարելու որոշում են կայացնում, կայացնելիս ընկերությունները ձգտում են օգտվել գլոբալ արժեքի շղթաների ընձեռած հնարավորություններից և իրենց արտադրանքների համար գտնել այնպիսի շուկաներ, որոնք կգերազանցեն ներքին պահանջարկը: Այս առումով, շինարարական նյութերի արտահանման հնարավորության առաջին ցուցիչը հարևան երկրներում ներդրումների

ընթացիկ արժեքն է: Գծապատկեր 5-ում բերված է Հայաստանի մի քանի հարևան շուկաներում, Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում շինարարական նյութերի ներմուծման ծավալներն ու աճի վերջին միտումները, որոնք 2013 թվականին ուսումնասիրված 22 երկրներում գերազանցել են 15 միլիարդ ԱՄՆ դոլարը: Սկզբնական փաստերը վկայում են, որ Ռուսաստանը, Չեխիայի Հանրապետությունը, Ղազախստանը և Թուրքիան խոշոր և արագ զարգացող ներմուծող երկրներ են:

Հաշվի առնելով Հայաստանի առևտրային հարաբերությունները, որոնք բխում են նաև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունից՝ մասնագիտացված պետական մարմինների կողմից իրականացվող հետագա վերլուծության միջոցով պետք է վերհանվի, թե որ կոնկրետ արտադրատեսակներն են, որ լավագույն արտահանման հնարավորություններն են ընձեռում Հայաստանին:

**Գծապատկեր 5. Շինարարական նյութերի ներմուծումն ընտրված երկրներում**



Ծանոթություն. Միջազգային առևտրի ստանդարտ դասակարգման մեջ դիտարկվել են հետևյալ հուլիսային ապրանքային խմբերը. Rev, 4: 273, 27723, 27823, 27826, 27827, 27829, 2784, 27898, 6611, 6612, 6613, 6618, 662, 6633, 6635, 6637, 6638, 6639, 6643, 6644, 6645, 66495, 66496, 811, 8122; Իրանի և Թուրքմենստանի մատուցված տվյալներ չկան; Ուկրաինայի CAGR-ը՝ 2011-2013 ժամանակահատվածում:

Աղբյուրը. UN Comtrade (undated), Միացյալ ազգերի կազմակերպության՝ հուլիսային ապրանքների մասին վիճակագրության շտեմարան, <http://comtrade.un.org/db/>, 2014թ. սեպտեմբերի 15 դրությամբ:

Շինարարական նյութերը ներառում են ապրանքների տարաբնույթ տեսակներ, որոնք մշակվում են տարբեր տիպի հանքային ռեսուրսներից և որոնց համար օգտագործվում են տեխնոլոգիաների, աշխատուժի և այլ միջոցների տարբեր համակցություններ: Որպես հետևանք՝ տարբեր ապրանքների ավելացված արժեքում կարող են լինել զգալի տարբերություններ: Այս անհամաչափությունների կոպիտ գնահատումը պայմանավորված է շուկայում վաճառվող ապրանքների արժեք/կշիռ հարաբերակցությամբ: Տնտեսագիտությունը և բիզնես ինտուիցիան հուշում են, որ շինարարական նյութերի արտաքին իրացվելիությունը պայմանավորված է այլ երկրներ արտահանման արդյունքում ստացվող եկամուտների աճի հնարավորության և ներգրավված լրացուցիչ ծախսերի փոխզիջումային համադրությամբ: Ցածրարժեք/ծանրաքաշ արտադրատեսակներ առաջարկող ոլորտներում տրանսպորտային ծախսերը կարող արտահանման համար մեծ խոչընդոտ լինել՝ փոքրացնելով արտահանման կողմնորոշում ունեցող ընկերությունների շահույթի մարժան:

Օրինակ՝ ցեմենտը ծավալուն է և ցածրարժեք: Տնտեսական առումով ողջամիտ է այն արտադրել մեծ գործարաններում, որոնք մոտ են և՛ հումքը ապահովող կրաքարի քարհանքին, և՛ սպառողներին: Դրա տեղափոխումն այնքան թանկ է, որ այն ավտոմոբիլային ճանապարհներով չեն փոխադրում 320 կմ-ից ավելի մեծ հեռավորությամբ. հետևաբար դրանք հիմնականում ունեն տեղական շուկաներ: Չնայած ծովային ճանապարհով հասանելի փոքր շուկաների կողմից առաջարկվող որոշակի մրցակցությանը՝ ցեմենտի համաշխարհային արտադրության ընդամենը 3%-ն է իրացվում սահմանից դուրս (Economist, 2013թ.): Հայկական ընկերություններից ստացված փաստերը վկայում են, որ միջազգայնացմանը խոչընդոտող գործոններից են բարձր տրանսպորտային ծախսերը (60%) և ենթակառուցվածքների անմխիթար վիճակը (30%): Այդպիսի խոչընդոտները հատկապես ակնառու են ցածր արժեք/կշիռ հարաբերակցություն ունեցող արտադրատեսակների պարագայում (Աղյուսակ 3):

Դրան հակառակ՝ բարձրարժեք արտադրատեսակները կարելի է հաջողությամբ իրացնել համաշխարհային մասշտաբով: Որպես օրինակ՝ բարձրորակ քարեր և դեկորատիվ իրեր արտադրող հայկական

ընկերությունները հաստատել են, որ իրենք կարող են իրենց կողմից արտադրվող ծավալների մեծ մասն իրացնել արտաքին շուկաներում, այդ թվում՝ մեծ հեռավորության վրա գտնվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Եվրոպայի և Ավստրալիայի շուկաներում (ԶՀԳ, 2013թ.):

**Աղյուսակ 3. Տրանսպորտային ծախսերը որպես արտահանումը սահմանափակող գործոն**

Ընտրված արտադրանքների՝ արժեք/կշիռ հարաբերակցությունը		Հայկական ընկերությունների արտահանմանը խոչընդոտող գործոնները	
Իրացվող արտադրատեսակ	Դոլար/կգ	Խոչընդոտ	Որպես ուժեղ խոչընդոտող գործոն նշող պատասխանողների %-ը
Կիր, ցեմենտ	0.17	Բարձր տրանսպորտային ծախս	60%
Գիպս և ցեմենտի համար օգտագործվող քարեր	0.03	Արտահանման մասին սակավ տեղեկատվություն	35%
Միներալ բուրդ, մեկուսիչ նյութեր	1.23	Արտաքին պահանջարկին չբավարարող որակ Իմ արտադրատեսակների	35%
Գրանիտ, բազալտ	0.14	մատով սահմանափակ պահանջարկ	35%
		Վատ ենթակառուցվածքներ	30%
		Զգձգումներ/թղթարարություն	20%
		Նորարարության պակաս	15%

1. Հունքային ապրանքների շուկայական արժեքը/զուտ քաշ (ուսումնասիրվել են համաշխարհային առևտրային հոսքերը, 2010-2013թթ.)

*Աղբյուրը. Աղբյուրը. UN Comtrade (undated), Միացյալ ազգերի կազմակերպության՝ հունքային ապրանքների մասին վիճակագրության շտեմարան, <http://comtrade.un.org/db/>, 2014թ. սեպտեմբերի 15 դրությամբ: ERDSC (2014թ), «Շինարարական նյութեր արտադրող հայկական ընկերությունների հարցախույզ», ERDSC, ՏՀԶԿ ներքին աշխատանքային փաստաթուղթ, Երևան:*


**Շուկայում ի հայտ եկած նոր միտումները, օրինակ՝ էներգախնայող նյութերը, կարող են հնարավորություն լինել Հայաստանի համար**

Կյանքի ստանդարտների և իրազեկվածության աճին զուգահեռ՝ շինարարական նյութերի նկատմամբ սպառողների պահանջարկը գրանցում է տեղաշարժ դեպի բարձրարժեք շինարարական



արտադրատեսակներ: Դրանց շարքում են այնպիսի արտադրանքները, որոնք չնայած հավելյալ նախնական ծախսերին՝ միջնաժամկետ հեռանկարում դրամական խնայողությունների հնարավորություն են տալիս շենքերում էլեկտրաէներգիայի նվազող սպառման շնորհիվ: Այս միտումներն օգնում են կառավարություններին առաջընթաց գրանցել կայուն զարգացման նպատակների ուղղությամբ՝ միաժամանակ խթանելով էներգախնայող նյութերի պահանջարկը: Գծապատկեր 6-ում պատկերված է մի շարք շուկաներում շինությունների արտաքին թաղանթի<sup>4</sup> էներգախնայող բաղադրիչի մասով շուկայի կայացման մակարդակը: Ընդհանուր առմամբ, ավելի հարուստ դառնալուն զուգահեռ՝ երկրներն ավելի մեծ «պատրաստակամություն» են դրսևորում էներգախնայող նյութերի կիրառման նկատմամբ:

**Գծապատկեր 6. Էներգաարդյունավետ շինարարական բաղադրիչների մասով շուկայի կայացման փորձագիտական գնահատում**



Ծանոթություն. Հայաստանը ներառված չէ այս գնահատման մեջ ընդգրկված երկրների շարքում: *Աղբյուրը.* S2Q4 վերլուծություն IEA-ի տեղեկատվության վերաբերյալ (2013ա), *Քաղաքականության ուղի՝ Մեր գորթը էներգետիկ ապագայի ապահովման նպատակով կառուցապատման էներգետիկ կողերի արդիականացում*, IEA /ՄԱԶՏ, Փարիզ:

Հայաստանն իրենից ներկայացնում է փոքր շուկա՝ մոտ 3 մլն. բնակչությամբ: Վերջին շինարարական բումին հաջորդեց շինարարական ոլորտի կտրուկ անկումը հետձգնաժամային տարիներին: Հետևաբար, հավանական չէ, որ կանխատեսելի ապագայում երկրում շինարարության աճը կհամապատասխանի համաշխարհային միտումներին: Այնուամենայնիվ, կան հիմնականում խորհրդային տարիներին պատկանող և վերանորոգման կարիք ունեցող բնակարանային շինարարության ներկայիս ֆոնդի բարելավման հնարավորությունները (Վանդակ 5):

#### **Վանդակ 5. Էներգետիկ արդյունավետ նյութերի հնարավորություն Հայաստանում**

Հայաստանի մոտ 3 միլիոնանոց բնակչության 65%-ը բնակվում է քաղաքային բնակավայրերում: Բազմաբնակարան շենքերում կան ավելի քան 400 000 բնակարաններ, որոնք զբաղեցում են ավելի քան 25 մլն. մ<sup>2</sup> մակերես: Քաղաքային բնակֆոնդի ամենամեծ մասը 30–60 տարվա հնության է, և դա պետք է ինչ-որ ձևով վերանորոգվի/վերակառուցվի:

Որպես կանոն հին շինություններում ջերմային բնութագրիչները վատ են, և դրանք վատ են մեկուսացված: Նման շինությունները էներգիայի վերջնական սպառման ամենամեծ հատվածն են կազմում և հանդիսանում են էներգետիկ արդյունավետության բարելավման միակ ամենակարևոր և ծախսարդյունավետ հնարավորությունը: Պարզվել է, որ ազգային էներգախնայողության ընդհանուր պոտենցիալի 40%-ն այս շենքերում է:

ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՀ) 2010թ. սկսել են համապարփակ ծրագրի իրականացում շինությունների էներգետիկ արդյունավետությունը բարելավելու նպատակով: Ծրագիրը բաղկացած է չորս բաղադրիչներից՝ 1) շենքերի էներգախնայողության նոր կոդեքսների և ստանդարտների մշակում և կիրառում, 2) որակի հսկողություն, էներգախնայող նյութերի և սարքավորումների թեստավորում և հավաստագրում, 3) իրագրելում, վերապատրաստում և ուսուցում շենքերի ամբողջական նախագծման վերաբերյալ և 4) ինտեգրված շինությունների նախագծային մոտեցումների փորձարկում պիլոտային ծրագրերի միջոցով:

Որպես ծրագրի աջակցման աշխատանքների մաս՝ կատարվել են նմանակումներ (սիմուլյացիաներ) էներգախնայող նյութերի ծախսերի մասով «ներդրումային գրավչությունը» գնահատելու համար: Դրանք ցույց են տվել, որ բնակելի տան հիմնավերանորոգումից (այսինքն՝ պատուհանների և մուտքի դռան փոխարինում, տանիքի ջերմային մեկուսացում կամ նոր ջեռուցման համակարգի տեղադրում) ստացված էլեկտրաէներգիայի խնայողությունները կարող են տաս տարում փոխհատուցել նախնական ներդրումը:

Շենքերում էլեկտրաէներգիայի խնայողության պոտենցիալից արդյունավետ օգտվելուց կշահեն ոչ միայն բնակիչները՝ իրենց տների ջեռուցման և հովացման ավելի ցածր ծախսերի միջոցով, այլև շինարարության մեջ ժամանակակից մոտեցումներ, այդ

թվում էներգետիկ արդյունավետ նյութեր օգտագործող տեղական ընկերությունները շուկայի նոր հնարավորությունների ստեղծման միջոցով:

*Աղբյուրը.* ՄԱԶԾ և ԳԷՀ (2011թ.) *Շինությունների էներգախնայողության բարելավման ծրագիր. մեկնարկի հաշվետվություն*, ՄԱԶԾ-ԳԷՀ 00059937, ՄԱԶԾ և ԳԷՀ, [www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB\\_reports/publ/4245%20ARM\\_Inception%20Report\\_accepted.pdf](http://www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB_reports/publ/4245%20ARM_Inception%20Report_accepted.pdf); ՄԱԶԾ և ԳԷՀ (2014թ.), *Շինությունների էներգախնայողության բարելավման ծրագիր. Ծրագրի բրոշյուր*, ՄԱԶԾ-ԳԷՀ/00059937, ՄԱԶԾ և ԳԷՀ, Երևան, կայքը [www.nature-ic.am/improving-ee-in-buildings-reports-and-publications/](http://www.nature-ic.am/improving-ee-in-buildings-reports-and-publications/); EBRD (2013թ.), «Բնակարանային շինություններում բարձր էներգախնայողությանը խոչընդոտող գործոնների հաղթահարման վերաբերյալ առաջարկությունների և վերլուծության արդյունքներ. ռազմավարական հետազոտություն», ծրագրի ներքին փաստաթուղթ, ՎՋԵԲ:

### ***Բարձրարժեք նյութերի արտադրության ոլորտում Հայաստանն ունի մրցակցային առավելություն***

Հայաստանն ունի հարուստ բնական պաշարներ, հատկապես՝ ոչ մետաղական հանքանյութեր: Հայաստանի ընդերքում կա մեծ քանակությամբ բարձրակարգ բնական քար, կավ, գիպս և կրաքար: Հատկապես կարևոր են հրաբխային ծագման հանքանյութերը. երկրի բնական ռեսուրսներից են՝ պեռլիտի, բազալտի, դոլոմիտի, պեմզայի և ցեոլիտի հարուստ պաշարները: Հետազոտվել են մոտավորապես 600 ոչ մետաղական հանքավայրեր, և դրանցից ավելի քան 400-ի համար տրվել են հանքարդյունահանման լիցենզիաներ: Սակայն այս հանքերի մեծ մասը դեռևս չի շահագործվում: Ամենաշատ թվով լիցենզավորված հանքավայրերը գտնվում են Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի և Արարատի շրջաններում (Աղյուսակ 4):

Այդ նյութերից շատերը կարող են արդյունահանվել, և վերամշակման արդյունքում դրանցից ստացվում են բարձրարժեք շինարարական ապրանքներ. տրավերտինը և տուֆը կարող են օգտագործվել դեկորատիվ նպատակներով, իսկ բազալտը և պեռլիտը կարող են դառնալ մեկուսիչ նյութեր, ինչպիսիք են՝ հանքային բուրդը կամ պեռլիտի փքեցված սալաքարերը

**Աղյուսակ 4. Հայաստանի ոչ մետաղական հանքային ռեսուրսները**

Լիցենզավորված հանքերի թիվը ըստ մարզերի

	Բազալտի ապար	Պեղիտի ապար	Դոլոմիտ	Մագնիսի և սիլիկատի ապար	Դիատոմիտ	Ցեոլիտ	Բենտոնիտի կավ	Կավարցիտ	Ընդամենը
Երևան	26	-	1	-	-	-	-	-	27
Արմավիր	20	-	-	-	-	-	-	12	32
Կոտայք	29	17	6	-	-	2	-	-	54
Արարատ	-	-	39	-	1	-	-	18	58
Լոռի	31	-	-	-	-	-	-	12	43
Գեղարքունիք	12	4	1	1	-	1	-	4	23
Շիրակ	52	-	1	-	-	2	-	3	58
Սյունիք	21	-	5	-	-	3	-	5	34
Տավուշ	10	-	2	-	-	-	2	5	19
Վայոց ձոր	6	-	4	-	-	3	-	5	18
Արագածոտն	44	3	2	-	1	3	-	1	54
<b>Ընդամենը</b>	<b>251</b>	<b>24</b>	<b>61</b>	<b>1</b>	<b>2</b>	<b>14</b>	<b>2</b>	<b>65</b>	<b>420</b>

Աղբյուրը. ՏՀԶԱԿ (2014ա), «Հայաստանի շինարարական նյութերի շուկայի ուսումնասիրություն», ՏՀԶԱԿ, ՏՀԶԿ ներքին աշխատանքային փաստաթուղթ, Երևան, հիմնված Հայաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարարության տրամադրած չհրապարակված փաստաթղթերի վրա:

Մոտավոր հաշվարկներով՝ Հայաստանի այս ռեսուրսների պահուստները կարող են տասնամյակներ բավարարել: Նախնական փաստերը վկայում են, որ մասնավորապես պեղիտը և բազալտը յուրօրինակ հնարավորություն են ընձեռում, որը հարկ է լրացուցիչ ուսումնասիրել: Ըստ ստացված տվյալների՝ Հայաստանն ունի մոտավորապես 142 մ<sup>3</sup> չփքեցված պեղիտ, ինչը համապատասխանում է մոտ 155 մլն. տոննայի կամ համաշխարհային պաշարների 22%-ին (USGS, 2012)<sup>5</sup>: Հայաստանի բազալտի պաշարները կարող են բավարարել բազալտի հենքով բարձրարժեք արտադրանքի պահանջարկը, օրինակ՝ բազալտի մանրաթելերի գլոբալ շուկայի պահանջարկը, որն ըստ նախահաշվարկների՝ տարեկան աճելու է ավելի քան 10%-ով՝ 2019


թվականին հասնելով 105 մլն. դոլարի (ՏՀԶԱԿ, 2014ա, ԱՄՆ Երկրաբանական ուսումնասիրություն, 2012թ.):

Հայաստանը կարող է օգտվել այլ մրցակցային առավելություններից ևս. դրանցից են՝ էլեկտրաէներգիայի ցածր գինը, համեմատաբար էժան աշխատուժը, և ԱՊՀ և Միջին Արևելքի երկրներին մոտ գտնվելու հանգամանքը (ՏՀԶԱԿ, 2014ա):


Շինարարական նյութերի արտադրությունը ենթադրում է էլեկտրաէներգիայի ինտենսիվ օգտագործում՝ հումքի արտահանման, կտրման և վերամշակման համար սարքավորումները լիցքավորելու նպատակով: Հայաստանում արդյունաբերական նպատակներով օգտագործվող էլեկտրաէներգիայի գինը համեմատաբար ցածր է Արևելյան Եվրոպայի երկրների, մասնավորապես՝ Բուլղարիայի, Չեխիայի Հանրապետության, Էստոնիայի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի և Սլովակիայի համեմատ: Ավելին, անկախ միջին եկամուտների աճից՝ արտադրական աշխատանքներում աշխատուժի ծախսը շարունակում է համեմատաբար ցածր մնալ (Գծանկար 7):

**Գծապատկեր 7. Հայաստանում էլեկտրաէներգիայի և աշխատուժի գինը՝ այլ նմանատիպ երկրների համեմատ**

Արդյունաբերական նպատակով էլեկտրաէներգիայի և գազի գինը\*, ԱՄՆ դոլար, 2012 թ.



Աշխատուժի 1 սամվա գինը արտադրությունում ԱՄՆ դոլար, 2011



\* Էլեկտրաէներգիայի գինը մեկ կվտ-ի հաշվով, գազի գինը մեկ խորհանարդ մետրի հաշվով

\*\* Չեխիայի Հանրապետություն, Սլովակիա, Էստոնիա, Լիտվա, Լատվիա, Բուլղարիա

Աղբյուր. ԳՄՀՀ, ԻՎԻ Քընսալթինգ և Ռազմավարական գործընկերներ (2013 թ.), Հայաստանում օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման և դյուրացման քաղաքականությունների և գործելակերպերի ուսումնասիրություն, ԳՄՀՀ և ԻՎԻ Քընսալթինգ, Երևան:

## ***Շինարարական նյութերի շուկան՝ կառավարության օրակարգի առաջնային տեղերում***

ՀՀ կառավարությունը նպատակ ունի բարձրացնել մրցունակությունը և ապահովել կայուն տնտեսական աճ: 2011 թվականին այն ձեռնարկեց ակտիվ արդյունաբերական քաղաքականություն՝ որպես թիրախ ընտրելով արտահանմանն ուղղված գործունեության ընդլայնումը: Մինչ 2020 թվականը առևտրային ոլորտի միջնաժամկետ նպատակների սահմանմանը զուգահեռ՝ ՀՀ կառավարությունն ընտրել է արդյունաբերության գերակա ոլորտներ, որոնց մասով կպատրաստվեն նպատակային ոլորտային ռազմավարություններ: Շինարարական նյութերի արտադրությունը նաև նշվել է որպես տնտեսության կարևոր ճյուղ, որն առաջիկա տարիներին կշահի ՀՀ կառավարության ավելի մեծ ուշադրությունից (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, 2011 թ.):

Ավելին, ՀՀ կառավարության 2014-2017 թվականների ծրագիրը նախատեսում է քաղաքականության բարեփոխման մի շարք դրույթներ և ցուցումներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են շինարարական նյութերի ոլորտին (ՀՀ կառավարություն, 2014թ.): Մասնավորապես դրանք վերաբերում են հանքարդյունաբերության, քաղաքաշինության և էներգետիկայի ոլորտներին:

Հանքարդյունահանման մասով՝ ՀՀ կառավարությունը նախատեսում է ներառել «տնտեսության համար կարևոր՝ շահութաբեր և էներգախնայող տեսակի՝ ընտրված արտադրատեսակների արտադրության կազմակերպմանն աջակցելը ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման արտադրության զարգացման նպատակով»: Քաղաքաշինության մասով՝ պետք է գործածության մեջ դնել բարեփոխումներ՝ «բիզնես միջավայրը բարելավելու նպատակով ... շինարարության թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը բարելավելու միջոցով» և «նորակառույց և վերականգնված շենքերի և շինությունների էներգետիկ արդյունավետությունը բարձրացնելու նպատակով»: Էներգետիկայի մասով՝ քաղաքականության միջոցով «պետք է իրականացվեն էներգետիկ արդյունավետության միջոցառումների հետ կապված քաղաքականություններ» (ՀՀ կառավարություն, 2014 թ., էջեր 21-27):

***Օտարերկրյա ուղղակի ներդրումները կարող են առանցքային դեր կատարել Հայաստանի շինարարական նյութերի ոլորտի զարգացման հարցում***

Ժամանակին լինելով նախկին Խորհրդային Միության շինարարական նյութերի հիմնական մատակարարը՝ 1991 թվականից սկսած Հայաստանում ոչ մետաղական հանքանյութի վերամշակման և արտահանման ծավալները մոտավորապես տասն անգամ կրճատվել են: Երկրում հիմնական ներդրողի՝ Խորհրդային Միության կազմալուծման արդյունքում քայքայվել են շինարարական նյութերի վերամշակման համար օգտագործվող սարքավորումները, և գրեթե որևէ ջանք չի գործադրվել առկա տեխնոլոգիաների բարելավման ուղղությամբ (ՏՀԶԱԿ, 2014ա):

Հայաստանի շինարարական նյութերի ոլորտի պոտենցիալն իրացնելու նպատակով խոշոր ներդրումներ են պահանջվում շրջանառու միջոցներ ու սարքավորումներ ապահովելու համար: Հայրենական ընկերությունները միայնակ չեն կարող բավարարել այս կարիքը, այդ իսկ պատճառով բազմազգ ընկերությունների ներդրումները Հայաստանում կարող են օգնել լուծելու այս հարցերը, քանի որ այս ընկերությունները կարող են ապահովել մեծ ծավալներով բարձրարժեք արտադրատեսակների մշակման համար անհրաժեշտ մեքենասարքավորումներ ու տեխնոլոգիա:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները նաև կարող են օգնել, որպեսզի միջանկյալ արտադրանք տվող ՓՄՁ-ներն ավելի մեծ ծավալներ արտադրելու հնարավորություն ստանան՝ միջազգային արտադրության և ԲԱԸ-ների տեղական մասնաձյուղերի բաշխման ցանցերի միջոցով: Ավելին, արտադրության վերին օղակում որակի պահանջների կատարումն ապահովելու նպատակով ԲԱԸ-ները հաճախ կոնկրետ տեխնիկական օժանդակություն և վերապատրաստում են տրամադրում մատակարարների արտադրանքի որակը բարձրացնելու համար: Այդ աշխատանքները թույլ են տալիս ՓՄՁ-ներին կատարելագործել իրենց կարողությունները, առաջ ընթանալ տվյալ արժեքի շղթայում և օգնել, որպեսզի ՓՄՁ-ներն արագ «վերցնեն» ընդլայնման առկա հնարավորությունները:

## **Այս ոլորտում դեռևս առկա են ՕՈՆՆ ներգրավելու և ՓՄՁ-ները զարգացնելու մարտահրավերներ**

Հարկ է, որ քաղաքականության մշակման պատասխանատուները ամենայն ուշադրությամբ քննեն, թե ինչը կարող է գրավել բազմազգ ընկերություններին երկրում ներդրումներ կատարելու համար: Այդ գործոններից են ինստիտուցիոնալ և նորմատիվ-իրավական միջավայրը, ինչպես նաև հստակ պատկերացումը, թե Հայաստանն ինչ պոտենցիալ ունի, որը կկարողանա բավարարել արտասահմանյան ներդրողների պահանջները՝ ներդրող, որը փնտրում է նոր շուկայական հնարավորություններ, առանձնահատուկ բնական ռեսուրսներ կամ մրցունակ ծախսերով ներդրվող միջոցների առկայություն:

Այս առումով սույն զեկույցը վեր է հանում որոշ առանձին մարտահրավերներ, որոնք հիմնավորվում են 2014թ. հունիս-հուլիս ամիսներին Հայաստանի շինարարության արժեքի շղթայում գործող 30 ընկերությունների հարցման արդյունքում հավաքագրված փաստերով (ՏՀԶԱԿ, 2014թ): Այդ մարտահրավերները բերված են ստորև, և ամփոփում ու լրացնում են այն ամենը, ինչ ներկայացվել է նախորդ բաժիններում:

### ***Սահմանափակ պահանջարկ՝ պայմանավորված փոքր ներքին շուկայով, բյուրոկրատիայով և արտահանման խոչընդոտներով***

Փոքր ներքին շուկան բնական «սահմանափակում» է դնում Հայաստանի բիզնես հնարավորությունների վրա: Ավելին, շինարարության ոլորտի բիզնես միջավայրում առկա խոչընդոտները մեծացնում են անորոշությունը և առաջարկը սահմանափակում արդեն իսկ սահմանափակ ներքին պահանջարկի շրջանակներում: Նման խնդիրները՝ զուգակցված արտահանման խոչընդոտներով կարող են ապախրախուսել օտարերկրյա ներդրողներին՝ մուտք գործել Հայաստան կամ ընդլայնել իրենց գործառնությունները: Հետևաբար հարկ է, որպեսզի ՀՀ կառավարությունն լուծում տա հետևյալ կոնկրետ մարտահրավերներին.

- **Հայաստանը օտարերկրյա ներդրողներին առաջարկում է փոքր ներքին շուկա.** այն ունի մոտավորապես 3 միլիոն բնակչություն, անցել է բնակարանաշինության վերջին բումի միջով և դեռևս չի



վերականգնվել 2008 թվականին հաջորդած արտադրանքի թողարկման ծավալների անկումից (ԱՎԾ, 2014թ.): Միջնաժամկետ հեռանկարում, երևի թե, շինարարության ոլորտի համընդհանուր աճի ծավալները չեն համապատասխանի գլոբալ միտումներին: Սահմանափակ ներքին պահանջարկը խնդիր է, որի մասին իրենց մտահոգությունն են հայտնել հարցված ընկերությունների ավելի քան 70%-ը (ՏՀԶԱԿ, 2014թ):

- **Շինարարության ոլորտում տիրող բյուրոկրատիան** դանդաղեցնում է այս ճյուղի աճը և նվազեցնում միջանկյալ ապրանքների նկատմամբ պահանջարկը: Չնայած Հայաստանը բարձր վարկանիշային դիրք (37-րդ տեղը) է զբաղեցնում Համաշխարհային Բանկի գործարարությամբ զբաղվելու (Doing Business) դյուրինության վարկանիշային աղյուսակում, սակայն երկրի ցուցանիշները համեմատաբար վատ են, երբ խոսքը վերաբերում է շինարարության թույլտվություններին, որի պարագայում Հայաստանը 79-րդ տեղում է: Առաջընթաց է արձանագրվել 2011 թվականից ի վեր, երբ ՀՀ կառավարությունը՝ վերանայեց քաղաքաշինության վերաբերյալ օրենսդրությունը՝ շինարարության թույլտվությունների ձեռքբերման ընթացակարգերն պարզեցնելու և գործընթացի թափանցիկությունը՝ դիմումների էլեկտրոնային եղանակով կառավարման միջոցով բարձրացնելու նպատակով: Բայցևայնպես, Հայաստանում օրինական ճանապարհով պահեստ կառուցելու համար դեռևս 21 ընթացակարգ է պահանջվում, և դա այն դեպքում, երբ լավագույն գործելակերպ ունեցող երկրներում այդ ընթացակարգերը 10-ից պակաս են (Համաշխարհային Բանկ, 2013ա): Ավելին, շինարարական ընկերությունների հետ արված մանրամասն հարցազրույցները ցույց են տալիս, որ բյուրոկրատիան, կանոնակարգերի պահանջների կատարումը և պաշտոնատար անձինք հաճախակի խոչընդոտներ են առաջացնում բիզնեսի համար:

**Ռուսաստան և Եվրոպական շուկաներ արտահանելու ուղիները** սահմանափակվում են Վրաստանով՝ վերջինիս Սնծովյա նավահանգստով, և մասամբ՝ Իրանով: Ավելին, հարկ է բարելավել

Հայաստանի այն տրանսպորտային ենթակառուցվածքները, որոնք հասանելիություն են ապահովում արտասահմանյան շուկաներ, որպեսզի հնարավոր լինի կրճատել ապրանքների ներմուծման և արտահանման ծախսերը: Մրանք կարելի է դիտել, որպես առևտրի «կոշտ» խոչընդոտներ, որոնք բացասաբար են անդրադառնում տնտեսության բոլոր ճյուղերի վրա:

Այդուամենայնիվ, հարցազրույցների ընթացքում վերհանվեցին նաև շինարարության ոլորտին բնորոշ որոշ «փափուկ» խոչընդոտներ, որոնցից հատկապես շեշտվեց հայրենական ՓՄՁ-ների՝ արտահանման սահմանափակ կարողությունները: Հարցված ընկերությունների ավելի քան մեկ երրորդը որպես մեծապես սահմանափակող գործոններ է նշել օտարերկրյա շուկաների մասին գիտելիքների պակասը և արտաքին չափանիշների բավարարման հարցում անկարողությունը:

***ՕՈՒՆ ներհոսքի և ոլորտում ներդրումների խթանման նպատակով տարվող աշխատանքների փոքր ծավալ***

Օտարերկրյա ուղղակի ներդրումները նպաստում են հասցեատեր երկրների տնտեսությունների զարգացմանը և բարձրացնում որոշակի ճյուղերի արդյունավետությունը. Հայաստանը պետք է հետ շրջի ՕՈՒՆ-ի ներհոսքերի նվազեցման միտումը, որը դիտվում է ճգնաժամից հետո: Շինարարական նյութերի ոլորտի պարագայում այս գեկույցում վեր են հանվել հետևյալ խնդիրները, որոնք պահանջում են ՀՀ կառավարության ուշադրությանը.

- **Վերջերս շինարարական նյութերի ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը սահմանափակ է եղել:** Այս ոլորտում ՕՈՒՆ-ի մասով թվային տվյալներ չկան, սակայն հետազոտությամբ առանձնացվել է վերջին տարիներին Հայաստանի այդ ոլորտում բազմազգ ընկերությունների կողմից ներդրումների ընդամենը մի քանի դեպք: Մեծ ներդրումների նման սակավությունը հանգեցրել է օգտագործվող կապիտալ սարքավորումների վիճակի շարունակական վատթարացմանը և նոր տեխնոլոգիաների սահմանափակ ներդրմանը, ինչն անհրաժեշտ է բարձրաժեք արտադրատեսակներ մշակելու և այդ

հատվածի ներուժը լիարժեքորեն իրացնելու համար (ՏՀԶԱԿ, 2014ա):

- **Ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների խրախուսման աշխատանքները սահմանափակ են:** Կառավարությունները հիմնում են ներդրումների խթանման գործակալություններ, որոնք զբաղվում են բազմազգ ընկերություններին իրենց երկրներ գրավելու գործառնությամբ, իսկ խորքային հետազոտությունները վկայում են, որ դրանք հանգեցնում են լավագույն արդյունքների, եթե հասցեագրվում են տնտեսության առանձին ճյուղերին, որոնք ընտրվում են ազգային համեմատական առավելությունների և ներդրումային հնարավորությունների համաձայն (Հարդինգ և Յավորցիկ, 2011թ, Համաշխարհային Բանկ, 2012թ.): Զարգացման հայկական գործակալությունը, որը ներկայումս երկրի՝ ներդրումների խթանմամբ զբաղվող պետական մարմինն է, գործի է դրել ոլորտի զարգացման որոշ նախաձեռնություններ: Բայցևայնպես, լավագույն գործելակերպերին համահունչ ընթանալու համար կարելի է ավելին անել՝ սկսած ոլորտի փորձագիտական կարողությունների ինստիտուցիոնալացումից մինչև կազմակերպական կառույց և օտարերկրյա ներդրողներին տեղեկատվության տրամադրում: Այս զեկույցը պատրաստելու պահին ՀՀ կառավարությունը քննարկում էր ներդրումների խթանման գործառնությի բարեփոխելու հարցը: Երբ իրականացվի այդ բարեփոխումը, հարկ կլինի, որպեսզի երկիրը հզորացնի ոլորտային մոտեցումը և մշակի շինարարական նյութերին ուղղված թիրախային նախաձեռնություններ:

***ՓՄՁ թույլ կարողություններ՝ սահմանափակ հմտություններով, տեխնոլոգիաներով և տեղեկատվությամբ***

Բազմազգ ընկերությունները գտնում են, որ արտասահմանում իրենց գործունեությունն ընդլայնելն ավելի հեշտ է լինում այն դեպքում, երբ հասցեատեր երկրներն առաջարկում են բարենպաս բիզնես միջավայր: Դա ներառում է տեղական արդյունաբերական բազայի հետ հաջողված կապերի ստեղծման հնարավորությունը. օրինակ՝ անհրաժեշտ արտադրական միջոցները ստանալը, արտադրական գործընթացի որոշ քայլեր այլ կազմակերպության պատվիրելը (աութսորս) կամ այնպիսի

բիզնես հաճախորդներ գտնելը, որոնք պատրաստ կլինեն յուրացնել նոր արտադրանքը: Հայաստանում մասնավոր հատվածի ընկերությունների շրջանում անցկացված հարցումը և փորձագետների հարցազրույցներում շեշտվել է, թե ինչպես շինարարական նյութերի ոլորտի ՓՄՁ-ների ցածր կարողությունները կարող են խոչընդոտել ՕՈՒՆ-ի ներգրավմանը և հնարավորություններին, որպեսզի այս ոլորտը շարունակի զարգանալ: Առանձին խնդիրներից են՝

- **Մահմանափակ հմտություններ և տեխնոլոգիա.** հարցված ՓՄՁ-ների ավելի քան կեսը որպես գործարարությամբ զբաղվելու խոչընդոտ է նշել նեղ մասնագիտական պատրաստվածություն ունեցող աշխատուժի պակասը և հնացած/անբավարար սարքավորումները: Ավելին, շինարարական ընկերությունների հետ մանրամասն հարցազրույցների արդյունքները վկայում են, որ տեղական ՓՄՁ-ների տված արտադրանքի որակի մասով հաճախ դժգոհություններ են հնչում: Նեղ մասնագիտական հմտությունների զարգացման նպատակով հարկ է իրականացնել ոլորտային հմտությունների գնահատում:
- **Մակալ տեղեկատվություն նորարարական արտադրատեսակների օգտագործման օգուտների և կիրառությունների մասին,** ինչը կարող է սահմանափակել բազմազգ ընկերությունների հետ ՓՄՁ-ների հաջող համագործակցությունը և արժեքի շղթայով դեպի վեր շարժվելու հնարավորությունը: Օրինակ՝ էներգախնայող նյութերի մասով՝ հարցված ընկերությունների կեսը հայտնել է, որ որակի և ապրանքների օգտագործման վերաբերյալ սահմանափակ տեղեկատվությունը խոչընդոտ է իրենց բիզնեսի համար:

**ԳԼՈՒԽ 2. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՕՈՒՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՇԱՃ  
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ**

Այս գլխում ներկայացվում են միջազգային պատշաճ գործելակերպի կոնկրետ օրինակներ ուղղված Գլուխ 1-ում վերհանված մարտահրավերների լուծմանը: Այստեղ ուսումնասիրվել են քաղաքականությունների երեք ոլորտներ. 1) շինարարական նյութերի ներքին և արտաքին պահանջարկի մեծացմանը նպաստող գործողություններ, 2) օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհուսքերի խթանման միջոցառումներ և 3) ՓՄՁ կարողությունների վրա ՕՈՒՆ-ի առավելագույն դրական ազդեցության ապահովման միջոցառումներ: Այս ոլորտներից յուրաքանչյուրի մասով բերվում են օրինակներ ՏՀԶԿ անդամ և ոչ անդամ երկրներից ներկայացնելով փաստեր, որոնցից քաղաքականություն մշակողները կարող են օգտակար դասեր քաղել:

**Պահանջարկի խթանում իրավական կարգավորումը, տեղեկատվության տրամադրումը, վարչարարությունը դյուրացնելու և արտահանումը խթանելու միջոցով**

Կառավարությունները կարող են դերակատարում ունենալ շինարարական նյութերի պահանջարկի ձևավորման հարցում՝ ստեղծելով բիզնեսի համար նպաստավոր միջավայր: Դա հնարավոր է անել մասնավորապես շինարարության կարգավորման դաշտի բարելավման, շուկայի խաղացողներին տեղեկատվության տրամադրման, բյուրոկրատական քաշքշուկի նվազեցման և արտահանման խթանման աշխատանքներն ընդլայնելու միջոցով:

***Շինարարության ոլորտի էներգետիկ արդյունավետության կարգավորման պատշաճ մեթոդներ***

Տնտեսությունների զարգացմանը զուգահեռ՝ հասարակություններն աճող մտահոգություն են դրսևորում բնապահպանական խնդիրների առնչությամբ: Սպառողների նախընտրությունները փոփոխվում են՝ պայմանավորված իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ և փոփոխվող վարքագծով, միաժամանակ կառավարությունները ևս սահմանում են բնապահպանական խնդիրներին ակտիվորեն հետամուտ լինելու հայեցակարգեր: Վերջին տարիներին ՏՀԶԿ-ը եղել է այս ոլորտի գլխավոր խաղացողը՝ խթանելով «կանաչ» աճին վերաբերող քաղաքականությունները և նախաձեռնելով դրա վերաբերյալ քննարկումներ, ինչպես նաև աշխատելով երկրների հետ՝ նաև Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում կայուն տնտեսություններ կառուցելու նպատակով (տե՛ս Վանդակ 6-ը, ՏՀԶԿ, 2011թ.):

**Վանդակ 6. ՏՀԶԿ-ն աշխատում է Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի «կանաչող» տնտեսություններում**

1990-ականներից ի վեր ՏՀԶԿ-ն ղեկավարել է Բնապահպանական գործողության ծրագրի (ԲԳԾ) աշխատանքային խմբի աշխատանքները՝ Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի անցումային տնտեսություններում բնապահպանական քաղաքականությունների բարելավմանն աջակցելու նպատակով: ԲԳԾ աշխատանքային խումբը առաջ է մղում բնապահպանական նկատառումների ներառումը տնտեսական, սոցիալական և քաղաքական բարեփոխումների շրջանակներում, ինչպես նաև աշխատում է շրջակա միջավայրի կառավարման մասով ինստիտուցիոնալ և կադրային կարողությունների զարգացման ուղղությամբ:

Որպես տարածաշրջանում իրականացվող գործունեության մաս՝ ՏՀԶԿ ԲԳԾ աշխատանքային խումբը համագործակցում է Միացյալ ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE), Միացյալ ազգերի կազմակերպության բնապահպանական ծրագրի (UNEP) և Միացյալ Ազգերի կազմակերպության արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հետ՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրներին՝ «կանաչ» տնտեսության անցնելու փուլում օգնելու համար՝ տնտեսական աճը ձեռքբերելով շրջակա միջավայրի դեգրադացումից: Այդ աշխատանքներից են՝

- «կանաչ» աճի ցուցիչների մշակում
- շրջակա միջավայրի համար վտանգավոր սուբսիդիաների նախանշում և համապատասխան բարեփոխման մեկնարկ
- «ավելի կանաչ» արտադրանքների մշակման համար շուկայական խրախուսման միջոցների ստեղծում
- ներդրումային քաղաքականությունների և ֆինանսական միջոցների հասանելիության բարելավում
- փոքր և միջին ձեռնարկությունները «կանաչ» ձեռնարկությունների վերափոխում:

ԲԳԾ աշխատանքային խմբի վերջին աշխատանքների թվում են «Ղազախստանի բնակարանաշինության ոլորտում էներգախնայողության խթանման», «Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների պետական բյուջեներում բնապահպանական նկատառումների ընդգրկում. կարևոր կետեր քաղաքականության պատասխանատուների համար» և «Ավելի կանաչ արտադրանքների մշակման համար շուկայական խրախուսման միջոցների ստեղծում. քաղաքականության ուղեցույց Արևելյան գործընկերության երկրների համար» աշխատությունների վերաբերյալ հանձնարարականները:

1. Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա

*Աղբյուրը.* ՏՀԶԿ (2014թ.), «Շրջակա միջավայրը ձևավորվող և անցումային տնտեսություններում», ՏՀԶԿ վեբ կայք, [www.oecd.org/env/outreach](http://www.oecd.org/env/outreach), 2014 թվականի հոկտեմբերի 2-ի դրությամբ:

Շինարարությունը տնտեսության կարևոր ճյուղ է, և այն եղել է «կանաչ» հանրային քաղաքականության միջամտությունների հիմնական ոլորտներից մեկը: Շատ երկրներում շենքերին է բաժին ընկնում էլեկտրաէներգիայի հիմնական սպառման ավելի քան 40%-ը, և նրանք էլեկտրաէներգիայի խնայողության լավագույն հնարավորություններից մեկն են հանդիսանում (ՄԷԳ, 2013ա):

Իրացնելով այդ հաստիքի ներուժը՝ շատ երկրների կառավարություններ ներդրել են ստանդարտներ և կարգեր կայուն շինարարական արդյունաբերությունը խթանելու նպատակով: Մասնավորապես, նրանք կարող են օգտագործել շենքերի էներգետիկ կողմերը, որը բաղկացած է շինությունների էներգիայի սպառման նվազեցման նպատակով սահմանված մի շարք պարտադիր պահանջներից: Նման կողմերն առանցքային դեր են ունեցել շատ ՏՀԶԿ երկրներում՝ նպաստելով բնակելի շենքերում էլեկտրաէներգիայի միջին սպառման նվազեցմանը, որը տատանվում է Նիդերլանդներում և Գերմանիայում 22%-ից մինչև Հարավային Եվրոպայում 6%-ի սահմաններում (ՄԷԳ, 2013ա):

Եվրոպական Միությունում շինությունների էներգետիկ արդյունավետության բարելավման մոդելային քաղաքականություն է հանդիսանում Շինություններում էներգետիկ արդյունավետության ապահովման դիրեկտիվը (ՇԷԱԴ), որը նախ ընդունվել է 2002 թվականին, այնուհետև լրամշակվել 2010-ին: Դիրեկտիվի պահանջներից է, որ անդամ պետությունները ներդնեն էներգետիկ արդյունավետությունը հավաստող պարտադիր հավաստագրում շինությունների կառուցման, վաճառքի կամ վարձակալության դեպքում: Դիրեկտիվը նաև պահանջում է, որպեսզի առկա շինություններում իրականացվող լայնածավալ վերանորոգման աշխատանքները բավարարեն էներգախնայողության նվազագույն պահանջներին, իսկ նոր շինությունների համար ամրագրում է, որ դրանք պետք է լինեն «գրեթե զրոյական էներգաձախսատարության» մինչև 2020 թվականը, իսկ պետական մարմինների զբաղեցրած կամ նրանց սեփականությունը հանդիսացող շենքերի պարագայում այդ վերջնաժամկետը 2018 թվականն է: (ԵՄ, 2010թ.)



Այսպիսի քաղաքականությունները, որպես կանոն, խթանում են էներգախնայող նյութերի պահանջարկը: Վերջերս՝ 2010 թվականին իրականացված ուսումնասիրությամբ բացահայտվել է, թե ինչպես է էներգետիկ արդյունավետության ու կլիմայի փոփոխության մասով քաղաքականությունների իրականացումն ազդում կոնկրետ տիպի տեխնոլոգիաների պահանջարկի վրա: Մասնավորապես, կոնսերվատիվ սցենարով՝ ուսումնասիրությունը կանխատեսում է, որ EPBD դիրեկտիվը ԵՄ -15-ում զարկ կտա մեկուսիչ նյութերի պահանջարկի աճին, ինչի արդյունքում այդ շուկայի ծավալները կկրկնապատկվեն՝ մինչև 22 միլիարդ ԱՄՆ դոլար 2030 թվականին (Mulki և Hinge, 2010թ.):

Միջազգային էներգետիկ գործակալության (ՄԷԳ) իրականացրած վերջին աշխատությունը լավ հենակետ է այն քաղաքականություն մշակողների համար, ովքեր պատրաստակամ են գործողության մեջ դնել արդյունավետ իրավակարգավորիչ փոփոխություններ կայուն շինություններ խթանելու նպատակով: Այդ մասին ներկայացվում է Վանդակ 7-ում:

**Վանդակ 7. ՄԷԳ-ի կուրսը՝ շինությունների էներգետիկ կողմնափոխ արդյունավետացման ուղղությամբ**

Պայմանավորված ձևավորված միջավայրով՝ էլեկտրաէներգիայի սպառման կանխատեսվող աճը տարբերվում է ըստ երկրների: ՄԷԳ անդամ երկրներում ապագա բնակֆոնդի մեծ մասն արդեն իսկ կա, և հիմնական մարտահրավերը գոյություն ունեցող շինությունների վերանորոգումն է դրանց էլեկտրաէներգիայի սպառման պրոֆիլը բարելավելու նպատակով: Ի հակադրություն՝ ոչ ՄԷԳ երկրներում մինչև 2050 թ. պահանջվող բնակֆոնդի կեսից ավելին դեռ պետք է կառուցվի: Այս պարագայում մարտահրավերը նոր շինություններն այնպես նախագծելն է, որ ապահովեն էներգիայի սպառման ցածր մակարդակ:

Պայմանավորված կառուցապատման ոլորտում իրականացվող քաղաքականության միջոցառումների պոտենցիալ օգուտներով՝ ՄԷԳ-ը խորհուրդ է տալիս, որպեսզի կառավարությունները «պահանջեն, որ էներգետիկ արդյունավետության կողմնափոխումները տարածվեն բոլոր նոր, ինչպես նաև վերանորոգվող շինությունների վրա, և դրանք ապահովեն էներգախնայողության նվազագույն պահանջները, որոնց նպատակը կյանքի ցիկլի ծախսերը նվազագույնի հասցնելն է» (ՄԷԳ, 2013ա, էջ 18):

ՄԷԳ-ը մշակել է շինարության էներգետիկ կողոփսի արդյունավետ և հաջող իրականացման կուրս: Այն բաղկացած է չորս փուլերից, որոնք մանրամասնվում են ստորև:

ՊԼԱՆԱ-ՎՈՐՈՒՄ	1	Որոշել և հաստատել նպատակները, շրջանակը և նորմերը
	2	Որոշել իրականացման ու կիրառման եղանակները
	3	Նախատեսել աջակցող քաղաքականության համատեքստ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ	4	Կազմակերպել իրագեկման արշավներ
	5	Պատրաստել ուսումնական նյութեր և իրականացնել ուսուցում
	6	Մշակել պահանջների կատարումը ստուգելու և դրան հետևելու համար անհրաժեշտ գործիքներ
ՄՈՆԻԹԻՆԳ	7	Վերլուծել պահանջների կատարման միտումները տեղական մակարդակում
	8	Արդյունքների հաղորդում և կիրառման քայլեր
ԳՆԱՀԱՏՈՒՄ	9	Գնենրացնել տարբեր մետրիկաներ և գնահատել իրականացման թերությունները ազգային մակարդակում
	10	Պարբերաբար արդիացնել էներգետիկ արդյունավետության կողոփսները՝ ելնելով գնահատման արդյունքում քաղած դասերից

Չորս փուլերից յուրաքանչյուրը ներառում է գործնական քայլերի հաջորդականություն: Կախված շինությունների էներգետիկ կողոփսի մշակման ներկա մակարդակից՝ երկրները պետք է ընտրեն համապատասխան քայլեր, որոնք պետք է իրականացնեն իրենց համատեքստում:

Շինությունների էներգետիկ կողոփսի արդյունավետ իրականացման կարևորագույն գործոններն են մասնավորապես վերը նշված քաղաքականության կուրսի 1-ին, 2-րդ, 6-րդ և 7-րդ քայլերի մասով համապատասխանության ստուգումը: Կառավարությունները պետք է ստուգեն համապատասխանությունը և կիրարկեն իրենց շինությունների էներգետիկ կողոփսը՝ ապահովելու թղթի վրա գրված կարգավորումների վերաձումը գործողությունների տեղում:

Համապատասխանության աստիճանի բարձրացման ուղիներից մեկն է ոլորտի մասնագետների կարողությունների հզորացումը վերապատրաստման դասընթացներ անցկացնելու միջոցով, իրագեկման բարձրացման արշավները և ցուցադրական նախագծեր կազմակերպելը, հատկապես առաջին անգամ շինությունների էներգետիկ կողոփսը ներմուծելիս: Միննույն ժամանակ, ցանկալի փոփոխություններին հասնելու նպատակով կողոփսը չպետք է գործի կամավորության սկզբունքով: Փոխարենը՝ այն պետք է լինի պարտադիր, իսկ կիրարկման հստակ պարտականությունները պետք է սահմանվեն ինստիտուցիոնալ և վարչարարական տարբեր մակարդակներում:

*Աղբյուր. ՄԷԳ (2013ա), Քաղաքականության կուրս. Շինությունների էներգետիկ կողոփսների արդիացում ներ գլոբալ էներգետիկ ապագան ապահովելու նպատակով, ՄԱԶՕ, Փարիզ:*

## ***Էներգախնայողության մասին իրազեկման արշավների իրականացման հաջող գործելակերպ***

Բացի կարգավորման ասպեկտներից, տարբեր երկրներում էներգետիկ արդյունավետության գործելակերպերի ընդունման ճանապարհին կան մի շարք խոչընդոտներ: Դրանցից են շուկայի խնդիրները (օրինակ՝ գնային անհամաչափություններ, շահերի բախում), ֆինանսական խնդիրներ (օրինակ՝ նախնական ծախսեր, ներդրումների ռիսկայնություն), տեխնիկական խնդիրներ (օրինակ՝ տեխնոլոգիաների բացակայության, անբավարար կարողություն) և տեղեկատվական խնդիրներ (ՄԷԳ, 2010թ.):

Վերջինը մասնավորապես վեր է հանվել ՄԷԳ անդամ և ոչ անդամ երկրների հիմնական շահառուների շրջանում անցկացված վերջին հարցման արդյունքներում. պատասխանողների 65%-ը նշել է, որ այն կարևոր խոչընդոտ է էներգետիկ արդյունավետության ձեռքբերման ճանապարհին (ՄԷԳ, 2013թ):

Իրազեկվածության ցածր մակարդակը մեծ խոչընդոտ է դառնում, երբ սպառողները չունեն բավարար գիտելիքներ՝ ռացիոնալ սպառում կատարելու և էներգետիկ արդյունավետ սարքավորումների մասին ներդրումային որոշում կայացնելու համար: Օրինակ՝ էլեկտրաէներգիայի քիչ սպառումից բխող տնտեսական օգուտների մասին տեղեկատվությունը կարող է լինել սակավ կամ ոչ բավարար՝ այդպիսով ստեղծելով նախնական ներդրման թանկ լինելու տպավորություն՝ խնայողությունների ապագա հոսքի համեմատ:

Նման խոչընդոտների հաղթահարման մասով կառավարության արձագանքները սովորաբար դրսևորվել են վերջնական սպառողին ուղղված նախաձեռնություններով: Վերջիններս ներառում են հանրային տեղեկատվական քարոզարշավները, էներգետիկ արդյունավետության մոդուլների ինտեգրումը դպրոցների ուսումնական ծրագրերում և պիտակավորման համակարգերի ներդրումը: Այս գործողությունները նախատեսված են էլեկտրաէներգիայի հետ կապված տնտեսական օգուտների մասին տեղեկատվական բացը լրացնելու և որպես վարձակալության կամ գնման ցուցանիշ շինության էներգետիկ արդյունավետության օգտագործումը խթանելու համար:

Սակայն տեղեկատվական քարոզարշավները կարող են նաև ուղղվել ոլորտի խաղացողներին՝ ապահովելու, որպեսզի շուկայի մասնակիցները հասկանան, թե ինչ է նշանակում շինության էներգետիկ կողմնորոշումը իրենց մասնագիտության համար, ինչ քայլեր պետք է ձեռնարկել դրա պահանջները կատարելու համար, և թե ինչ միջոցներ կարող է կառավարությունը ձեռնարկել պահանջների չկատարման դեպքում (ՄԷԳ, 2013ա): Այս տիպի տեղեկատվությունը նաև ազդանշաններ է հաղորդում ընկերություններին շինարարական ոլորտի առանձին ենթաօլորտներում շուկայի աճի պոտենցիալ հնարավորությունների վերաբերյալ: Թեև միանշանակ չէ, սակայն լավ տեղեկացված սպառողները և տնտեսվարող սուբյեկտները կկարողանան առավել ռացիոնալ որոշումներ կայացնել, և դա, երևի թե, կմեծացնի էներգախնայողական շինանյութերի պահանջարկը և առաջարկը:

Մի շարք եվրոպական պետություններ սկսել են տեղեկատվական քարոզարշավների իրականացումը՝ շինություններում մեկուսացման ավելի բարձր աստիճան ապահովելու նպատակով, որոշ դեպքերում համագործակցելով հասարակության այլ մասնակիցների հետ՝ իրենց ջանքերի շրջանակը մեծացնելու նպատակով: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում էներգիայի խնայողության ֆոնդը մշակել է մի շարք գործընկերություններ ապակենտրոնացված մասնակիցների հետ, ինչպիսիք են տեղական իշխանությունները, էլեկտրաէներգիայի մատակարարները, ասոցիացիաները և տեղական խորհրդատվական կենտրոնները, որպեսզի առաջարկի էներգաարդյունավետության ոլորտում վերապատրաստում և խթանում (ADEME, 2008թ. էներգիայի խնայողության ֆոնդի վեբ կայք, 2014թ.): Մեկ այլ օգտակար միջազգային օրինակ էլ տրամադրվել է France's Espaces Info Energie ցանցի կողմից, որը մանրամասնորեն ներկայացված է Վանդակ 8-ում:

## **Վանդակ 8. France's Espaces Info Energie-ն էներգետիկ արդյունավետության վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում սպառողներին**

Իրազեկման քարոզարշավը էներգետիկ արդյունավետության հանրային քաղաքականությանն աջակցող կարևորագույն ասպեկտ է: Այս նպատակով կառավարությունը ստեղծել է Espaces Info Energie կոչվող մասշտաբային և ընդգրկուն մի կառույց, որը 2001 թվականից հանրությանը անվճար տեղեկատվություն է տրամադրում էներգետիկ արդյունավետ գործելակերպերի օգուտների մասին:

Մասնավորապես՝ Espaces Info Energie-ը էներգետիկ արդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների մասին իրազեկման բարձրացման մանդատ ունեցող խորհրդատուների ցանց է, որին տրվել է երկու հիմնական գործառնություն:

- Էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների վերաբերյալ անվճար խորհրդատվության տրամադրում՝ ի պատասխան հանրության հարցումների, և
- Տեղեկատվության տրամադրում էներգետիկ արդյունավետության թեմայով միջոցառումներին, ինչպիսիք են տոնավաճառները, առևտրային շոուները, ցուցահանդեսները և համաժողովները:

Espaces Info Energie-ը պետական աջակցությամբ գործող նախաձեռնություն է, որը հիմնականում ֆինանսավորվում է Շրջակա միջավայրի և էներգետիկայի կառավարման գործակալության կողմից (8 մլն. եվրո 2007 թ.), սակայն աջակցություն է ստանում նաև բնապահպանական ասոցիացիաների և տարածքային կառավարման մարմինների կողմից: Այն ունի 350 վերապատրաստված խորհրդատուներ, 200 գրասենյակներ ֆրանսիայում, 1 վեբ կայք և խորհրդատվական հեռախոսագիծ:

Մինչ այժմ կառույցի ձեռքբերումները ոգևորիչ են.

- 2003 թվականից սկսած ավելի քան 5 մլն. մարդ ստացել է խորհրդատվություն և տեղեկատվություն
- 50% դեպքերում իրազեկվածության բարձրացումից հետո տեղեկացված անհատների կողմից կատարվել են հետագա ներդրումներ
- միջին հաշվով՝ յուրաքանչյուր խորհրդատու սկիզբ է դնում տարեկան 1.3 մլն. եվրո արժողությամբ էներգետիկ արդյունավետ նախագծերի:

*Աղբյուր.* ՄԷԳ (2014թ.) Քաղաքականությունների և միջոցառումների տվյալների բազա, ՄԷԳ վեբկայք՝ [www.iea.org/policiesandmeasures/energyefficiency/?country=France](http://www.iea.org/policiesandmeasures/energyefficiency/?country=France)՝ մուտքը 2014 թ. հուլիսի 2-ի դրությամբ, Espace Info Energie (2014թ.), Espace Info Energie վեբ կայք՝ [www.renovation-info-service.gouv.fr/](http://www.renovation-info-service.gouv.fr/), մուտքը 2014 թ. օգոստոսի 13-ի դրությամբ, ADEME (2008 թ.), էներգետիկ արդյունավետությունը Եվրոպական Միությունում. Քաղաքականությունների և հաջող գործելակերպերի ուսումնասիրություն, ADEME:

**Շինարարության թույլտվությունների պարզեցման պատշաճ գործելակերպ**

Շինարարության ոլորտի կարգավորումն առանցքային է հանրությանը պաշտպանելու տեսանկյունից, սակայն այն պետք է լինի արդյունավետ՝ տնտեսության նման կարևոր հատվածում ավելորդ սահմանափակումներից խուսափելու համար: Եթե շինարարական նորմերի պահանջների կատարումը բավականին թանկ է ժամանակի և փողի առումով, ապա ընկերությունները կարող են նախընտրել այդ բիզնեսից դուրս գալը, նորմերը շրջանցելու համար կաշառելը կամ ապօրինի ճանապարհով կառուցելը: Մյուս կողմից էլ՝ երբ պահանջների կատարումը հեշտ է և էժան, ապա բոլորը դրանից շահում են:

Մասնավորապես՝ ընթացակարգերի պարզեցումը բազմաթիվ օգուտներ է բերում շինարարության ոլորտում գործող ընկերություններին: Առաջին, ըստ սահմանման՝ շինարարության թույլտվության տրամադրման գործընթացի բարդությունը նվազում է, երկրորդ՝ այն նվազեցնում է դիմելու գործընթացի արդյունքի մասով անորոշությունը, երրորդ՝ այն նվազեցնում է թույլտվության ձեռքբերման գործարքի ծախսը, քանի որ ավելի քիչ ժամանակ է ծախսվում բյուրոկրատական պարտականությունների վրա՝ ավելի շատ ազատ ժամանակ թողնելով ավելի արտադրական գործունեության մեջ այն ծախսելու նպատակով:

Արժեքի շղթայի ավելի վերին օղակում գտնվող ոլորտները նույնպես շահում են շինարարության ոլորտում կիրառվող ողջամիտ կարգավորման արդյունքում: Մասնավորապես, որպես սերտորեն կապված ոլորտ՝ շինարարական ընկերությունների համար բյուրոկրատիայի ռացիոնալացումը կիսթանի շինարարական նյութերի նկատմամբ պահանջարկը:

Շատ երկրների կառավարություններ շինությունների անվտանգության ապահովմանն ուղղված իրենց ջանքերում աշխատել են շինարարության թույլտվությունների ձեռքբերման համար պահանջվող ընթացակարգերի համախմբման ուղղությամբ՝ միաժամանակ պահպանելով պահանջների կատարման ողջամիտ ծախսերի մակարդակ: Այնուամենայնիվ, տարբեր երկրներում շարունակվում են այդ թույլտվությունների ձեռքբերման ծախսերն ու տևողությունը տարբեր է:

Համաշխարհային բանկի *Գործարարությանը զբաղվելու (Doing Business)* վերաբերյալ գեկույցում բերված փաստերի հիման վրա (Համաշխարհային բանկ, 2013ա) կարելի է վերհանել միջազգային պատշաճ գործելակերպերը (Վանդակ 9):

**Վանդակ 9. Շինարարության թույլտվությունների տրման պատշաճ գործելակերպ**

Համաշխարհային Բանկի *Գործարարությանը զբաղվելու (Doing Business)* վերաբերյալ գեկույցում վերլուծության է ենթարկվում տարբեր երկրների իրավակարգավորիչ միջավայրերում փոքր և միջին բիզնեսներ բացելու և աշխատեցնելու դյուրինությունը: Զեկույցում ուսումնասիրվում են մի քանի բնագավառներ, ներառյալ՝ շինարարության թույլտվություններ ստանալու գործընթացը: Սա կարելի է համարել երկրները՝ ըստ շինարարության ոլորտի գործող իրավակարգավորումների համեմատելու լավագույն ցուցիչը:

Շինարարության թույլտվությունների ստացման համար սովորաբար պահանջվող ընթացակարգերի համեմատական վերլուծությունը մատնացույց է անում երեք ուղղություններ, որոնք քաղաքականության պատասխանատուները պետք է հաշվի առնեն գործող օրենսդրությունը բարելավելու համար: Դրանք ներկայացվում են ստորև.

- **Թույլտվությունների ձեռքբերման ընթացակարգերի քանակը.** սովորաբար, օրինական ճանապարհով պահեստ կառուցելու համար պահանջվող ընթացակարգերն են՝ 1) բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում մաքսագերծման, լիցենզիաներ, թույլտվություններ և հավաստագրեր ձեռք բերելու համար, 2) ստուգումներ, 3) միացումներ կենցաղային սպասարկման համակարգերին՝ ջրամատակարարում, ջրահեռացում, հեռախոսագծեր, և 4) շինության գրանցում շինարարության ավարտից հետո: Ինչքան շատ է ընթացակարգերի քանակը, ավելի շատ բյուրոկրատական քաշքշուկի են առնչվում ընկերությունները:

Այս ուղղությամբ պատշաճ գործելակերպ է համարվում պահանջվող ընթացակարգերի քանակը նվազագույնի հասցնելը.

- Լավ ցուցանիշներ ունեցող երկրներում՝<sup>1</sup> միջինում պահանջվում է 9 ընթացակարգ
- ՏՀԶԿ-ում՝ միջինում պահանջվում է 13 ընթացակարգ:

- **Դյուրացնել տեխնիկական պայմանների հաստատման կարգը.** շինարարական ընկերություններից պահանջվում է թույլտվություններ ստանալ մի շարք տեխնիկական ասպեկտների, այդ թվում՝ կենցաղ սպասարկման համակարգերին միանալու և նախագծման վերաբերյալ: Որքան ավելի ցրված է այս պրոցեսը տարբեր մարմինների միջև, այնքան ավելի է այն դժվարանում շինարարական

ընկերությունների համար:

Այս ուղղությամբ պատշաճ գործելակերպ է համարվում տեխնիկական պայմանները մեկ պատուհանով հաստատումը՝ այս կերպ նվազագույնի հասցնելով այն վարչական մարմինների թիվը, որոնց հետ շինարարական ընկերությունները պետք է առնչվեն:

– Վրաստանում Թբիլիսիի քաղաքային նախագծման ծառայությունը տեխնիկական պայմանները ջրային տնտեսությունից և էլեկտրաէներգիա մատակարարողից ստանում է մեկ-պատուհանով՝ նախատեսված շինարարական ընկերությունների համար:

– Նոր Զելանդիայում նախագծային և կառուցապատման թույլտվությունը ձեռք է բերվում մեկ կենտրոնացված մարմնից կամ ունիտար մարմնից (այսինքն՝ Օքլենդի խորհրդից):

- **Տեսչական ստուգումներ.** պետական մարմինները շինարարության ընթացքում և դրանից հետո տեսչական ստուգումներ են իրականացնում՝ հավաստիանալու համար, որ կառուցապատող ընկերությունները կատարում են գործող նորմերի պահանջները: Չնայած պահանջների կատարումը պարտադիր է՝ պետական մարմինների կողմից ստուգման ոչ հստակ գործընթացները և գործառնությունների կրկնությունը մեծացնում են համապատասխանության ստուգման ծախսը ինչպես կառուցող ընկերության, այնպես էլ՝ պետական վարչական մարմնի համար:

Այս ուղղությամբ պատշաճ գործելակերպ է տարբեր պետական մարմինների փոխգործակցությունը:

– Վրաստանում ԱրիսՋեն տեսչությունը կազմում է ստուգման արձանագրություններ: Աշխատանքների վերջում շինարարական ընկերությունը պարտավոր է միննույն մարմնին ներկայացնել ստուգման բոլոր հավաստագրերը:

– Ավստրալիան ստեղծել է մեկ միասնական մարմին՝ Գլխավոր հավաստագրման մարմինը (PCA), որը տեսչական ստուգումներ է իրականացնում կառուցապատման աշխատանքների՝ նորմերին համապատասխանությունը ապահովելու համար:

*Աղբյուր.* Համաշխարհային Բանկ (2013ա) Doing Business 2014, Փոքր և միջին ձեռնարկությունների մասով կարգավորումների ըմբռնում, Համաշխարհային բանկ խումբ, Վաշինգտոն ԴիՍի:

1. Միջինում ամենաբարձր տեղում են 15 տնտեսություններ՝ Շոնգ Կոնգ, Չինաստան, Վրաստան, Մինգապուր, Բահրեյն, ԱՄԷ, Սեյնթ Վինսենթ, Թայվան, Դանիա, Գրենադա, Ավստրալիա, Սանտա Լուչիա, Նոր Զելանդիա, Գերմանիա, Թայլանդ և Մանթա Կիթս:



## ***Արտահանման վերաբերյալ տեղեկատվության հավաքման և խթանման պատշաճ գործելակերպ***

Փոքր տնտեսությունների պարագայում արտահանման շուկաներ մուտք գործելը գալիս է լրացնելու սահմանափակ ներքին պահանջարկը: Կառավարության ղեկավարության ներքո իրականացվող արտահանման խթանման միջոցառումները կարող են զարկ տալ տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճին՝ տեղական ընկերություններին օտարերկրյա շուկաներ մուտք գործելու հարցում օգնելու միջոցով:

Օտարերկրյա գործընկերների հետ գործարարությամբ զբաղվելու նպատակ հետապնդող ընկերությունները տեղեկատվության, օրինակ՝ այդ գործընկերների հուսալիության, գլոբալ պահանջարկի միտումների, հնարավոր ներմուծողների, սակագնային համակարգերի, արտադրանքի կարգավորման և բնապահպանական ստանդարտների վերաբերյալ: Նման տեղեկացվածության հասնելը բավականին ծախսատար է, և եթե խոշոր ընկերությունները կարող են դա իրենց թույլ տալ, ապա փոքրները հաճախ չունեն անհրաժեշտ կարողություն:

Ավելին, չնայած այս տիպի տեղեկատվության հավաքագրման ծախսերը կրում են մասնավոր բնույթ, սակայն դրանց օգուտները հաճախ հանրային բնույթ են կրում: Հետևաբար, շուկայի «ձախողման» հետևանքով, երբ գործ ունենք «առանց վճարման մասնակցության» (free-riding) և ոչ բավարար մակարդակի ներդրումների հետ, տեղեկատվության տրամադրման մակարդակը կարող է բավարար չլինել (Belloc և Di Maio, 2011թ.; UNCTAD, 2009թ.): Դրանով էլ ավելի է հիմնավորվում կառավարության միջամտությունը արտահանման խթանման տիրույթում. տեղեկատվության ապահովումը կարող է դիտվել որպես հանրային բարիք՝ պայմանավորված նրանով, որ այն չի վերջանում, երբ սպառվում է, և չի կորցնում իր արժեքը կրկնակի օգտագործման դեպքում:

Շուկայի «ձախողումները» կարելի է շտկել այն դեպքում, եթե պետական մարմինները ձեռք բերեն համապատասխան տեղեկատվությունը և այն մատչելի դարձնեն շուկայի մասնակիցների համար՝ կամ ցածր գնով, կամ անվճար: Բավարար թվով օգտագործողների դեպքում տեղեկատվության տրամադրման օգուտները

կգերազանցեն դրա ձեռքբերման ծախսերը: Սովորաբար առևտրի խթանմամբ զբաղվող կազմակերպությունները պետական գերատեսչություններն են, որոնց գործն է տրամադրել արտահանման մասին համապատասխան տեղեկատվություն<sup>6</sup>:

Արտահանման խթանման վերջնական պատակը տեղական ընկերություններին՝ արտասահմանում իրենց բիզնեսի ընդլայնման հարցում աջակցելն է: Դա սովորաբար արվում է բազմատեսակ ծառայությունների միջոցով, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ (UNCTAD, 2009թ.):

- **Շուկայի հետազոտություն և զարգացում.** արտահանվող ապրանքների պահանջարկի միտումների վերլուծություն, թիրախային շուկայի վերաբերյալ տեղեկատվության տարածում և օգնություն՝ շուկա մուտք գործելու ռազմավարությունների մշակման հարցում:
- **Առևտրի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.** սակագները, գները, ներմուծման ընթացակարգերը, ստանդարտները, որակին և փաստաթղթերին առաջադրվող պահանջները թիրախային շուկաներում:
- **Արտահանման հմտությունների զարգացում.** արտադրանքի պատրաստման վերաբերյալ տեխնիկական խորհրդատվություն և արտահանման ոլորտի աշխատողների վերապատրաստում, օրինակ, վաճառքի և մարքեթինգի թեմայով:
- **Առևտրային հնարավորություններ.** գնորդ-վաճառող միջոցառումներ, առևտրային առաքելություններ և աջակցություն առևտրային տոնավաճառների և ցուցահանդեսների մասնակցության ցանկություն հայտնաձև տեղական ընկերություններին:

Մեկ կոնկրետ ոլորտում արտահանման խթանումը կարող է զգալի դրական կողմնակի ազդեցություններ ունենալ, քանի որ որևէ կոնկրետ ոլորտի դրական իմիջը կարող է բարելավել օտարերկրյա ներմուծողների սպավորությունը տվյալ ոլորտում գործող բոլոր ընկերությունների մասին:

Վանդակ 10-ում բերված է Գերմանիայի «հորիզոնական» մոտեցումը՝ համակցված ոլորտի արտահանմանը վերաբերող տեղեկատվության տրամադրման և խթանման հետ: Որպես միջին եկամուտներ ունեցող երկիր՝ Հայաստանը կարող է օգտվել միջազգային լավագույն գործելակերպերից՝ արտահանման վերաբերյալ տեղեկատվության հավաքման ու խթանման աշխատանքները բարելավելու համար, թեև՝ փոքր մասշտաբով և ավելի փոքր ծախսերով:

**Վանդակ 10. Գերմանիայի «Trade and Invest» հաստատությունը արտահանողներին տրամադրում է մեծածավալ տեղեկատվություն**

Գերմանիայի «Trade and Invest» (GTAI) հաստատությունը ստեղծվել է 2009 թվականին նախկինում գործող առևտրի և ներդրումների խթանման հաստատությունների միաձուլման արդյունքում: Աջակցություն ստանալով արտասահմանյան 60 փորձագետներից և օգտվելով Գերմանիայի առևտրի պալատի ցանցի հետ սերտ համագործակցությունից՝ այս գործակալությունը խթանում է օտարերկրյա ուղղակի ներդրումները և աջակցում է միջազգային առևտրին՝ թե ընդհանուր բիզնես միջավայրի բարելավման «հորիզոնական» մոտեցման և թե շուկայի մասով համապարփակ և ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրման միջոցով:

Մասնավորապես արտահանման վերաբերյալ տեղեկատվության և խթանման ոլորտում GTAI-ը տրամադրում է օտարերկրյա առևտրի մասին արդիական տեղեկատվություն Գերմանիայում գործող այն բիզնեսներին, որոնք հետամուտ են ընդլայնելու իրենց գործունեությունը միջազգային շուկաներում. դա կատարվում է հետևյալ գործողությունների միջոցով՝

- շուկայի և ոլորտի մասին հաշվետվություններ
- տեղեկատվություն բիզնեսի և հարկային օրենսդրության մասին
- տեղեկատվություն մաքսային և սակագնային պայմանների մասին
- միջազգային ծրագրերի մասին ծանուցումներ, մրցույթների և բիզնես պայմանագրերի մրցութային հրավերներ
- գործնական բիզնես տեղեկատվություն:

Բացի այդ, GTAI-ը գործարկում է iXPOS բիզնես պորտալը արտահանման ոլորտի մասնակիցների համար: Իրենց ապրանքների և ծառայությունների գնման կամ վաճառքի հարցերով հետաքրքրված ընկերությունները շահում են այս առցանց շուկայից, որտեղ նրանք կարող են մուտքագրել իրենց առաջարկները, կապ հաստատել բիզնես գործընկերների հետ, տեղադրել հարցումներ և փոխգործակցել երկրի/ոլորտի փորձագետների հետ:

GTAI –ի 2012 թ. վերջին ձեռքբերումներից են՝

- 139 մասնակցություն առևտրային տոնավաճառների/միջոցառումների՝ գրեթե 37 000 մասնակիցներով
- 1.2 մլն. հարցումներ արտահանման տվյալների բազա (հիմնականում տեղեկատվական հարցումներ Ռուսաստանի, Չինաստանի և Թուրքիայի վերաբերյալ)
- 199 գործընկեր կազմակերպություններ տարածել են առկա տեղեկատվությունը
- 20 230 գրանցված օգտատերեր/4700 iXPOS անդամներ
- Համագործակցություն օտարերկրյա գործընկերների հետ Նոր Դելիում Գերմանիայի գործարարության թեմայով համաժողով կազմակերպելու նպատակով:

*Գերմանիայի արտահանողներին տրամադրված տեղեկատվությունից ընտրված օրինակներ*

Շուկայի հնարավորությունների մասին զեկույցներ	Ոլորտային տեղեկատվություն	Փորձագետների հետ մանրամասն հարցազրույցներ	Ճշգրիտ տվյալներ առանձին ոլորտների վերաբերյալ
Ջրային ոլորտը Ամերիկայում Նախագծման ոլորտը Չինական Թայվեյում Վերականգնվող էներգիայի ոլորտը Հնդկաստանում	Շինարարության ոլորտ Ավտոմոբիլային արդյունաբերություն Մեքենաշինություն և սարքավորումներ Քիմիական արդյունաբերություն	Հարցազրույց սարքավորումներ արտադրող ընկերության վաճառքի հարցերով կառավարչի հետ. – Արտահանված ապրանքներ – Հաճախորդների գտնվելու վայրը – Մուտքի ռազմավարություն – Արտահանման մարտահրավերներ	Անդրադարձ Բրազիլիայի գյուղատնտեսական սարքավորումների շուկային – Շուկայի չափը (ԱՄՆ դոլար) – Տեղական արտադրություն (ԱՄՆ դոլար) – Ներմուծում/արտահանում (ԱՄՆ դոլար) – Շուկայի ծավալ (միավորներ) 20 ամենամեծ ընկերությունները

*Աղբյուրը.* GTAI (Germany Trade and Invest) (2014թ.), GTAI վեբ կայք, [www.gtai.de/GTAI/Navigation/EN/trade.html](http://www.gtai.de/GTAI/Navigation/EN/trade.html), մուտքը 2014 թվականի օգոստոսի 12-ի դրությամբ, AHK (Գերմանիայի առևտրային պալատ) (2014թ.), AHK վեբ կայք [www.ahk.de/en](http://www.ahk.de/en), մուտքը 2014 թվականի օգոստոսի 12-ի դրությամբ. GTAI (2013թ.), 2012թ. տարեկան հաշվետվություն. Փոփոխվող գլոբալ տնտեսության քննում. GTAI:

## **Ներդրումների խթանման միջոցառումները կարող են նպատակաուղղվել առանձին ոլորտներին և թիրախներին**

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման գործում մրցակցությունն աճում է, և հարկ է, որ երկրները համապարփակ մոտեցում որդեգրեն բազմազգ ընկերություններին գրավելու համար: *ՏՀԶԿ-ի Ներդրումների քաղաքականության շրջանակը* (ՏՀԶԿ, 2006թ.) մոդելային գործիք է այն քաղաքականություն մշակողների համար, ովքեր պատրաստակամ են իրականացնելու ներդրումների համար բարենպաստ բարեփոխումներ և զարգացնել իրենց երկրները որպես օտարերկրյա ձեռնարկությունների համար նպատակային ուղղություններ (Վանդակ 11):

Ելնելով Գլուխ 1-ում վերհանված՝ զարգացման կարիք ունեցող ոլորտներից՝ այստեղ հաստուկ շեշտ է դրվում ներդրումների խթանման միջոցառումների վրա:

### **Վանդակ 11. Մեջբերումներ ՏՀԶԿ-ի *Ներդրումների քաղաքականության շրջանակից***

*ՏՀԶԿ-ի Ներդրումների քաղաքականության շրջանակն՝ առաջարկում է հարցերի վրա հիմնված մոտեցում քաղաքականության տաս բնագավառներին, որոնք նախանշվել են հույժ կարևոր երկրի ներդրումային միջավայրի որակի բարելավման համար: Դրանք են՝ 1) ներդրումային քաղաքականություն, 2) ներդրումների խթանում և դյուրացում, 3) առևտրային քաղաքականություն, 4) մրցակցային քաղաքականություն, 5) հարկային քաղաքականություն, 6) կորպորատիվ կառավարում, 7) պատասխանատու բիզնես վարքագծի զարգացման քաղաքականություններ 9) մարդկային ռեսուրսների զարգացում և 10) ենթակառուցվածքների և ֆինանսական հատվածի զարգացում:*

Ներդրումների խթանման և դյուրացման առնչությամբ մշակվել են հետևյալ առանցքային հարցերը քաղաքականության մշակումն ուղղորդելու նպատակով.

- 1. Արդյո՞ք կառավարությունն ունի կայացած, լայնընդգրկուն բիզնես միջավայր զարգացնելու ռազմավարություն, և այս ռազմավարության շրջանակում ի՞նչ դեր է վերապահված ներդրումների խթանման և դյուրացման միջոցառումներին:*
- 2. Արդյո՞ք կառավարությունը ստեղծել է ներդրումների խթանման գործակալություն (ՆԽԳ): Ինչքանո՞վ է ՆԽԳ-ի կառուցվածքը, առաքելությունը և իրավական կարգավիճակը համահունչ միջազգային պատշաճ գործելակերպերին, և արդյո՞ք նրա համար սահմանվել է նշաձող այդ գործելակերպերի նկատմամբ:*
- 3. Արդյո՞ք ՆԽԳ-ը պատշաճ ձևով ֆինանսավորվում է, և արդյո՞ք նրա*

արդյունավետությունը պարբերաբար վերանայվում է ներդրումների ներգրավման առումով: Ինչ չափորոշիչներ են սահմանվել գործակալության արդյունավետությունը մշտադիտարկելու համար:

4. Ինչպե՞ս է կառավարությունը փորձել ռացիոնալացնել վարչարարական ընթացակարգերը նոր ներդրումներն արագացնելու և ծախսը նվազեցնելու ուղղությամբ: Որպես ներդրողների աշխատանքը հեշտացնող մարմնի իր պարտականություններն իրականացնելիս՝ արդյո՞ք ՆԽԳ-ը լիարժեք օգտվում է կայացած ներդրողներից ստացված՝ առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունից:
5. Ինչքանո՞վ է ՆԽԳ-ը խթանում և պահպանում երկխոսության մեխանիզմները ներդրողների հետ: Արդյո՞ք կառավարությունը խորհրդակցում է ՆԽԳ-ի հետ ներդրումների վրա ազդող խնդիրների առնչությամբ:
6. Ինչ մեխանիզմներ է սահմանել կառավարությունը ներդրումները խթանող միջոցառումների ծախսերի և օգուտների, դրանց համապատասխան տևողության, թափանցիկության և այլ երկրների տնտեսական շահերի վրա դրանց ազդեցության գնահատման համար:
7. Ինչ քայլեր է ձեռնարկել կառավարությունը բիզնեսների, և հատկապես օտարերկրյա մասնաձյուղերի և տեղական ձեռնարկությունների միջև ներդրումային կապերը խթանելու համար: Ինչ միջոցառումներ է ձեռնարկել կառավարությունը ներդրումների մասով այն առանձին խոչընդոտներին լուծում տալու համար, որոնց բախվում են ՓՄՁ-ները:
8. Արդյո՞ք կառավարությունն օգտվել է ներդրումների խթանման փորձի ձևավորմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային նախաձեռնություններից, ինչպիսիք են Համաշխարհային Բանկի և այլ միջկառավարական կազմակերպությունների կողմից առաջարկված նախաձեռնությունները: Արդյո՞ք ՆԽԳ-ը միացել է տարածաշրջանային և միջազգային ցանցերին:
9. Ինչքանո՞վ է կառավարությունն օգտվել տեղեկատվության փոխանակման ցանցերից ներդրումները խթանելու համար:

1. ՆՔԸ-ը թարմացվել է 2015 թվականին՝ համաշխարհային տնտեսական նոր հիմունքներն արտացոլելու և ներդրումային քաղաքականության ոլորտի միջազգային հանրությունից ստացված արձագանքները ներառելու նպատակով:

Աղբյուր. S2ԶԿ (2006թ.), Ներդրումների քաղաքականության շրջանակ, S2ԶԿ հրատարակչություն, Փարիզ, [www.oecd.org/daf/inv/36671400.pdf](http://www.oecd.org/daf/inv/36671400.pdf):

***Ներդրումների խթանման լավագույն գործակալությունները որդեգրում են ոլորտային մոտեցում***

Մրցունակության մասով ոլորտային մոտեցումը դյուրացնում է ոլորտին ներհատուկ խոչընդոտների վերհանումը և լուծումը, որոնք կարող է բավարար ուշադրության չարժանանան ամբողջ տնտեսության ընդգրկմամբ մոտեցման պարագայում: Եթե տրանսպորտային ենթակառուցվածքները և մաքսային ընթացակարգերը կարող են ազդել բոլոր արտահանող ձեռնարկությունների վրա, ապա ագրոբիզնեսին խոչընդոտող հիմնական խնդիրը կարող է լինել հավաստագրման սանդարտները, իսկ տեքստիլ արդյունաբերությանը՝ տեխնիկական հմտությունների զարգացումը:

Նույն կերպ հաստատվել է ոլորտային մակարդակում ներդրումների խթանման շոշափելի օգուտները: Ակադեմիական ուսումնասիրությունները և իրականացնողների փորձը ցույց են տալիս, որ ներդրումների խթանման ջանքերն առավել արդյունավետ են, երբ կենտրոնացվում են գերակա ոլորտներում, այլ ոչ տարածվում բոլոր տնտեսական գործունեության տեսակների վրա: Օրինակ՝ Հարդինգը և Յավորիկը (2011թ.) գտել են, որ զարգացող երկրներում թիրախավորված ոլորտները ստանում են երկու անգամ ավելի շատ ՕՈՆ հոսքեր՝ ոչ թիրախավորված ոլորտների համեմատ: Սա համապատասխանում է ներդրումների խթանման գործակալությունների (ՆԽԳ-ներ) դերին՝ որպես պոտենցիալ ներդրողներին բարձրաարժեք տեղեկատվության և գիտելիքների տրամադրողների (Համաշխարհային Բանկ, 2012թ.):

Բացի այդ, ներդրումների խթանման ոլորտում քաղաքականությունների մշակմանը ցուցաբերվող ոլորտային մոտեցումը ստեղծում է հարթակ հանրային և մասնավոր ոլորտների միջև կայուն փոխգործակցության համար: Շարունակական երկխոսությունը երկուսի միջև նվազեցնում է տեղեկատվության անհամաչափությունը և ստեղծում համագործակցության մթնոլորտ, որտեղ ավելի հեշտ են ընկալվում ոլորտային խոչընդոտները և աճի հնարավորությունները (ՏՀԶԿ, 2013ա; Ռոդրիկ, 2004թ.):

Ներդրումների խթանման գործակալությունները կառավարական մարմիններ են, որոնց գործը օտարերկրյա ներդրումների ներգրավումն է:

Ամուր ոլորտային մոտեցում որդեգրած գործակալության հաջողված օրինակ է ներկայացվում Չեխիայի Հանրապետության փորձով (Վանդակ 12):

**Վանդակ 12. Չեխիկվեստի գործունեությունը ձևավորվել է ոլորտային հենքով**

Չեխիկվեստը Չեխիայի Հանրապետության ներդրումների խթանման գործակալությունն է, որը գործում է Արդյունաբերության և առևտրի նախարարությանն առընթեր: Ստեծվելով 1992 թ.՝ այն ունի 7 արտասահմանյան գրասենյակների և 13 տարածաշրջանային գրասենյակների ցանց, և այնտեղ աշխատում են 225 մասնագետներ, որոնց մեծ մասն ունի համալսարանական կրթություն: 2012 թ. նրա բյուջեն կազմեց մոտավորապես 17 մլն. դոլար: Որպես առաջատար ՆԽԳ Չեխիկվեստն ունի լավ համբավ հայտնի իր արհեստավարժությամբ և ներդրումների ներգրավման հաջող փորձառությամբ:

Գործակալությունը ՕՈՆՆ-ը խթանում է բազմազան ծառայությունների միջոցով: Այդ ծառայություններից են՝ լիարժեք տեղեկատվական աջակցությունը, անհատական հարմարեցված այցելությունները, ներդրումները խթանող միջոցների օգտագործումը, ԵՄ կառուցվածքային ֆոնդերի հասանելիությունը, բիզնես առաջնահերթությունների որոշարկումը, հնարավոր գործընկերների/մատակարարների որոնումը և գործող ներդրողների մասին հոգացությունը:

Գործակալությունը գործում է ոլորտային ամուր հենքի վրա: Այն ընտրում է զարգացման զգալի ներուժ ունեցող ոլորտներ և նրանցից յուրաքանչյուրի համար մշակում տեղեկատվություն՝ ներառյալ առկա խթանների վերաբերյալ տեղեկատվությունը, արտադրական միջոցների արժեքները, գործընկերության և հետազոտությունների և զարգացման (Հ&Ձ) հնարավորությունները: Խթանման ոլորտային միջոցառումները և կազմակերպական կառուցվածքներն այնուհետև դրվում են գործածության մեջ՝ օտարերկրյա ներդրողներին գրավելու կոմերցիոն ջանքերին աջակցելու նպատակով, որոնք են՝ խոր գիտելիքների տիրապետող՝ նվիրյալ մասնագետները կամ մատակարարների ոլորտային տվյալների բազաները՝ գտնվելու վայրի, առկա հիմնական տեխնոլոգիաների և արտադրության տեսակի մասին տեղեկատվությամբ հանդերձ:

Ներկայումս որպես իր գործունեության առաջնային ոլորտներ Չեխիկվեստն ընտրել է հետևյալը. նանոտեխնոլոգիաներ, ավտոմոբիլային արտադրություն, օդատիեզերական տեխնոլոգիաներ, էներգետիկա և շրջակա միջավայր, կենսաբանություն, բարձր տեխնոլոգիաներով մեխանիկական ճարտարագիտություն, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ (S2S), բիզնես աջակցության ծառայություններ և «կանաչ» փոխադրամիջոցներ:

=====



**Օրինակներ Չեխիական ոլորտային գործունեության տեսակներից. ավտոմոբիլային**

**Ոլորտային մատակարարների տվյալների բազա**

**Պոտենցիալ բիզնես գործընկերների գտնվելու վայրը**



**Ներդրումային հնարավորությունների մասին գրքույկ**

**Ընտրված ոլորտային Հ&Ձ կենտրոններ**



1993-2012 թվականների ընթացքում Չեխիական միջնորդությամբ կայացել են ավելի քան 2 000 ներդրումային ծրագրեր (350-ը՝ միայն 2012 թ.), ավելի քան 29 մլրդ. դոլար արժողությամբ, և այն իր նպաստն է բերել ավելի քան 240 000 աշխատատեղերի ստեղծման հարցում:

Աղբյուր. Չեխիական, Չեխիական վեր կայք՝ [www.czechinvest.org/en](http://www.czechinvest.org/en), մուտքը 2014 թ. հունիսի 20-ի դրությամբ:

**Միջուկի ներդրողների ներգրավում՝ որպես ՕՈՆ-ի առաջնային աղբյուր**

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) տալիս է սփյուռք հասկացության ընդգրկուն սահմանումը՝ որպես՝

«արտագաղթողներ և նրանց ժառանգները, ովքեր ժամանակավորապես կամ մշտապես ապրում են իրենց ծննդյան կամ նախնիների երկրի սահմաններից դուրս, սակայն շարունակում են պահպանել գործուն կամ նյութական կապեր իրենց ծագման երկրների հետ» (Ազունիաս և Նյուլանդ, 2012թ.): Այդ կապերը, պոտենցիալ առումով, նպաստավոր են զարգացման համար:

Սփյուռքի ներկայացուցիչները կարող են իրենց նպաստն ունենալ երկրի զարգացման գործում մի քանի եղանակներով: Նշված ամենատարածված ձևերից են փոխանցումները՝ միգրանտների կողմից ուղարկված գումարն իրենց հայրենիքում գտնվող հարազատներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Ըստ Համաշխարհային Բանկի՝ այս գումարը 2013 թվականին կազմել է 550 մլրդ. դոլար ամբողջ աշխարհի մասշտաբով: Երկրորդ, զարգացող երկրների սփյուռքի ներկայացուցիչների կողմից պահվող խնայողությունները հաշվարկվում են ավելի քան 500 մլրդ. դոլարի չափով, և հաճախ պահվում են բանկային ավանդներում՝ շատ փոքր եկամտաբերությամբ: Ֆինանսական միջոցների այս աղբյուրից օգտվելը կարող է կառավարություններին տալ ֆինանսական միջոցների հասանելիության լրացուցիչ հնարավորություն շուկայականից ցածր տոկոսադրույքներով, օրինակ՝ սփյուռքի պարտատոմսերի միջոցով (Համաշխարհային Բանկ, 2013թ): Ի վերջո, սփյուռքի համայնքը կարելի է ուղղակիորեն թիրախավորել որպես արդյունավետ ներդրման աղբյուր, և որպես օտարերկրյա ուղղակի ներդրողների կայացած ենթախումբ:

Շուկայի ուժերը պետք է ուղղորդեն կապիտալ միջոցների բաշխումը նույնիսկ սահմանից այն կողմ՝ համապատասխանեցնելով ռիսկի և եկամտաբերության ակնկալիքները ներդրումային հնարավորությունների հետ: Սակայն, վիճարկվում է այն հարցը, որ սփյուռքի ներդրողները յուրահատուկ են և ունեն ռիսկի մասով այլ բնորոշիչներ, քան ոչ սփյուռքի ներկայացուցիչները, և դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Առաջին, սփյուռքի ներկայացուցիչները կարող են ունենալ ավելի լավ տեղեկատվություն իրենց ծագման երկրում առկա ներդրումային հնարավորությունների մասին: Երկրորդ, նրանք կարող են ավելի քիչ զգայուն լինել փոխարժեքի ռիսկի նկատմամբ՝ իրենց երկրի տարադրամով ունեցած սեփական պարտականություններից ելնելով:

Երրորդ, նրանք կարող են ունենալ ավելի երկարաժամկետ տեսլական, քան նոր առաջացող շուկաների ներդրողները: Եվ վերջապես, նրանք կարող են ցուցաբերել ավելի ցածր ֆինանսական շահույթ ստանալու պատրաստակամություն հայրենիքում կատարվող ներդրումներից՝ պայմանավորված «հայրենասիրական» կամ «էթնիկական» գեղջով (ԳՄՀԸ և ԻՎԻ Քոնսալթինգ, 2011թ., Ագունիաս և Նյուլանդ, 2012թ.):

Միյուրքի հետ առնչվող ներդրումների օգուտները հիմնականում համընկնում են «ավանդական» ՕՈՒՆ-ի օգուտներին: Մակայն, կազմվել են մի քանի հիփոթեզներ սփյուռքին առնչվող ներդրումներին բնորոշ առավելությունների մասին: Դրանք վերաբերում են ներդրումների կայունության աճին՝ պայմանավորված ռիսկերի և ներքին տնտեսական ցնցումների նկատմամբ փոքր հակակրանքով, տեղեկատվության ապահովման և տեղական շահառուների միջնորդական աջակցության միջոցով հետագա ներդրումների ներգրավման կարողությամբ, և այսպես կոչված «ուղեղների ձեռքբերմամբ», որի դեպքում տաղանդավոր արտագաղթողները վերադառնում են իրենց հայրենի երկրներ և բերում գիտելիքներ, կապիտալ և առաջադեմ շուկաների հասանելիություն (Նիալեն և Ռիդլ, 2009թ.):

Քաղաքականություն մշակողների կողմից ՕՈՒՆ ներգրավման մեկ ամբողջական ռազմավարություն մշակելու ընթացքում՝ նրանք կարող են նաև ստանձնել ակտիվ դեր սփյուռքի ներկայացուցիչներին՝ որպես պոտենցիալ ներդրողների կայացած ենթախմբի ներգրավման հարցում: Այս առնչությամբ հաջող օրինակ է տրամադրվել Շոտլանդիայից և Չիլիից (Վանդակ 13):

**Վանդակ 13. Շոտլանդիա և Չիլի. Մփյուռքի ազդեցիկ ձեռնարկատերերի ներգրավում**

*GlobalScot-ը հանդիսանում է Շոտլանդիայում տնտեսական զարգացումը խթանող սփյուռքի հենքով կառույց*

GlobalScot-ը ազդեցիկ շոտլանդացի բիզնես առաջնորդների, ձեռնարկատերերի և ղեկավարների ցանց է, որը կապված է Շոտլանդիայի հետ և ունի «շոտլանդական բիզնեսի հաջող կայացումը տեղական և համաշխարհային մակարդակներում տեսնելու ցանկություն» (GlobalScot-ի վեբկայք):

Ցանցն ապավինում է իր անդամների փորձին և ազդեցությանը՝ իր առաքելությունը որպես ներդրողների համար գրավիչ վայր Շոտլանդիայի շուկայում իրականացնելու նպատակով: GlobalScot-ի կողմից կազմակերպված միջոցառումներից են համաժողովները և միջոցառումները՝ որպես հիմնական ներդրումային վայր Շոտլանդիան խթանելու նպատակով, տեղի ձեռնարկատերերի հետ կապի մեջ լինելը՝ դեպի միջազգային շուկաներ մուտքը դյուրացնելու նպատակով և տեղական շոտլանդական բիզնեսներին մենթորություն անելը:

Այն կազմավորվել է 2001 թվականին Scottish Enterprise տեղական ներդրումային գործակալության կողմից, և 2012 թվականին ներառում էր ավելի քան 600 անդամներ 51 երկրներից: Ամենաբարձր մակարդակներում քաղաքական հովանավորչությունը առանցքային դեր է խաղում այս նախաձեռնության հաջող ընդունումն ապահովելու հարցում, քանի որ GlobalScot-ին միանալու հրավերքն ուղղակիորեն գալիս է Շոտլանդիայի վարչապետից: Ճիշտ է, այս ընտրությունը խոսում է կառավարության կողմից ցանցի գործողությունների աջակցման մասով ստանձնած ուժեղ հանձնառության մասին, սակայն այն իր անդամների համար ապահովում է մի հարթակ, որտեղ նրանք կարող են փոխանակել իրենց փորձը և առավելագույնի հասցնել իրենց աջակցությունը հայերենիքին:

Ամեն տարի GlobalScot-ը կազմակերպում է մոտ 60 ցանցային միջոցառումների: Դրանցից մինչ օրս տեղի ունեցած ամենամեծ միջոցառմանը շոտլանդական ընկերությունների ներկա ներկայացուցիչների 60%-ը վերհանեցին նոր պոտենցիալ հաճախորդների: Ըստ GlobalScot-ի տվյալների՝ սկսած իր գործունեության սկզբներից այն օգնել է Շոտլանդիային ստանալ 30 մլն. բրիտանական ֆունտ ստեռլինիզին համարժեք համախառն ավելացված արժեք:

*ChileGlobal-ը արտասահմանում ազդեցիկ չիլիցիների ցանց է, ովքեր ցանկանում են խթանել ներդրումները Չիլիում:*

ChileGlobal-ը ձևավորվել է որպես արտասահմանում բնակվող ազդեցիկ չիլիցիների ցանց: Այն կազմում է Fundación Imagen de Chile հանրային-մասնավոր հաստատության մասը, որի մանդատն է նպաստել արտասահմանում Չիլիի իմիջի բարձրացմանը:

Արտասահմանում բնակվող մեծաթիվ չիլիցիների հետ կապ պահպանելու փոխարեն ցանցը նպատակային թիրախավորում է «առաջամարտիկներին», ովքեր կարող են ազդեցություն ունենալ կորպորատիվ որոշումների կայացման վրա և

դյուրացնել ռազմավարական ներդրումների ընտրությունները: Նրանք աջակցում և ոգեշնչում են ցանցին՝ վերջինիս ի նպաստ բերելով իրենց ժամանակը, կապերը և գիտելիքները:

Սակայն ChileGlobal-ի առաքելությունը և գործունեությունն ավելին են, քան պարզապես ներդրումների ներգրավումը: Ցանցը գործում է երեք նպատակային ոլորտներում՝ բիզնեսի ստեղծում, տեխնոլոգիական փոխանցում և մարդկային կապիտալի զարգացում: Բացի այդ, Fundación Chile-ի միջոցով այն աջակցում և ձեռնարկությունների կապիտալի ֆինանսավորում է տրամադրում դրանց ստեղծման վաղ փուլերում:

Ցանցը համագործակցում է պետական այլ գերատեսչությունների հետ՝ պոտենցիալ նոր անդամների վերահանելու և միջոցառումներ, համաժողովներ և աշխատաժողովներ կազմակերպելու նպատակով: Ստեղծվելով 2005 թվականին՝ այն օգտվում է մոտ 100 անդամների փորձից, ովքեր մինչ օրս օգնել են ստեղծել ավելի քան 70 նոր ընկերություններ:

*Աղբյուրը.* Ագունիաս և Կ Նյուլանդ (2012թ.), *Սփյուռքին զարգացման գործում ներգրավելու ճանապարհային քարտեզի մշակում. ձեռնարկ քաղաքականության պատասխանատուների և պրակտիկ աշխատողների համար՝ հայրենիքում և ընդունող երկրում*, Միգրացիայի քաղաքականության ինստիտուտ, Միգրացիայի միջազգային կազմակերպություն [www.migrationpolicy.org/research/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policy-makers-and-practitioners](http://www.migrationpolicy.org/research/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policy-makers-and-practitioners), Կուզնեցով, Յ. (2011թ.), «Ինչու՞ է այդքան դժվար սփյուռքի պոտենցիալը գտնելը. Երկրների՝ արտասահմանում ունեցած տաղանդների բացահայտման նախաձեռնությունների ստեղծման քայլեր», տպագրված՝ Սփյուռքի պոտենցիալի իրացում աշխատության մեջ, Միացյալ ազգերի կազմակերպության համալսարանական մամուլ, Տոկիո, էջ՝ 171-187; ChileGlobal (2014թ.), ChileGlobal վեբ կայք [www.chileglobal.net/](http://www.chileglobal.net/), մուտքը 2014 թվականի հունիսի18-ի դրությամբ:

Սփյուռքի հետ կապ ստեղծելու և իրենց հայրենի երկրում ներդրումները դյուրացնելու ցանկության դեպքում՝ քաղաքականություն մշակողները կարող են երկու դաս քաղել: Առաջին՝ նման նախաձեռնություններում պետք է կարևորել ցանցի «որակը», այլ ոչ՝ «քանակը»: Կարևոր է ներգրավել սփյուռքի առանցքային դեմքերին, որոնք ունեն կորպորատիվ որոշումների կայացման վրա ազդելու և ղեկավարների կողմից ռազմավարարկյան ընտրություններն ուղղորդելու իշխանություն, այլ ոչ թե ձգտել զանգվածային համախմբմանը, ինչը կլինի թանկ և կտա ջանքեր դիմաց նվազագույն հատուցում (Ակինս և Ուայթ, 2011թ.): Երկրորդ՝ քաղաքական ամենավերին օղակներից հզոր աջակցությունն ապահովում է հուսալի խթաններ ցանցին միանալու համար, քանի որ սփյուռքի անդամների կողմից կառավարության հստակ հանձնառություններն ընկալվում են որպես հայրենի երկրի հետ իրենց տնտեսական կապերի աջակցման ամուր հարթակ:

## **ՓՄՁ կարողությունները կարող են աճել ՕՈւՆ տեխնոլոգիաների և գիտելիքների կողմնակի ազդեցությունների միջոցով**

ՕՈւՆ-ը կարող է նպաստել ընդունող երկրի տնտեսության զարգացմանը՝ ստեղծելով բիզնես կապեր տեղական արդյունաբերական բազայի հետ: Այն կարող է ներառել խթանող պահանջարկ տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների նկատմամբ, ինչպես նաև տեխնոլոգիաների և գիտելիքների փոխանցում տեղական մատակարարներին: Մասնավորապես, կապերը բազմազգ ընկերությունների և ընդունող երկրների ՓՄՁ-ների միջև կարող են շատ ձևեր ընդունել, որոնք նկարագրվում են հետևյալ կերպ (ՏՀԶԿ, 2009թ.):


- **Կապեր մատակարարների հետ.** սա վերաբերում է մի իրավիճակի, որի դեպքում ԲԱԸ-ները տեղական մատակարարներից գնում են բաղադրիչներ, նյութեր կամ ծառայություններ: Այս կապերը կարող են տատանվել անկախ գործընկերների միջև առանձին առևտրային գործարքներից մինչև ընկերությունների միջև երկարատև հարաբերությունները: Դրանք կարող են առավելություններ տալ տեղական ՓՄՁ-ներին, որոնք շահում են եկամտի աճից և խոշոր հաճախորդներին իրենց արտադրանքի վաճառքից, և կարող են դառնալ ավելի արդյունավետ գիտելիքների, հմտությունների և կառավարման գործելակերպի կողմնակի ազդեցությունների արդյունքում:
- **Կապեր հաճախորդների հետ.** այս դեպքում ԲԱԸ-ները ստեղծում են կապեր արժեքի շղթային ստորին օղակների ընկերությունների հետ: Օրինակ՝ նրանք կարող են աուխտրս անել իրենց բրենդային անվանումներով ապրանքները՝ նոր շուկաներում ընդգրկվելու նպատակով, միաժամանակ նվազագույնի հասցնելով ռիսկերը և ներդրումները (օրինակ՝ տեղական մակարդակում գործող վստահագրերի միջոցով): Ավելին, ոլորտի գնորդներին մեքենաներ, սարքավորումներ կամ արտադրական միջոցներ վաճառելու դեպքում՝ ԲԱԸ-ները կարող են ՓՄՁ-ներին առաջարկել վաճառքին հաջորդող մեծաքանակ ծառայություններ:
- **Կապեր տեխնոլոգիական գործընկերների հետ.** այս կապերը ներառում են համատեղ ձեռնարկությունները, լիցենզավորման

պայմանագրերը և ռազմավարական դաշինքները ԲԱԸ-ների և տեղական գործընկերների միջև: Նման կառուցվածքի դեպքում ՓՄՁ-ներին ուղղակիորեն հասանելի են դառնում տեխնոլոգիական և կառավարչական գիտելիքները և հմտությունները, իսկ ԲԱԸ-ները կարողանում են շահել տեղական շուկաներ և հաստատություններ իրենց գործընկերների մուտք ունենալու հանգամանքից:

- **Այլ կապեր** կարող են ստեղծվել անուղղակիորեն՝ ընդունող երկիր օտարերկրյա ձեռնարկությունների մուտքից հետո: Սա կարող է ազդել մրցակիցների վրա, որոնք շուկայական ուժերի կողմից մղվում են ընդլայնելու իրենց արտադրությունը, բաշխումը և մարքեթինգը, և մարդկային կապիտալի ընդհանուր մակարդակի վրա, քանի որ վերապատրաստվելով ԲԱԸ-ների կողմից տեղական աշխատողները կարող են ժամանակի ընթացքում տեղափոխվել տնտեսության այլ ոլորտներ:

ԲԱԸ-ների և տեղական ՓՄՁ-ների միջև հարաբերությունները կարող են նաև տարբերակվել ըստ տնտեսությունում արժեք ավելացնելու իրենց ներուժի և դրանց իրականացման համալիրության (Գծապատկեր 8): Բիզնես կապերի հիմնական ձևերը ենթադրում են նոր բիզնեսների պարզ հնարավորություններ և պահանջում են շուկայի խաղացողների միջև համեմատաբար փոքր համակարգում: Սակայն տնտեսությանը արժեք ավելացնելու ԲԱԸ-ՓՄՁ կապի պոտենցիալի աճին զուգահեռ՝ աճում է նաև դրա իրականացման բարդությունը: Բազմաչափ կապերն անշուշտ կարող են պահանջել համատեղ ներդրում և ռիսկերի ստանձնում, ինչպես նաև երրորդ կողմերի՝ համալսարանների և հետազոտական կենտրոնների ներգրավում Հ&Ձ միջոցառումներում:

**Գծապատկեր 8. ՕՈՒՆ-ՓՄՁ բիզնես կապերի համալիրությունը և ավելացված արժեքը**



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն:

**Բիզնես կապերի ստեղծման ծրագրերի հաջողված օրինակներ**

ԲԱՇ-ների և ՓՄՁ-ների միջև բիզնես կապերը պետք է ստեղծվեն որպես շուկայական ուժերի արդյունք: Սակայն նման կապերը կարող են և չկայանալ՝ ելնելով մի շարք պատճառներից. օտարերկրյա ընկերությունները կարող են տեղյակ չլինել տեղական մատակարարների առկայության մասին, կամ ՓՄՁ կարողությունները կարող են օտարերկրյա ներդրողների պահանջներից ավելի ցածր լինել: Նման դեպքերում հանրային մարմիններն ունեն ՓՄՁ-ների և ԲԱՇ-ների միջև կապերի ստեղծումը և խորացումը դյուրացնելու հնարավորություններ (ՏՀԶԿ, 2009թ.): Մինգապուրում Տեղական արտադրության արդիականացման ծրագիրը (ՏԱՄ/ՎԻՍ) հաջողված օրինակներից է (Վանդակ 14):



#### **Վանդակ 14. ՏԱԱԾ/ԼԻՍԲ. Մինգապուրի բիզնես կապերի ստեղծման ծրագիր**

Մինգապուրի զարգացման պատմությունն աչքի է ընկնում այս քաղաք պետությունում օտարերկրյա ձեռնարկությունների գործունեության ընդլայնմամբ: Այժմ ԲԱԸ-ներին բաժին է ընկնում արտադրվող արտադրանքի ավելի քան երկու երրորդը, իսկ վերջին 25 տարիների ընթացքում ՕՈՒՆ-ի միջոցով ներդրվել է ընդհանուր ներքին ներդրումների ավելի քան 50%-ը:

Դեռևս 1961 թվականին ստեղծվեց Տնտեսական զարգացման խորհուրդը որպես տարբեր նախարարությունների համար հարթակ՝ ռազմավարական ոլորտներում ՕՈՒՆ-ի ներհոսքերի ավելացման նպատակով: Սկզբնական նպատակն էր աշխատատար արտադրությունը, որը հետագայում տեղափոխվեց դեպի ավելի բարձր ավելացված արժեքի ոլորտներ, ինչպիսիք են քիմիական արդյունաբերությունը և էլեկտրոնիկան, իսկ ավելի վերջերս՝ դեպի ապրանքների մշակման, կենսաբժշկական և Հ&Ձ ոլորտներ:

Մինգապուրում օտարերկրյա ներդրման վաղ և զգալի ներկայությունը առաջացրեց մեծ պահանջարկ տեղական գործընկերների նկատմամբ: Ներդրումային բարենպաստ միջավայրը՝ գույակցված կրթված աշխատուժի և ֆինանսական աջակցության ու զարգացման ծրագրերի միջոցով հզոր ՓՄՁ ոլորտի զարգացման կամքով հնարավորություն տվեցին բազմազգ ընկերություններին բնականոն ձևով ստեղծել ամուր կապեր տեղական ՓՄՁ-ների հետ:

Այնուհանդերձ, հետագա խթանումն իրականացվեց կառավարության քաղաքականությունների միջոցով, որոնք ակտիվորեն նպատակաուղղված էին ՕՈՒՆ-ՓՄՁ կապերին: Այս ոլորտում առաջատար նախաձեռնությունը եղավ Տեղական արտադրության արդիականացման ծրագիրը (ՏԱԱԾ/ԼԻՍԲ): Այս ծրագիրը ստեղծվել է 1986 թ. տեղի մատակարարների խմբին հզորացնելու և դեպի օտարերկրյա մասնաճյուղեր ընդլայնվելու նպատակով՝ դրանց արդյունավետությունը, հուսալիությունը և մրցունակությունը մեծացնելու միջոցով:

ՏԱԱԾ-ը աջակցում է ԲԱԸ-ներից դեպքի տեղական ՓՄՁ-ներ տեխնոլոգիաների, մարքեթինգի և գործարարության մասին գիտելիքների փոխանցմանը: Նրա միջոցառումներն իրականացվում են կազմակերպական և ֆինանսական աջակցության միջոցով, օրինակ՝ տեղական մատակարար ձեռնարկություններ գործուղված ԲԱԸ-ի փորձագետների աշխատավարձում ներդրում կատարելու կամ ուղղակիորեն հոգուտ ՓՄՁ-ների աշխատաժողովներ կազմակերպելու միջոցով:

ԲԱՀ-ներին խրախուսում են իրենց արժեքի շղթա ընդունել ՓՄՁ-ներին՝ եռափուլ մոտեցման միջոցով.

- Փուլ 1. ՓՄՁ-ների օպերացիոն արդյունավետության բարելավում, ինչը նրանց դարձնում է ԲԱԸ-ների համար կարողունակ գործընկերներ:
- Փուլ 2. Նոր արտադրանքի և գործընթացների ներմուծում և փոխանցում ԲԱԸ-ներից՝ ՓՄՁ-ներին:

- Փուլ 3. Համատեղ արտադրանքի կամ գործընթացի մասով հետազոտություն և զարգացում ԲԱԸ-ի և ՓՄՁ-ների միջև:

Այս սխեմայի կիրառումը բերեց ճանաչելի հաջողության՝ ներգրավելով կարևոր օտարերկրյա ձեռնարկությունների, այդ թվում՝ Hewlett Packard-ին, Matsushita-ին և Honeywell-ին: Մինչև 1999 թ. 30 ԲԱԸ-ներ և 670 տեղական մատակարարներ մասնակցում էին այս ծրագրին: Մասնակցող ընկերություններում կատարվող ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մեծ ընկերությունների հետ գործընկերության առաջին տարիներին մատակարարները բարելավել են իրենց միջին արտադրողականությունը 17%-ով:

*Աղբյուրը.* ՏՀԶԿ (2013թ), Կենտրոնական Ասիայում ներդրումների և աշխատատեղերի ստեղծման իրթանում բիզնես կապերի ստեղծման ծրագրերի միջոցով, Մասնավոր հատվածի զարգացման ձեռնարկ, ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության ծրագիր, ՏՀԶԿ, Փարիզ, [www.oecd.org/investment/psd/BusinessLinkageProgrammes.pdf](http://www.oecd.org/investment/psd/BusinessLinkageProgrammes.pdf)), UNCTAD (2014թ.) Համաշխարհային ներդրումների մասին զեկույց, Ներդրումներ ԿԶՆ-ի մեջ. գործողությունների ծրագիր, Միացյալ ազգերի կազմակերպություն; UNCTAD (2011թ.) Զարգացման նպատակով կատարվող ներդրումների լավագույն գործելակերպ. Բնչպես ստեղծել ՕՈՒՆ-ՓՄՁ կապեր և օգտվել դրանցից. Մալազիայի և Մինգապուրի փորձը, Ներդրումային խորհրդատվության շարք, Շարք Բ, Թիվ 4, Միացյալ ազգերի կազմակերպություն, Նյու Յորք և Ժնև:


**ԳԼՈՒԽ 3. ԲԱՅԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այս գլուխը ներկայացնում է միջազգային պատշաճ գործելակերպերի և Հայաստանի ներկա վիճակի միջև եղած բացերի հակիրճ վերլուծությունը: Այն նաև պարունակում է Հայաստանի քաղաքականություն մշակողներին ուղղված ձևակերպված քաղաքականության առաջարկություններ շինարարական նյութերի ոլորտում առկա մարտահրավերներին արձագանքելու և օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգավելու համար: Մասնավորապես առաջարկվում է՝ 1) ստեղծել պահանջարկ Հայաստանի շինարարական նյութերի նկատմամբ՝ բարելավված կարգավորումների և շենքերում էներգետիկ արդյունավետության մասով իրազեկման բարձրացման, շինարարական ոլորտի ընթացակարգերի պարզեցման, արտահանման վերաբերյալ տեղեկատվության ավելացման և խթանման միջոցով, 2) ՕՈւՆ-ի ներգրավման բարելավում ոլորտային ներդրումների խթանման կատարելագործված նախաձեռնությունների և սփյուռքի առանցքային դեմքերին ավելի շատ ուշադրության կենտրոնում պահելու միջոցով, և 3) ավելացնել ՓՄՁ կարողությունները՝ շինարարական նյութերի ոլորտում ՕՈւՆ-ՓՄՁ կապերի ստեղծման միջոցով:

Մրցունակությունը բարձրացնելու համար Հայաստանը կարող է միջոցներ ձեռնարկել բազմազգ ընկերություններին գրավելու և դրանք տեղական ՓՄՁ-ների հետ կապակցելու համար: Շինարարության ոլորտի ավելի լայն արժեքի շղթայում շինարարական նյութերի ոլորտը կարող է մեծապես շահել ՕՈՆԼ-ի ծավալի աճից՝ լիարժեքորեն ներգրավվելով երկրի մրցակցային առավելությունից բխող ներուժում:

Գլուխ 1-ում նկարագրվել են այն հիմնական մարտահրավերները, որոնք ունի Հայաստանը շինարարական նյութերի ոլորտում բազմազգ ընկերությունների ներգրավման և այդ ոլորտը զարգացնելու հարցում (տե՛ս Գծապատկեր 9-ը): Ամբողջ տնտեսության մասշտաբով իրականացվող ընթացիկ բարեփոխումները պետք է շարունակեն բարելավել բիզնես միջավայրը և ենթակառուցվածքային ապահովումը: Ոլորտին ներհատուկ խնդիրների հաղթահարման նպատակով այս գլխում Հայաստանի քաղաքականության պատասխանատուներին մենք կառաջարկենք առկա քաղաքականությունների կարևոր բացերի կամրջմանը միտված գործողությունների մի համապարփակ համալիր: Այս առաջարկությունները հիմնվում են Գլուխ 1-ում վերհանված մարտահրավերների և Գլուխ 2-ում ներկայացված միջազգային պատշաճ գործելակերպերի վրա: Դրանց հաջորդում է այդ առաջարկությունների իրականացման դյուրացմանը միտված գործողությունների ծրագիր:

## Գծապատկեր 9. Առաջարկություններ. ընդհանուր ակնարկ



### Ստեղծել Հայաստանում արտադրվող շինարարարական նյութերի պահանջարկ

Քաղաքականության պատասխանատուները պետք է բարձրացնեն Հայաստանի շինարարական նյութերի ներքին և արտաքին պահանջարկը՝ բարենպաստ կարգավորող միջավայր ստեղծելու, սպառողներին անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու և շինարարության ոլորտի խոչընդոտները վերացնելու միջոցով: Քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի բարձրարժեք ապրանքների շուկաներին, որոնք կարող են ապահովել բավականին մեծ ներքին պահանջարկ, ինչպես նաև՝ ավելի հեշտությամբ արտահանվել: Այդպիսի արտադրանքի օրինակներից մեկը էներգախնայող շինարարական նյութերն են, սակայն քաղաքականության պատասխանատուները պետք է իրենց ուշադրության կենտրոնում պահեն նաև բարձրարժեք ապրանքները:

***Գնահատում. Էներգետիկ արդյունավետության ոչ հստակ կիրարկում, շինարարության թույլտվությունների ձեռքբերման դժվարություն և արտահանման սահմանափակումներ***

- ՄԱԶԾ-ԳԷՀ-ի «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» նախաձեռնությունն իրենից ներկայացնում է Հայաստանում էլեկտրական և ջերմային էներգիայի սպառման նվազեցմանն ուղղված մի համապարփակ ծրագիր: Չնայած առաջընթաց է գրանցվել էներգետիկ արդյունավետության պահանջների և շինությունների էներգետիկ անձնագրերի, տեխնիկական կանոնակարգերի, կողերի և ստանդարտների մշակման գործում, սակայն դեռևս չեն նախանշվել դրանց կիրարկման հզոր մեխանիզմները: Ավելին, պետք է իրականացնել միջոցառումներ էներգետիկ արդյունավետության իրազեկման բարձրացման ուղղությամբ 2015 թվականից հետո (որն այդ նախաձեռնության վերջին տարին է) շինարարություն իրականացնելիս՝ հիմնվելով ծրագրի իրազեկման բարձրացման բարոգարչավի վրա (ՄԱԶԾ և ԳԷՀ, 2013թ.):
- Կառավարությունը վերջերս վերանայել է քաղաքաշինությանը վերաբերող օրենսդրությունը: Այդ վերանայման արդյունքում՝ սկսած 2011 թվականից զգալիորեն կրճատվել են ընթացակարգերի քանակը և ծախսերը, ինչպես նաև դրանք ավարտին հասցնելու համար պահանջվող ժամանակը: Միևնույն ժամանակ, դիմումների ձևակերպման էլեկտրոնային համակարգը ավելի թափանցիկ է դարձրել այս ընթացակարգերը: Սակայն շինարարական ընկերությունների մասով գործող կարգավորումն ունի լրացուցիչ բարելավման տեղ: Հայաստանը ցածր դիրք է գրավում (79-րդ) Համաշխարհային Բանկի գործարարությամբ զբաղվելու (Doing Business) դյուրինության «շինարարության թույլտվությունների գործընթացի» ցուցանիշով: Հարկ է վերհանել հնարավորություններ շինարարության թույլտվությունների ստացման համար պահանջվող ընթացակարգերի քանակը (որոնք ներկայումս 21-ն են) նվազեցնելու և այս ոլորտում բյուրոկրատական պրոցեդուրաները օպտիմալացնելու ուղղությամբ:

- Օտարերկրյա շուկաներ մուտքը հեշտացնելու համար ՀՀ կառավարությունն արդեն իսկ քայլեր է ձեռնարկում ներկայիս «կոշտ» ենթակառուցվածքները բարելավելու ուղղությամբ, որոնց շարքում է Ասիական զարգացման բանկի կողմից համաֆինանսավորվող՝ երկրի հյուսիսային և հարավային սահմաններն իրար կապող արագընթաց ավտոճանապարհի կառուցման հիմնական ծրագիրը: Հայաստանը արդեն իսկ ունի գործող ավտոճանապարհային կապեր Վրաստանի Փոթիի և Բաթումիի նավահանգիստների հետ, սակայն Հայաստանը նախատեսում է շարունակել աշխատանքները Վրաստանի միջով Ռուսաստանի հետ ավտոճանապարհային ուղղակի հաղորդակցությունը վերականգնելու ուղղությամբ (ՀՀ կառավարություն, 2014թ.): Ավելին Հայաստան-Իրան նոր ավտոճանապարհը պլանավորման առաջանցիկ փուլում է. այդ ճանապարհը կարող է լինել Պարսից ծոցը Կովկասի միջով Սև ծովին կապակցող ուղին (Armenite, 2014թ.):
- Մակայն Հայաստանում դեռևս բացակայում է ուժեղ ինստիտուցիոնալ կարողությունը՝ արտահանող ընկերություններին «փափուկ» նախաձեռնությունների միջոցով աջակցելու համար, ինչպիսիք են՝ արտադրությունը և արտաքին շուկաների վերաբերյալ տեղեկատվության տարածումը, Հայաստանի ապրանքների մարքեթինգը և արտահանման հմտությունների մասով վերապատրաստումը:

*Գործողություններ ներքին պահանջարկն ընդլայնելու համար*

***Գործողություն 1. Բարելավել կարգավորումը շինարարության մեջ էներգետիկ արդյունավետության պահանջները կիրարկելու նպատակով***

Հայաստանի ներկա բնակարանային ֆոնդը վերանորոգման կարիք ունի: Ըստ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) գնահատումների՝ այդ բնակֆոնդի ամենամեծ մասնաբաժինը 30–60 տարվա պատմություն ունի և շատ վատ է մեկուսացված: Որպես այդպիսին՝ երկրի էներգախնայողության պոտենցիալի 40%-ը կարելի է վերագրել շենքերին (ՎԶԵԲ, 2013թ.):

Շինարարության ոլորտում էներգետիկ արդյունավետության մասով արդյունավետ կարգավորումը կօգնի Հայաստանին հասնել իր էներգախնայողության թիրախներին՝ միաժամանակ խթանելով մեկուսացման և այլ բարձրարժեք նյութերի նկատմամբ պահանջարկը: Հիմք ընդունելով ՄԷԳ-ի տրամադրած ուղենիշները (տե՛ս Գլուխ 2, Վանդակ 6) և հիմնվելով ՄԱԶԾ-ի մշակված տեխնիկական կանոնակարգերի նախագծերի վրա (տե՛ս վերը)՝ շինարարության ոլորտում էներգետիկ արդյունավետության բնագավառում գործող կարգավորումը բարելավելու նպատակով հարկ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- **Մահմանել նորմեր.** ընդունել էներգետիկ արդյունավետության պարտադիր պահանջներ և անձնագրեր՝ որպես քաղաքաշինության մասին օրենքի բաղկացուցիչ մաս:
- **Աջակցել կիրարկմանը.** համակարգել կիրարկման մասով գործառույթները կենտրոնական և տեղական մակարդակներում՝ համապատասխան լիազոր մարմիններին՝ նախարարություններ, տեղական իշխանություններ և էներգետիկ հարցերով տեսչական մարմիններ, վերապահելով գործառույթներ:
- **Կատարել պահանջների կատարման մոնիթորինգ.** Հանրության համար մատչելի դարձնել համապատասխանության ընթացակարգերը, ստուգել համապատասխանությունը շինարարության և վերանորոգման բոլոր փուլերում, և կիրառել համապատասխան պատժամիջոցներ (օրինակ՝ տուգանքներ):
- **Մոնիթորինգը օգտագործել կիրարկումը բարելավելու նպատակով.** գնահատել համապատասխանության միտումները տեղական մակարդակում և համապատասխան ճշգրտումներ կատարել տեսչական ստուգումներում:

Որպես առաջին քայլ՝ ՀՀ կառավարությունը կարող է վերլուծել ՄԱԶԾ-ի կողմից մշակված տեխնիկական կանոնակարգերը և որդեգրել դրանք շինությունների կառուցումը կարգավորող օրենսդրական դաշտում: Այնուհետ, ՀՀ կառավարությունը կարող է առաջնորդող դեր կատարել Հայաստանում շինությունները «կանաչ» դարձնելու գործում՝



հաստատելով և որդեգրելով իր ուղղակի վերահսկողության տակ գտնվող հանրային շինություններում էներգախնայող մեթոդներ:

***Գործողություն 2. Բարձրացնել իրազեկվածությունը շինարարության մեջ էներգետիկ արդյունավետության օգուտների վերաբերյալ***

Էներգախնայող նյութերի շուկան պետք է ուղղորդվի պահանջարկով: Սակայն, թերևս, և՛ սպառողները, և՛ ՓՄՁ-ները քիչ են տեղեկացված էներգետիկ արդյունավետության և այլ ինովացիոն արտադրատեսակների օգուտների մասին:

Էներգետիկ արդյունավետ նյութերի ծախսերի մասով կա մի ողջամիտ տնտեսական առավելություն, որի դեպքում բնակելի տան հիմնանորոգումից հետո ստացված էներգախնայողությունը տաս տարի հետո փոխհատուցում է սկզբնական ներդրումները (ՎՁԵԲ, 2013թ.): Բարձրացնելով սպառողների իրազեկվածությունը էլեկտրաէներգիայի կրճատված սպառման միջոցով խնայված գումարների մասին՝ պետք է նպաստել էներգետիկ արդյունավետ նյութերի պահանջարկի ստեղծմանը: Միննույն ժամանակ, շինարարական նյութերի ոլորտում գործող ՓՄՁ-ների կողմից բարձրարժեք նյութերի որդեգրումը կօգնի նրանց դառնալ պոտենցիալ աճ գրանցող ներքին շուկայի մի մաս և առավել հեշտորեն մուտք գործել միջազգային շուկա: Հետևյալ քայլերի միջոցով կարելի է խթանել շինարարության ոլորտում էներգետիկ արդյունավետության մասով իրազեկվածությունը.

- **Ձևավորել կանոնավոր հանրային կապեր և իրականացնել գովազդային արշավներ** ինտերնետային տիրույթում, ազգային և տեղական լրատվամիջոցներում՝ էներգետիկ արդյունավետ շենքերի կառուցման և ամրացման օգուտների մասին ուղերձները փոխանցելու նպատակով:
- **Ստեղծել գրասենյակ և վեբ կայք** էներգախնայողական վերանորոգման մասին **հանրությանն անվճար խորհրդատվություն տրամադրելու նպատակով:**
- **Հիմնել «էներգետիկ արդյունավետությունը շենքերում» թեմայով ամենամյա ֆորում**՝ արժեքի շղթայի բոլոր շահառուների

մասնակցությամբ, և ստեղծել էներգետիկ արդյունավետ շենքերի ամենաժամանակակից մեթոդների ցուցադրավայր:

Շինարարության մեջ էներգետիկ արդյունավետության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման արշավների սկզբնական թիրախ կարող են լինել կոմերցիոն նախագծային ընկերությունները: Նրանք, պետք է որ, ավելի պատրաստ լինեն նորարական նյութերի մասով սկզբնական ներդրումներ կատարելու, քանի որ նրանց ֆինանսական միջոցները, ինչպես և ակնկալվում է, ավելին են քան միջին քաղաքացուներ:

### ***Գործողություն 3. Ռացիոնալացնել շինարարության թույլտվությունների ստացման ընթացակարգը***

Ինչպես նշել են շինարարական ընկերությունները՝ բյուրոկրատիան իրենց գործունեության ամենամեծ խոչընդոտներից մեկն է: Չնայած շինարարական թույլտվություններին առնչվող կանոնակարգերում կատարված վերջին լրամշակումներին՝ կարելի է հետագա միջոցառումներ ևս ձեռնարկել:

Շինարարության թույլտվությունների համար դիմելու գործընթացի օպտիմալացումը և այն այլ երկրների լավագույն փորձին համապատասխանեցումը մի շարք օգուտներ կբերի Հայաստանի շինարարական ընկերություններին, որոնք վերջին հաշվով կհանգեցնեն շինարարական նյութերի ավելի մեծ պահանջարկի:

Այն ներառում է դիմելու գործընթացի բարդության նվազեցում և պատասխանի վերաբերյալ անորոշության նվազեցում, սեփական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում և թույլտվությունների ստացման գործարքի ավելի փոքր ծախս: Շինարարական ընկերությունների համար ընթացակարգերի օպտիմալացմանը զուգահեռ՝ ընկերությունները արժեքի շղթայով վեր են բարձրանում և արդյունքում՝ շահում են իրենց ապրանքների և ծառայությունների նկատմամբ աճող պահանջարկից: Ավելին, ավելի շատ շինարարական ընկերություններ ոչ ֆորմալ սեկտորից կանցնեն ֆորմալ սեկտոր, քանի որ ծախսերը կրճատված կլինեն: Մենք առաջարկում ենք հետևյալ քայլերը.

- **Վերհանել** շինարարության թույլտվությունների ստացման գործընթացի **խոչընդոտները**:
- **Նվազեցնել** շինարարության թույլտվությունների ստացման համար պահանջվող **ընթացակարգերի ընդհանուր քանակը**:
- **Նախանշել** թույլտվությունների տրամադրման **գործընթացը մեկ պատուհանի սկզբունքով կարգավորելու հնարավորությունները**:
- **Որդեգրել տեսչական ստուգումների անցկացման համագործակցային մոտեցում՝** համայնքապետարանների և ՀՀ քաղաքաշինության նախարարության միջև:

*Գործողություններ արտաքին պահանջարկն ընդլայնելու համար*

**Գործողություն 4. Բարելավել արտահանման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և արտահանման խթանման աշխատանքները**

Ցածրորակ ենթակառուցվածքը մեծացնում է տրանսպորտային ծախսերը, որն էլ, իր հերթին, ապրանքի արտահանման դեպքում նվազեցնում է շահույթի մարժան: Բացի այդ, Հայաստանի ՓՄՁ-ներն ունեն արտահանման մասով սահմանափակ հմտություններ, այդ թվում՝ գիտելիքների պակաս արտաքին շուկաների և արտասահմանում ապրանքների գովազդման եղանակների մասին:

Ներկայումս Հայաստանում աշխատանքներ են իրականացվում տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավման համար, ինչն արվում է գլխավորապես հյուսիս-հարավ մայրուղու և երկրի հարավում՝ դեպի Իրան տանող նոր երկաթուղու կառուցման միջոցով: Հարկ է, որ կառավարությունը շարունակական ուշադրություն դարձնի այս քայլերին, որոնց նպատակը այլ շուկաներ բեռնափոխադրումների ծավալը մեծացնելն է, հատկապես եթե հաշվի առնենք Հայաստանից մոտակա սևծովյա նավահանգիստ՝ այնտեղից էլ եվրոպական և արևմտյան շուկաներ ապրանքներն էժան տեղափոխելու ուղիներ ունենալու հանգամանքը:

Միննույն ժամանակ, Հայաստանի արտահանման ազդեցության գոտին և հնարավորությունները զարգացնելու համար վճռորոշ է արտաքին պահանջարկը հասկանալը, առավել ևս այնպիսի ոլորտի պարագայում, ինչպիսին շինարարական նյութերինն է, տրանսպորտային ծախսերի տարբերություններով պայմանավորված՝ սահմանափակվում է այն աշխարհագրական տարածությունը, որտեղ հնարավոր է շահավետորեն իրացնել տարբեր տեսակի ապրանքներ: Այս առումով հարկ է դիտարկել Եվրասիական տնտեսական միությանը ապագա անդամակցության հարցը, քանի որ անդամ երկրները միասնաբար օգտվելու են մեկ ընդհանուր մաքսային տարածքից:

Ստորև բերված են շինարարության ոլորտի հայաստանյան արտադրողների մուտքը արտաքին շուկաներ դուրսացնելու քայլերը: Դրանք, որպես կանոն, իրականացվում են արտահանման խթանման գործակալությունների կողմից, որոնց արտերկրյա շուկաներում աջակցում են առևտրի ազգային պալատները (այսինքն՝ Առևտրի ամերիկյան պալատ Հայաստանում, Բրիտանիայի բիզնես պալատ Հայաստանում, Ավստրալիայի առևտրային պալատ Հայաստանում):

- **Շինարարական նյութերի ոլորտում վեր հանել խոստումնալից ենթաոլորտներ/ապրանքներ**, որոնք կարող են շահավետորեն արտահանվել:
- **Հավաքագրել և տարածել արտաքին շուկայի վերաբերյալ գիտելիքներ**՝ թիրախային շուկաներում ոլորտային հետազոտություն կատարելու և ներմուծման-արտահանման վերաբերյալ տվյալների բազա ստեղծելու միջոցով:
- **Համաչափությամբ ընդլայնել մարքեթինգային գործունեությունը**՝ միջազգային տոնավաճառների, գնորդ-վաճառող հանդիպումների և շուկայի խթանման ծրագրերի միջոցով:
- **Տրամադրել արտահանման ուղղվածությամբ վերապատրաստման դասընթացներ ՓՄՁ-ներին**՝ օգտագործելով կյանքից վերցված դեպքեր և առցանց նյութեր՝ ՓՄՁ-ներին արտահանման գործունեության մեջ ներգրավվելու հարցում աջակցելու նպատակով:

Սկզբնական գործողությունները պետք է ուղղված լինեն Հայաստանում արդեն իսկ արտադրվող ապրանքների նկատմամբ առկա արտաքին պահանջարկը հասկանալուն, ապագայում արտահանման հնարավորությունների ստեղծում՝ ներգրավելով խոստումնալից ենթաուղորտներ և արտադրատեսակներ:

**ՕՈՆ-ի ներգրավում. ներդրումների խթանման նորացված մոտեցում և սփյուռքի թիրախավորում**

ՕՈՆ-ի ներգրավումը Հայաստանի շինարարական նյութերի ոլորտի ներուժը բացելու բանալին է: Բազմազգ ընկերությունները կարող են առաջարկել ժամանակակից սարքավորումներ և տեխնոլոգիաներ՝ զարգացնելու այն բարձրարժեք ապրանքները, որոնց կարիքն ունի այդ ոլորտը: Ուստի, ի լրումն համընդհանուր դաշտի պայմանները բարելավելու շարունակական ջանքերի՝ Հայաստանի կառավարությունը կարող է ակտիվ քայլեր ձեռնարկել ՕՈՆ-ի ներհոսքերը շինարարական նյութերի ոլորտում ավելացնելու ուղղությամբ՝ վերանայելով ներդրումների խթանման մասով իր ներկա գործունեությունը և կապ պահպանելով արտասահմանում բնակվող հայերի մեծ համայնքի հետ:

***Գնահատում. Հարկ է իրականացնել ներդրումների խթանման ավելի լայնածավալ աշխատանքներ***

- Ներդրումների խթանման ընթացիկ աշխատանքներից են որոշ ոլորտային նախաձեռնությունները: Բայցևայնպես, ոլորտային մոտեցումը կարելի է էլ ավելի հզորացնել՝ ոլորտում առկա փորձագիտական կարողություններին տալով կազմակերպական կառուցվածք՝ ներդրումների խթանման պետական մարմնի տեսքով, սահմանելով հստակ թիրախներ և ըստ անհրաժեշտության փոխգործակցելով հիմնական պոտենցիալ ներդրողների հետ: Այս գեկույցը գրելու պահին՝ ներդրումների խթանման գործառույթի բարեփոխումը քննարկվում էր ՀՀ կառավարության կողմից. քննարկման մասնակիցներն են Զարգացման հայկական գործակալությունը և Ներդրումների զարգացմանը հիմնադրամը, սակայն այս թեմայի վերաբերյալ որևէ պաշտոնական հաղորդում դեռ չի արվել:

- Հայաստանն ունի մեծ սփյուռք. ըստ գնահատականների՝ մոտ 6-7 մլն. հայ է բնակվում արտասահմանում: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պետք է խթանել սփյուռքին՝ որպես ՕՈՆԼ-ի աղբյուր, քանի որ այն խաղացել է պատմականորեն կարևոր դեր Հայաստանի զարգացման մեջ (ԻՎԻ Քոնսալթինգ, 2006թ.): Սփյուռքի ներկայացուցիչների ներգրավման նախաձեռնություններն արդեն առկա են ինչպես համաշխարհային, այնպես էլ՝ երկրի մակարդակներում (օրինակ՝ Հայաստան համահայկական հիմնադրամը, Հայաստանում ամերիկյան առևտրի պալատը): Կառավարության մակարդակով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը համագործակցում է ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության սփյուռքի վարչության հետ: Այն մասնակցում է Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող միջոցառումներին և բիզնես ֆորումներին, և փորձում է ներգրավել արտասահմանում բնակվող հայերին համաժողովներ և տոնավաճառներ կազմակերպելիս: Բացի այդ, զարգացման փուլում է սփյուռքի ազդեցիկ ներկայացուցիչների ցանցի ստեղծման աշխատանքները: Մակայն դեռևս չկա համապարփակ պետական կառույց ներդրումների նպատակով սփյուռքին թիրախավորելու համար:


***Գործողություն 1. Զարգացնել ներդրումների խթանման աշխատանքները՝ կիրառելով ավելի կայացած ոլորտային մոտեցում և իրականացնելով իրավիճակից բխող միջոցառումներ***

Հետճգնաժամային տարիներին Հայաստանում ՕՈՆԼ ներհոսքի մակարդակը կտրուկ անկում ապրեց: Այս միտումն անհրաժեշտ է ետ շրջել և նոր ներդրողների գրավելու համար գործի դնել խթանման նպատակային միջոցառումներ:

Ներդրումների խթանման ոլորտային մոտեցումը հաստատել է իր առավել արդյունավետությունը՝ ընդհանուր բնույթի «հորիզոնական» նախաձեռնությունների համեմատ: Այն դեպքում, երբ ներդրումների խթանման միջոցառումները կազմակերպվում են տնտեսության առանձին ոլորտներին ուղղված ռազմավարությունների, նպատակների և կարողությունների միջոցով, այս ոլորտները ստանում են երկու անգամ

ավելի շատ ՕՈՆՆ, քան չթիրախավորվածները: Միջազգային պատշաճ գործելակերպը ցույց է տալիս, որ ներդրումները խթանող գործակալությունները պետք է գործեն մեկ պատուհանի սկզբունքով՝ տրամադրելով աջակցություն և տեղեկատվություն ներդրումային ցիկլի բոլոր փուլերում: Այնուհետ, կառավարությունները դրանք կարող են համալրել իրականացնելով իրավիճակային նպատակային նախաձեռնություններ՝ ուղղված կոնկրետ պոտենցիալ ներդրողների: Հայաստանում իրականացվող՝ ներդրումների խթանման ընդհանուր աշխատանքները կարելի է կատարելագործել՝ հիմք ընդունելով տեղական զարգացման ոլորտի գործընկերների հետ նախկինում կատարված աշխատանքները (ԳՄՀՀ և այլոք, 2013թ.) (տե՛ս Գծապատկեր 10-ը):

**Գծապատկեր 10. Առաջարկվող ներդրումների խթանման միջոցառումներ Հայաստանում ՕՈՒՆ ներհոսքերն ավելացնելու նպատակով**



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

- **Հզորացնել ոլորտային ռազմավարությունը.** ընտրել գերակա ոլորտներ, և սահմանել միջնաժամկետ նպատակներ և տարեկան թիրախներ յուրաքանչյուր ոլորտի ՕՈՒՆ ներհոսքերի համար: Վերհանել առանձին ներդրումային հնարավորությունները և պատրաստել հիմնավորող նյութեր դրանց խթանումը դյուրացնելու նպատակով: Այս ոլորտում միջոցառումների արագ

մեկնարկի համար մենք առաջարկում ենք շինարարական նյութերի ոլորտը որպես առաջնային գերակայություն:

- **Հարմարեցնել ներդրումներ խրախուսող կազմակերպությունները՝ ընտրված ռազմավարությունն իրագործելու նպատակով.** ներդրումները խրախուսող գործակալության կառուցվածքում ստեղծել չորս հիմնական ստորաբաժանումներ. նոր ներդրումների ներգրավում, գործող ներդրողների մասով ծառայություններ, սփյուռքի գործունեություն և հանրության հետ կապեր/հաղորդակցություն: Հաջորդիվ զարգացնել ներքին մասնավոր ոլորտի մասով հմտությունները՝ օտարերկրյա ներդրողներին արդյունավետորեն սպասարկելու համար. դրանք են՝ հետազոտություն, ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն, ներկայացում, մարքեթինգ և առևտրային հմտություններ:
- **Ընտրված հեռանկարային ներդրողների համար մշակել ժամանակավոր խրախուսիչ միջոցառումներ.** մշակել ժամանակավոր խթաններ, որոնք կարելի կլինի առաջարկել պոտենցիալ ռազմավարական ներդրողներին (օրինակ՝ այն ներդրողներին, ովքեր առաջարկում են նվազագույնը 10 մլն. դոլարի ներդրում կամ զբաղվածություն 200+ աշխատողների համար): Դրանք կարող են լինել կորպորատիվ հարկերից ազատում, հողի փոխանցում ցածր գներով, վերապատրաստման և ՀնԶ ծախսերի համատեղ հոգում ներդրողների և համալսարանների կողմից, ինչպես նաև ոչ դրամական աջակցություն այնպիսի բնագավառներում, ինչպիսին է կադրերի հավաքագրումը և ՄԿՈւ-ն:
- **Ներգրավել կառավարության բարձր օղակների ղեկավարությանը ներդրումների խթանման աշխատանքներում.** կազմակերպել առանձին այցելություններ և փոխգործակցություն հեռանկարային ներդրողների ղեկավար պաշտոնյաների և համապատասխան նախարարների միջև՝ ներդրումների խթանման տեղական գործակալության ջանքերն ամենաբարձր մակարդակով քաղաքական հանձնառությամբ սատարելու նպատակով:



- **Աջակցել ներդրողներին ներդրումային ցիկլի բոլոր փուլերի ընթացքում.** Երաշխավորել, որ ներդրումների խթանման գործակալությունն աջակցում է բազմազգ ընկերություններին սկսած ներդրման հնարավորության սահմանումից՝ դեպի ծրագրի մշակում՝ ընդհուպ մինչև հաջորդող գործողություններ:
- **Իրականացնել խրախուսիչ միջոցառումների մոնիթորինգ.** պարբերաբար գնահատել արտասահմանյան ներդրումներին տրամադրված խթանների արդյունավետությունը: Հավաստիանալ, որ դրանց գործողության ժամկետը պահպանվում է և պարբերաբար կատարել ծախսարդյունավետության վերլուծություններ:

Ներդրումների խթանման գործառնությունը ներկայումս բարեփոխման փուլում է: Այս գործընթացում հարկ է պետական գերատեսչությունների միջև հստակ բաշխել դերերն ու պարտականությունները, այդ թվում որոշել, թե որն է այն մարմինը, որն առաջատար դերակատարում և կոնկրետ ներդրումների խթանման թիրախներ է ունենալու: Միևնույն ժամանակ, հարկ է լավագույնս օգտագործել առկա փորձառությունն ու ռեսուրսները, այդ թվում նաև՝ առևտրային պալատների ցանցը և արտասահմանում գործող հայկական ինստիտուցիոնալ կառույցները:

***Գործողություն 2. Մշակել սփյուռքի ներդրողների թիրախավորման միջոցառումներ՝ շինարարական նյութերի շուկայում պիլոտային ծրագրի իրականացմամբ***

Հայաստանն ունի մեծ սփյուռք, որին կարելի է խթանել՝ որպես օտարերկրյա ուղղակի ներդրման կարևոր աղբյուր: Վերջին ինստիտուցիոնալ նախաձեռնությունների և կարողությունների վրա հիմնվելով՝ մենք առաջարկում ենք, որպեսզի մշակվի գործողությունների համապարփակ շրջանակ՝ սփյուռքի ՕՈՆՆ աղբյուրը թիրախավորելու միջոցով: Դրան հասնելու համար առաջարկում ենք հետևյալ քայլերը.

- **Հգորացնել հայկական սփյուռքի ազդեցիկ ներկայացուցիչների ցանցը՝ ներառելով բարձր օղակների պաշտոնյաների և գործարարների՝** իրենց համապատասխան համայնքներից և կորպորացիաներից դեպի Հայաստան ներդրումներ ներգրավելու

նպատակով: Հարկ է ուշադրություն դարձնել բարձրաստիճան անհատների ներգրավմանը, ովքեր ունակ են ազդելու որոշումների կայացման վրա կորպորատիվ մակարդակում: Նույն կերպ՝ բարձր մակարդակով քաղաքական հովանավորությունը կլինի այս ոլորտի հաջողության բանալին:

- **Մշակել և կենսագործել անհրաժեշտ կապերի ստեղծման մեխանիզմներ.** սա կարող է ներառել մենթորությունը՝ Հայաստանի ընկերություններին բիզնես խորհրդատվություն տրամադրելու նպատակով (օրինակ՝ նշանակալի բիզնես փորձառություն ունեցող հայերը կարող են հայրենիքի ՓՄՁ-ների ղեկավարներին ու ձեռնարկատերերին ուսուցանել արտահանման հմտություններ կամ փոխանցել բիզնես գիտելիքներ), բիզնես առաքելություններ՝ ոլորտին ներհատուկ հայաստանյան հնարավորությունները՝ սփյուռքի պոտենցիալ ներդրողների հետ համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև վեբ կայք, որը կարող է ծառայել որպես կապերի ստեղծման և պահպանման մշտական հարթակ Հայաստանի և սփյուռքի բիզնեսների միջև:

Կարելի է գործի դնել պիլոտային ծրագիր, որի շրջանակներում կտրվի ցանցի աշխատանքների և շինարարական նյութերի ոլորտում ներդրումային հնարավորությունների շուրջ անհրաժեշտ կապերի ստեղծման մեխանիզմների մեկնարկը:

**Զարգացնել ՓՄՁ կարողությունները. կարելի է մշակել կապերի ստեղծման ծրագրերը, որոնք կուղեկցեն ներդրումներին**

Հայաստանի շինարարական նյութերի ոլորտում ՓՄՁ-ները հաճախ չունեն սարքավորումներ, տեխնոլոգիաներ և տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են բարձրարժեք ապրանքներ արտադրելու համար. ուստի, կարևոր է, որպեսզի օտարերկրյա ներդրողները հաջող կապեր ստեղծեն տեղական ընկերությունների հետ: Այսպիսով, Հայաստանի կառավարությունը պետք է լրացնի իր ջանքերը՝ ՕՈՒՆ-ՓՄՁ կապերի ծրագրի միջոցով բազմազգ ընկերություններին գրավելու համար: Նախքան խոշոր ռեսուրսների գործարկման հանձնառությունը ստանձնելը մենք առաջարկում ենք, որպեսզի կառավարությունը ձեռնարկի

պիլոտային ծրագիր՝ ոլորտի ընտրությունը, օգտագործվող մեխանիզմները և ծրագրի ամբողջ գործունեությունը ստուգելու նպատակով:

***Գնահատում. Ոլորտին ներհատուկ ՕՈՆ-ՓՄՁ կապերի ստեղծման ծրագրի բացակայություն***

- Ներդրումներ խթանող տեղական գործակալության կողմից ներկայումս իրականացվող կապերի ստեղծման գործելակերպերը սահմանափակվում են տեղական և օտարերկրյա ընկերությունների միջև անհրաժեշտ կապերի ստեղծմամբ: Սակայն նման աշխատանքները կատարվում են ընդհատումներով, և դրանք ձևավորված չեն ոլորտային հենքով:
- Բացակայում է տեղական մատակարարների և բիզնես ծառայություններ մատուցողների մասով ձևավորված տեղեկատվական տվյալների բազան, ինչպես նաև չկա կառուցողական մոտեցում և պատկերացում, ինչն անհրաժեշտ է բոլոր պոտենցիալ ՕՈՆ-ներին՝ տեղական ՓՄՁ-ներին վերաբերող իրենց հարցերն ուղղելու համար (ԳՄՀԸ և այլոք, 2013թ.):
- Հմտությունների զարգացման մասով վերջերս առաջընթաց է գրանցվել մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈ) դաշտում: ԵՄ օժանդակությամբ Հայաստանը բարելավել է ՄԿՈ բարեփոխումների կազմակերպումը այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսիք են ՄԿՈ զարգացման ազգային խորհրդի ստեղծումը և կրթական ծրագրերի վերանայումը, որպեսզի դրանք համապատասխանեն աշխատաշուկայում պահանջվող մասնագիտական չափորոշիչներին: Այնուհետև, զարգացման գործընկերները, օրինակ՝ ԳՄՀԸ, իրենց նպաստն են ունեցել ոլորտային և գործատուների մասնակցությամբ միավորներին աջակցելու գործին, որպեսզի մասնագիտական ուսուցումը բավարարի իրական բիզնես ոլորտի պահանջներին, և որպեսզի ապահովվի ՄԿՈ դասավանդողների շրջանում մարդկային կարողությունների զարգացումը և միջազգային չափորոշիչների


տեղայնացումը ազգային ՄԿՈՒ համակարգում (ԵՄ 2014թ., ԳՄՀԸ 2014թ.):

***Գործողություն 1. ՕՈՒՆ-ՓՄՁ կապակցման ծրագրի մշակում՝ շինարարական նյութերի ոլորտում պիլոտային ծրագրի իրականացմամբ***

ՕՈՒՆ-ՓՄՁ կապերի ստեղծման ծրագիրը կաջակցի ներդրումների խթանման ջանքերին՝ բազմազգ ընկերություններին տեղական ՓՄՁ-ների մասին արժեքավոր տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Սա կնվազեցնի տեղական մատակարարների և հավանական բիզնես գործընկերների որոնման ծախսերը: Մինևույն ժամանակ, տեղական ծրագրին մասնակցող ՓՄՁ-ները կարող են օգտվել բազմազգ ընկերությունների հետ կառուցողական փոխգործակցության աճից:

Կապակցման ծրագրերի առանցքը կարող է լինել կա՛մ բիզնեսի զարգացումը, կա՛մ հմտությունների զարգացումը: Բիզնեսի զարգացումը սովորաբար տեղին է այն պարագայում, երբ տեղական արտադրողների կարողություններն արդեն իսկ բավարար են տեղական ՓՄՁ-ների և բազմազգ ընկերությունների միջև տեղեկատվական բացը լրացնելու համար: Մյուս կողմից՝ հմտությունների զարգացում կարող է պահանջվել այն դեպքերում, երբ արտադրողների կարողությունները կատարելագործման կարիք ունեն, այսինքն՝ երբ առկա և հաջողության համար անհրաժեշտ կարողությունների միջև առկա է բաց: Այն դեպքերում, երբ երկու գործոններն էլ հասցեագրված են, խորհուրդ է տրվում, որպեսզի երկու միջոցառումներն իրականացվեն շաղկապված (ՏՀԶԿ, 2013գ): ՕՈՒՆ-ՓՄՁ կապերի ստեղծման շրջանակ ձևավորելու համար պետք է իրականացնել հետևյալ քայլերը՝ առաջին պիլոտային ծրագիրը դեպի շինարարական նյութերի ոլորտ նպատակաուղղելու միջոցով (Գծապատկեր 11):

**Գծապատկեր 11. ՕՈՒՆ-ՓՄՁ կապերի ստեղծման ծրագրի մոդել**



Աղբյուրը. ՏՀԶԿ վերլուծություն

- 1) **Սահմանել կապերի ստեղծման ռազմավարություն.** վերհանել գերակա ոլորտները, սահմանել ծրագրային նպատակները և գնահատել առկա կապերի խթնաման միջոցառումները:
- 2) **Նախագծել կառուցվածքը և կազմակերպական ձևը.** Ստեղծել համակարգող մարմին, ներառյալ հիմնական շահառուներին, ստեղծել հատուկ նպատակային աշխատանքային խումբ կապերի ստեղծման ծրագիրն իրականացնելու նպատակով, սահմանել պլանը և բյուջեն, և մշակել օտարերկրյա ներդրողների և տեղական ՓՄՁ-ների տվյալների բազա:
- 3ա) **Գնահատել հմտությունները.** մասնակից ԲԱՐ-ներին և ՓՄՁ-ներին ընտրությունից հետո իրականացնել ընկերությունների գնահատում տեխնիկական և ընդհանուր բիզնես հմտությունների մասով: Ելնելով բիզնեսի նպատակներից՝ գնահատման մեջ պետք է նշվի, թե ինչ տեսակի հմտություններ են պահանջվում տվյալ ճյուղում և որոնք են ՓՄՁ-ների ներկայիս կարողությունները: Արդյունքում պետք է կազմվի առկա և թիրախային վիճակի միջև բացերի՝ ըստ կարևորության թվարկված ցանկ:

- 3բ) **Ախտորոշել բիզնես կարիքները և թերությունները.** նույն կերպ կատարել մասնակից ԲԱԸ-ների/ՓՄՁ-ների կարիքների և թերությունների ռազմավարական աուդիտ: Մա կարող է ներառել, օրինակ տեխնիկական սարքավորումների, ֆինանսավորման կամ կադրային խնդիրները: Ինչպես նախորդի դեպքում, այստեղ ևս հարկ է կազմել թերությունների ցանկ՝ թվարկված ըստ կարևորության:
- 4ա) **Մշակել և տարածել վերապատրաստման նյութեր.** ելնելով գնահատման արդյունքում վերհանված բացերից՝ հարկ է պատրաստել վերապատրաստման մոդուլներ և դրանք տրամադրել մասնակիցներին (օրինակ՝ ՄԿՈւ, արտադրական պրակտիկայի սխեմաներ):
- 4բ) **Մշակել և տարածել ծրագիր.** ռազմավարական աուդիտի հիման վրա պետք է մշակել բիզնես բովանդակություն (օրինակ՝ մատակարարման և ֆինանսավորման սխեմաներ, մենթորինգի ծրագրեր, աշխատանքի ուղեցույցեր) և տրամադրել դրանք ԲԱԸ-ներին և ՓՄՁ-ներին (օրինակ՝ «հանդիպել գնորդին» միջոցառումներ, հաղորդակցության նյութեր և ինտերնետային կայք՝ ծրագրի մասնակիցների շփումները դյուրացնելու համար):
- 5ա) **Իրականացնել վերապատրաստում.** ընկերություններն անցնում են վերապատրաստում՝ ըստ իրենց կողմից՝ հմտությունների գնահատման ընթացքում նշված կարիքների: Դրանք կարող են լինել հմտությունների մասով արտադրական պրակտիկաներ և վերապատրաստման մոդուլներ, որոնք կանցկացնի հավատարմագրված կազմակերպություն:
- 5բ) **Սկսել ծրագրի իրականացումը.** սահմանել ծառայությունների մատուցման պայմանագրեր և գործողությունների ծրագրեր մասնակից ընկերությունների համար՝ նախորդ փուլում մշակված բովանդակությանը համապատասխան. օրինակ, բիզնեսի զարգացման ծառայությունների մատուցում ՓՄՁ-ներին, օտարերկրյա ներդրողների հետ կապերի ձևավորման և պահպանման, և կոնտակտների համապատասխանեցում ձևական պահանջներին, և զբաղվածության սխեմաների ստեղծում:

- 6) **Կատարել մոնիթորինգ և գնահատում.** սահմանել ցուցանիշներ և թիրախներ՝ իրականացման ընթացքում կապերի ստեղծման ծրագրի արդյունավետությունը գնահատելու նպատակով (օրինակ՝ տվյալների բազայում ՓՄՁ-ների քանակը, ՓՄՁ-ների և բազմազգ ընկերությունների միջև պայմանագրերի քանակը և արժեքը, ՓՄՁ-ների վաճառքի և շահութաբերության աճը): Հավաքել տվյալներ և գնահատել ծրագրի ազդեցությունը՝ հաշվի առնելով բազային տվյալները, ծանրակշիռ հակափաստարկները կամ ստուգիչ խմբերին, և որակական գնահատումները:
- 7) **Կայունացնել ԲԱԸ-ՓՄՁ կապերը.** եթե կապերը բավարար են, ապա աջակցել կլաստերների ստեղծմանը և զարգացմանը՝ այլ մասնակիցների, գործընկերների, համալսարանների, հետազոտական հաստատությունների, և գիտելիքատար բիզնես ծառայությունների ներգրավմամբ:

ՕՈՒՆ-ՓՄՁ կապերի ստեղծման ծրագրի գործունեության արագ մեկնարկի համար մենք առաջարկում ենք, որպեսզի ՀՀ կառավարությունը ներդնի պիլոտային ծրագիր շինարարական նյութերի ոլորտում: Գործողությունների ծրագիրն առաջարկվում է հաջորդ բաժնում:





## ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

### **Նախապայմաններ և սահմանափակումներ. ենթակառուցվածքների դերը**

Այս զեկույցի առաջնային նպատակն է պրակտիկ խորհուրդներ տալ Հայաստանի շինարարական նյութերի ոլորտում օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման բարեփոխումների վերաբերյալ՝ միաժամանակ առավելագույնի հասցնելով դրանց ազդեցությունը տեղական ՓՄՁ-ների վրա: Այդուհանդերձ, ճիշտ սահմանված թիրախային մոտեցումը հարկ է դիտել որպես իրականացվող բարեփոխումների գործընթացը համալրող բաղադրիչ՝ նպատակաուղղված Հայաստանում բոլոր բազային պայմանների ընդլայնմանը: Մասնավորապես, տրանսպորտային ենթակառուցվածքը նշվել է որպես կարևոր կողմ, որը հարկ է զարգացնել՝ երկրի գործարար միջավայրը բարելավելու, արտասահմանյան շուկաների հասանելիությունը ապահովելու համար, ինչպես նաև, այն համարվել է արտաքին ներդրողներին գրավելու առանցքային լծակ:

Հայաստանը ցամաքով շրջապատված երկիր է: Արտահանման ուղիներն են Վրաստանը, այնտեղից էլ՝ սևծովյա նավահանգիստներով դեպի Ռուսաստան և Եվրոպա, և որոշ չափով՝ Իրանը: ՀՀ կառավարությունն արդեն իսկ քայլեր է ձեռնարկում տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ, ինչի մասին խոսվել է սույն զեկույցի նախորդ մասերում: Այս որոշումները հույժ կարևոր են երկրի զարգացման համար, քանի որ դրանք ազդում են տնտեսության բազմաթիվ ճյուղերի մրցունակության վրա: Քանի որ ազդեցությունը տնտեսության վրա այդքան լայնընդգրկուն է, տրանսպորտային ենթակառուցվածքների վերաբերյալ խորքային վերլուծությունը և առաջարկությունները չի կարելի հիմնել միայն մեկ ճյուղի առջև ծառայած մարտահրավերների և հնարավորությունների վրա. այդ իսկ պատճառով, դա մեկ ոլորտին վերաբերող զեկույցի սահմաններից դուրս է:

### **Իրականացումն ուղղորդող սկզբունքներ**

Առաջարկված քաղաքականության բարեփոխումների հաջողությունը կախված կլինի մի շարք ընդհանուր, սակայն կարևոր գործոններից.

- Ապահովել մասնավոր հատվածի մասնակցությունը և աջակցությունը.** մասնավոր հատվածի մրցունակությանն աջակցող քաղաքականությունների մշակումը պետք է կատարվի մասնավոր հատվածի կարիքներին համապատասխան: Դրանք պետք է լայնորեն տարածվեն, զարգացվեն և գնահատվեն մասնավոր հատվածի հետ ունեցած քննարկումների ընթացքում: Հատկապես կապերի ստեղծման ծրագրի պարագայում տնտեսվարող սուբյեկտները պետք է ներգրավվեն, որպեսզի ապահովվի ծրագրի կողմից և՛ ԲԱՀ-ների և ՓՄՁ-ների ակնկալիքների բավարարումը:
- Ապահովել, որպեսզի ցանկացած ստեղծված քաղաքականության գործիք լինի համապատասխան և ունենա շուկայական կողմնորոշում.** քաղաքականության գործիքներն ամենաարդյունավետն են այն ժամանակ, երբ դրանք բխում են պահանջարկից և հնարավորինս տեղեկացված են շահառուների կարիքների մասով: Սա հատկապես տեղին կլինի, եթե, օրինակ, տրամադրվում է տեղեկատվություն էներգետիկ արդյունավետ գործելակերպերի մասին և երբ ՓՄՁ-ներին ներգրավում են կապերի ստեղծման ծրագրում:
- Համաձայնություն ձեռք բերել հստակ նպատակի շուրջ և հավաքագրել քաղաքականության բարեփոխումների համար համապատասխան ռեսուրսներ.** քաղաքականության գործիքի նպատակը պետք է լինի հստակ նախանշված, և պետք է հատկացնել բավարար ռեսուրսներ՝ այդ նպատակի ձեռքբերումն իրականություն դարձնելու համար: Ավելի լավ կլինի համաձայնության գալ սահմանափակ շրջանակի շուրջ և ապահովել բավարար ռեսուրսներ դրան հասնելու համար, քան փորձել ամեն ինչ ընդգրկող քաղաքականություն՝ առանց անհրաժեշտ միջոցներն ունենալու: Այս առնչությամբ շինարարական նյութերի ոլորտի պիլոտային ծրագրերը տալիս են քաղաքականության գործիքի նեղ, սակայն որոշակիորեն սահմանված շրջանակ:
- Ներկառուցել մոնիթորինգի և գնահատման մեխանիզմներն ամենասկզբից.** Յուրաքանչյուր քաղաքականության գործիք պետք է ունենա ներկառուցված աուդիտի մեխանիզմ՝ թափանցիկության և

անկախության սկզբունքներն ապահովելու նպատակով: Սա մասնավորապես տեղին է, երբ պետք է հատկացվեն ֆինանսական միջոցներ, ինչպես ներդրումների խթանման միջոցառումների դեպքում է:

## **Իրականացման հնարավոր ժամանակացույց**

Քաղաքականությանը նվիրված այս զեկույցում ընդհանուր գծերով ներկայացվել են այն քայլերը, որ Հայաստանը կարող է ձեռնարկել շինարարական նյութերի ոլորտում բազմազգ ընկերություններ ներգրավելու և դրանց դրական ազդեցությունը տեղական ՓՄՁ-ների վրա առավելագույնի հասցնելու համար:

Քաղաքականության բարեփոխումների իրականացման գործընթացը բաղկացած է երեք աշխատանքային ուղղություններից՝ Գլուխ 3-ում նկարագրված համապատասխան առաջարկությունների համաձայն: Գործողությունների քայլերի մանրամասները և առաջարկվող ժամանակային սանդղակը բերված են Գծապատկեր 12-ում:

**Գծապատկեր 12. Իրականացման հնարավոր ժամանակացույց**

<b>Ստեղծել Հայաստանի շինարարական նյութերի նկատմամբ պահանջարկը</b>	<b>Կարճա- ժամկետ</b> <i>&lt; 1 տարի</i>	<b>Միջնա ժամկետ</b> <i>1-3 տարի</i>	<b>Երկարա ժամկետ</b> <i>&gt; 3 տարի</i>
<b>Բարելավել կարգավորումը շինարարության մեջ էներգետիկ արդյունավետ պահանջները կիրարկելու նպատակով</b>			
• Սահմանել նորմեր			
• Աջակցել կիրարկմանը			
• Կատարել համապատասխանության մոնիթորինգ			
• Օգտագործել մոնիթորինգի արդյունքները կիրարկումը բարելավելու նպատակով			
<b>Խթանել իրագրելումը շինարարության մեջ էներգետիկ արդյունավետության օգուտների վերաբերյալ</b>			
• Ստեղծել կանոնավոր հանրային կապեր և գովազդային արշավներ			
• Հիմնել գրասենյակ և վեբ կայք հանրությանը խորհրդատվություն տրամադրելու նպատակով			
• Ստեղծել տարեկան ֆորում «Էներգետիկ արդյունավետությունը շենքերում» թեմայով			
<b>Ռացիոնալացնել շինարարության թույլտվությունների ստացման ընթացակարգը</b>			
• Վերհանել շինարարության թույլտվությունների ստացման ներկա գործընթացի խոչընդոտները			
• Նվազեցնել պահանջվող ընթացակարգերի ընդհանուր քանակը			
• Կենտրոնացնել տեխնիկական պայմանների մասով համաձայնությունները			
<b>Բարելավել արտահանման մասով տեղեկատվությունը և խթանումը</b>			
• Վեր հանել խոստումնալից ենթադրություն/ապրանքներ շինանյութերի ոլորտում			
• Հավաքագրել և տարածել արտաքին շուկայի վերաբերյալ գիտելիքներ			
• Համաչափորեն ընդլայնել մարքեթինգային գործունեությունը			
• Հմտություններ և դասընթացներ արտահանման ուղղվածությամբ ՓՄՁ-ներին			

(շարունակություն)

Ներգրավել ՕՈՒՆ. ներդրումների խթանման վերանայված մոտեցում և դեպի սփյուռք ուղղվածություն	Կարճա- ժամկետ <i>&lt; 1 տարի</i>	Միջնա- ժամկետ <i>1-3 տարի</i>	Երկարա- ժամկետ <i>&gt; 3 տարի</i>
<b>Կատարելագործել ներդրումների խթանման կարողությունը</b>			
• Հզորացնել ոլորտային ռազմավարությունը			
• Հարմարեցնել ներդրումների խթանման կազմակերպությունը ռազմավարության իրականացման նպատակով			
• Ընտրված առանցքային ներդրողների համար մշակել ժամանակավոր բնույթի առանձին խթաններ			
• Կառավարության բարձրաստիճան դեկավարներին ներգրավել ներդրումների խթանման աշխատանքներում			
• Ներդրողներին աջակցել ներդրումային ցիկլի բոլոր փուլերում			
• Կատարել խթանների մոնիթորինգ			
<b>Մշակել սփյուռքի ՕՈՒՆ կատարողների թիրախավորման գործողությունների ծրագիր</b>			
• Հզորացնել ազդեցիկ հայ դեկավարների ցանցը			
• Մշակել և գործի դնել կապակցման մեխանիզմներ			
• Մշակել շինարարական նյութերի ոլորտի պիլոտային ծրագիր			

(շարունակություն)

Պիլոտային ծրագրի իրականացում շինարարական նյութերի ոլորտում	Կարճա- ժամկետ <i>&lt; 1 տարի</i>	Միջնա- ժամկետ <i>1-3 տարի</i>	Երկարա- ժամկետ <i>&gt; 3 տարի</i>
<b>ՕՈՆ-ՓՄՁ կապակցման ծրագրի պիլոտ շինարարական նյութերի ոլորտում</b>			
• Սահմանել կապակցման ռազմավարություն			
• Նախագծել կառույցը և կազմակերպական ձևը			
• Գնահատել հմտությունները/կարիքների ախտորոշում			
• Վերապատրաստման և ծրագրի մշակում/տարածում			
• Վերապատրաստման և ծրագրի իրականացում			
• Մոնիթորինգ և գնահատում			
• ՕՈՆ-ՓՄՁ կապերի կայունացում			





## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԶՀԳ (Զարգացման հայկական գործակալություն) (2013թ.), *Քարի մշակումը Հայաստանում*, ԶՀԳ, Երևան.

ADEME (Agence de l'Environnement et de la Maîtrise de l'Energie) (2008), *Energy-Efficiency in the European Union: Overview of Policies and Good Practices*, ADEME.

Agunias, D.R. and K. Newland (2012), *Developing a Road Map for Engaging Diasporas in Development: A Handbook for Policymakers and Practitioners in Home and Host Countries*, Migration Policy Institute, International Organization for Migration  
[www.migrationpolicy.org/research/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policymakers-and-practitioners](http://www.migrationpolicy.org/research/developing-road-map-engaging-diasporas-development-handbook-policymakers-and-practitioners).

AHK (Գերմանիայի առևտրային պալատներ) (2014թ.), AHK վեբ կայք՝ [www.ahk.de/en](http://www.ahk.de/en), մուտքը՝ 12-ը օգոստոսի 2014թ.

Aikins, K. and N. White (2011), *Global Diaspora Strategies Toolkit: Harnessing the Power of Global Diasporas*, Diaspora Matters, Dublin.

Armenite (8 May 2014), "The Southern Armenia railway – Transportation infrastructure in Armenia: part III", *The Armenite*, <http://thearmenite.com/newsdesk/southern-armenia-railway-transportation-infrastructure-armenia-part-iii/>, մուտքը՝ 23-ը սեպտեմբերի 2014թ.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ) (2014թ.), ԱՎԾ տվյալների շտեմարան՝ <http://armstatbank.am/>, մուտքը՝ 5-ը հունիսի 2014թ.

ԱՎԾ (2013թ.), *Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2013թ.*, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, [www.armstat.am/en/?nid=45&year=2013](http://www.armstat.am/en/?nid=45&year=2013).

- Belloc, M. and M. Di Maio (2011), “Survey of the literature on successful strategies and practices for export promotion by developing countries”, *IGC Working Paper*, 11/0248, IGC (International Growth Centre), London, [www.theigc.org/sites/default/files/11\\_0248\\_belloc-di\\_maio\\_final\\_hr1.pdf](http://www.theigc.org/sites/default/files/11_0248_belloc-di_maio_final_hr1.pdf).
- Blonigen, B.A. and J. Piger (2011), “Determinants of foreign direct investment”, *NBER Working Paper*, No. 16704, NBER (National Bureau of Economic Research), Cambridge, MA, [www.nber.org/papers/w16704](http://www.nber.org/papers/w16704).
- ChileGlobal (2014), ChileGlobal վեբ կայք՝ [www.chileglobal.net](http://www.chileglobal.net), մուտքը՝ 18-ը հունիսի 2014թ.
- CzechInvest (2014), CzechInvest վեբկայք՝ [www.czechinvest.org/en](http://www.czechinvest.org/en), մուտքը 20-ը հունիսի 2014թ.
- East Invest (2014), “Armenia sustainable construction”, East Invest վեբ կայք՝ [www.east-invest.eu/en/investment-promotion/armenia-2/RA-sustainable-construction](http://www.east-invest.eu/en/investment-promotion/armenia-2/RA-sustainable-construction), մուտքը՝ 15-ը սեպտեմբերի 2014թ.
- EBRD (European Bank for Reconstruction and Development) (2013), “Results of analysis and recommendations for overcoming barriers to increased energy-efficiency in residential buildings: Strategy report”, internal project document, EBRD.
- Economist (22 June 2013), “Ready-mixed fortunes”, *The Economist*, [www.economist.com/news/business/21579844-worlds-cement-giants-look-set-recovery-but-will-it-be-durable-ready-mixed-fortunes](http://www.economist.com/news/business/21579844-worlds-cement-giants-look-set-recovery-but-will-it-be-durable-ready-mixed-fortunes).
- Economist (21 June 2014), “Roads of redemption”, *The Economist*, [www.economist.com/news/international/21604576-cities-are-bound-grow-they-need-planning-be-liveable-roads-redemption](http://www.economist.com/news/international/21604576-cities-are-bound-grow-they-need-planning-be-liveable-roads-redemption).
- Ecorys (2012), *FWC Sector Competitiveness. Studies N° B1/ENTR/06/054: Sustainable Competitiveness of the Construction Sector*, Final Report, Ecorys Research and Consulting, Rotterdam.
- Energy Saving Trust (2014), Energy Saving Trust վեբ կայք՝ [www.energysavingtrust.org.uk](http://www.energysavingtrust.org.uk), մուտքը՝ 20-ը հունիսի 2014թ.

- (Economic Research and Development Support Center) (2014a), “Market overview of the construction materials industry in Armenia”, , internal working document for the OECD, Yerevan.
- ERDSC (2014b), “Private sector survey of Armenian construction materials companies”, internal working document for the OECD, ERDSC, Yerevan.
- Espaces Info Energie (2014), Espaces Info Energie վեբ կայք՝ [www.renovation-info-service.gouv.fr](http://www.renovation-info-service.gouv.fr), մուտքը՝ 13-ը օգոստոսի 2014թ.
- EU (European Union) (2014), “Addendum No.3 to Financing Agreement ENPI/2009/021-066”, internal project documentation (unpublished), EU, Brussels.
- EU (2010), “Directive 2010/31/EU of the European Parliament of 19 May 2010 on the energy performance of buildings (recast)”, *Official Journal of the European Union*, L 153/13, European Parliament and the Council of the European Union, <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=OJ:L:2010:153:0013:0035:EN:PDF>.
- Eurostat (2008), *NACE Rev. 2: Statistical Classification of Economic Activities in the European Community*, Eurostat, European Commission.
- EV Research Center (2006), *The Role of the Diaspora in Generating Foreign Direct Investments in Armenia*, EV Research Center (Economy and Values Research Center), Yerevan.
- GIZ (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit) (2014), “VET activities in Armenia”, internal project documentation (unpublished), GIZ.
- GIZ and EV Consulting (2011), *Current Situation of the Diaspora Connected FDI in Armenia*, GIZ and EV Consulting, Yerevan.
- GIZ, EV Consulting and Strategy Partners (2013), *Review of Foreign Direct Investment Promotion and Facilitation Policies and Practices in Armenia*, GIZ and EV Consulting, Yerevan.

- GlobalScot (2014), GlobalScot վեբ կայք՝ [www.globalscot.com/about](http://www.globalscot.com/about), մուտքը՝ 18-ը հունիսի 2014թ.
- ՀՀ կառավարություն (2014թ.), ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարություն, Երևան (հրատարակված չէ).
- GTAI (Germany Trade and Invest) (2014), GTAI վեբ կայք՝ [www.gtai.de/GTAI/Navigation/EN/trade.html](http://www.gtai.de/GTAI/Navigation/EN/trade.html), մուտքը՝ 12-ը օգոստոսի 2014թ.
- GTAI (2013), *2012 Annual Report: Expertise for a Changing Global Economy*, GTAI, [www.gtai.de/GTAI/Content/EN/SharedDocs/Downloads/About-us/annual-report-2012.pdf](http://www.gtai.de/GTAI/Content/EN/SharedDocs/Downloads/About-us/annual-report-2012.pdf).
- Habitec (2014), “A Cluster Experience in Green Building and Renewable Energy”, presentation delivered at the OECD capacity building seminar, Enhancing SME Policies in the Eastern Partner Countries, Trento, Italy, 19-22 May 2014.
- Harding, T. and B.S. Javorcik (2011), “Roll out the red carpet and they will come: Investment promotion and FDI inflows”, *The Economic Journal*, Vol. 121(557), pp. 1445-1476.
- Hornberger, K., J. Battat and P. Kusek (2011), “Attracting FDI: How much does investment climate matter?”, *Viewpoint*, Note No. 327, The World Bank Group, Washington, DC.
- IEA (International Energy Agency) (2014), Policies and Measures database, IEA վեբ կայք՝, [www.iea.org/policiesandmeasures/energyefficiency/?country=France](http://www.iea.org/policiesandmeasures/energyefficiency/?country=France), մուտքը՝ 2-ը հունիսի 2014թ.
- IEA (2013a), *Policy Pathway: Modernising Building Energy Codes to Secure our Global Energy Future*, IEA / UNDP (United Nations Development Programme), Paris.
- IEA (2013b), “Energy-efficiency policy and measures - Introduction to energy-efficiency policies”, Energy Training Week 2013 Course 3, OECD / IEA,

[www.iea.org/media/training/presentations/Day\\_1\\_Session\\_2a\\_Energy\\_Efficiency\\_Policy\\_Intro.pdf](http://www.iea.org/media/training/presentations/Day_1_Session_2a_Energy_Efficiency_Policy_Intro.pdf).

IEA (2010), *Energy-Efficiency Governance Handbook*, 2nd Edition, OECD / IEA, Paris.

IMF (2014a), World Economic Outlook database, IMF (International Monetary Fund), [www.imf.org/external/pubs/ft/weo/2014/02/weodata/index.aspx](http://www.imf.org/external/pubs/ft/weo/2014/02/weodata/index.aspx), մուտքը՝ 10-ը հոկտեմբերի 2014թ.

IMF (2014b), *World Economic Outlook: Legacies, Clouds, Uncertainties*, IMF, Washington, DC.

Kuznetsov, Y. (2011), “Why is diaspora potential so elusive? Towards a new generation of initiatives to leverage countries’ talent abroad”, in *Realizing the Development Potential of Diasporas*, United Nations University Press, Tokyo, pp. 171-187.

Litokol (2014), “Seminars, tech lessons”, Litokol Հայաստան վեբ կայք՝ [www.litokol.am/eng/seminars-3](http://www.litokol.am/eng/seminars-3), մուտքը՝ 15-ը սեպտեմբերի 2014թ.

ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (2011թ.), Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականություն, [www.ada.am/files/930/documents/Industrial-policy-framework\\_15122011-eng-final.pdf](http://www.ada.am/files/930/documents/Industrial-policy-framework_15122011-eng-final.pdf).

Mulki, S. and A. Hinge (2010), “Green investment horizons: Effects of policy on the market for building energy efficiency technologies”, *WRI Working Paper*, WRI (World Resources Institute), Washington, DC, [www.wri.org/sites/default/files/green\\_investment\\_horizons.pdf](http://www.wri.org/sites/default/files/green_investment_horizons.pdf), accessed 29 August 2014.

Nielsen, T.M., L. Riddle (2009), “Investing in peace: The motivational dynamics of diaspora investment in post-conflict economies”, *Journal of Business Ethics*, Vol. 89(4), pp. 435-448.

OECD (2014), “Environment in emerging and transition economies”, OECD website, [www.oecd.org/env/outreach](http://www.oecd.org/env/outreach), մուտքը՝ 2-ը հոկտեմբերի 2014թ.

- OECD (2013a), *Enhancing Skills through Public-Private Partnerships in Kazakhstan's Information Technology Sector*, Private Sector Development Policy Handbook, OECD Eurasia Competitiveness Programme, OECD, Paris.
- OECD (2013b), "Increasing competitiveness and attracting FDI in Atyrau", OECD Central Asia Initiative, OECD, Paris (unpublished).
- OECD (2013c), *Promoting Investment and Job Creation in Central Asia through Business Linkage Programmes*, Private Sector Development Policy Handbook, OECD Eurasia Competitiveness Programme, OECD, Paris, [www.oecd.org/investment/psd/BusinessLinkageProgrammes.pdf](http://www.oecd.org/investment/psd/BusinessLinkageProgrammes.pdf).
- OECD (2011), *Towards Green Growth*, OECD Green Growth Studies, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/9789264111318-en>.
- OECD (2009), "Business linkages: Linking foreign and domestic firms to maximise the benefits of FDI for employment and sustainable growth", OECD, Paris (unpublished).
- OECD (2006), *Policy Framework for Investment*, OECD Publishing, Paris, [www.oecd.org/daf/inv/36671400.pdf](http://www.oecd.org/daf/inv/36671400.pdf).
- OECD (2002), *Foreign Direct Investment for Development: Maximising Benefits, Minimising Costs*, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/9789264199286-en>.
- OECD et al. (2012), *SME Policy Index: Eastern Partner Countries 2012: Progress in the Implementation of the Small Business Act for Europe*, OECD Publishing, Paris, <http://dx.doi.org/10.1787/9789264178847-en>.
- Oxford Economics (2013), *Global Construction 2025: A Global Forecast for the Construction Industry to 2025*, Global Construction Perspectives.
- Rodrik, D. (2004), "Industrial policy for the twenty-first century", *KSG Working Paper*, No.RWP04-047, Kennedy School of Government, Harvard University, Cambridge, MA, [http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=617544](http://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=617544).

- Singh, H. and K.W. Jun (1995), "Some new evidence on determinants of foreign direct investment in developing countries", *World Bank Policy Research Working Paper*, No. 1531, World Bank Group, Washington, DC, <http://ssrn.com/abstract=623885>.
- USGS(United States Geological Survey) (2012), *Mineral Commodity Summaries 2012*, USGS, Reston, VA, <http://minerals.usgs.gov/minerals/pubs/mcs/2012/mcs2012.pdf>.
- UN Comtrade (undated), United Nations Commodity Trade Statistics database, <http://comtrade.un.org/db/>, մուտքի 4-րդ հուլիսի 2014թ.
- UN DESA (United Nations Department of Economic and Social Affairs) (2014), Population Estimates and Projections database, [http://esa.un.org/unpd/wup/unup/index\\_panel1.html](http://esa.un.org/unpd/wup/unup/index_panel1.html).
- UNCTAD (United Nations Conference on Trade and Development) (2014), *World Investment Report 2014: Investing in the SDGs: An Action Plan*, United Nations, New York.
- UNCTAD (2011), *Best Practices in Investment for Development. How to Create and Benefit from FDI- SME Linkages: Lessons from Malaysia and Singapore*, Investment Advisory Series, Series B, Number 4, United Nations, New York and Geneva.
- UNCTAD (2009), *Promoting Investment and Trade: Practices and Issues*, Investment Advisory Series, Series A, Number 4, UNCTAD, Geneva.
- UNCTAD (2001), *World Investment Report 2001: Promoting Linkages*, United Nations, New York and Geneva.
- UNDP and GEF (Global Environment Facility) (2014), *Improving Energy-Efficiency in Buildings: Project Brochure*, UNDP-GEF/00059937, UNDP and GEF, Yerevan, available from [www.nature-ic.am/improving-ee-in-buildings-reports-and-publications/](http://www.nature-ic.am/improving-ee-in-buildings-reports-and-publications/), accessed 11 August 2014.
- UNDP and GEF (2013), *Improving Energy-Efficiency in Buildings: Report on Activities Performed in 2013*, UNDP-GEF/00059937, UNDP and GEF,

Yerevan, [www.nature-ic.am/res/pdfs/documents/2013/IEEB\\_Analytical-Report-2013\\_ENG\\_s.pdf](http://www.nature-ic.am/res/pdfs/documents/2013/IEEB_Analytical-Report-2013_ENG_s.pdf), accessed 11 August 2014.

UNDP and GEF (2011), *Improving Energy-Efficiency in Buildings Project: Inception Report*, UNDP-GEF 00059937, UNDP and GEF, [www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB\\_reports\\_public/4245%20ARM\\_Inception%20Report\\_accepted.pdf](http://www.nature-ic.am/res/pdfs/documents/EEB_reports_public/4245%20ARM_Inception%20Report_accepted.pdf), accessed 11 August 2014.

UNECE (United Nations Economic Commission for Europe) (2014), *SMEs in Armenia: A Statistical Overview*, UNECE.

World Bank (2014), World Development Indicators database, <http://data.worldbank.org/data-catalog/world-development-indicators>, accessed 10 October 2014.

World Bank (2013a), *Doing Business 2014: Understanding Regulations for Small and Medium-Size Enterprises*, World Bank Group, Washington DC.

World Bank (2013b), "Migration and remittance flows: Recent trends and outlook 2013-2016", *Migration and Development Brief*, 21, World Bank Group, Washington DC.

World Bank (2012), *Global Investment Promotion Best Practices 2012*, Investment Climate April 2012, World Bank Group, Washington, DC.

World Bank (2004), *World Development Report 2005: A Better Investment Climate for Everyone*, The World Bank and Oxford University Press, Washington, DC.



## **ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՐՑԱԽՈՒՑՁ**

Այս հավելվածում ամփոփ նկարագրվում է Հայաստանի շինարարության արժեքի շղթայի մասնավոր սուբյեկտների շրջանում արված հարցախույզի նպատակները, ինչպես նաև օգտագործված մեթոդաբանությունը: Այստեղ բերված են նաև հարցախույզի հիմնական արդյունքները:

### ***Հարցախույզի նպատակը***

Սույն հրապարակման համար իրականացված ուսումնասիրությունների շրջանակում ՏՀԶԿ-ը հայաստանյան մի խորհրդատվական և հետազոտական ընկերության՝ ERDSC, պատվիրեց իրականացնել շինարարության արժեքի շղթայում գործող մասնավոր ընկերությունների հարցախույզ:

Հարցախույզն իրականացվել է 2014 թվականի հունիս-հուլիս ամիսներին: Շինարարական նյութեր արտադրող և շինարարությամբ զբաղվող ընկերությունների ղեկավար բարձր օղակների հետ անց են կացվել երեսուն խորքային հարցազրույցներ: Հարցված ընկերությունների մեծամասնությունը ՓՄՁ-ներ են:

Հարցախույզի նպատակն է նոր տվյալներով համալրել ուսումնասիրության ընթացքում հավաքագրված փաստերը, որպեսզի հնարավոր լինի ավելի լավ ուսումնասիրել Հայաստանի շինարարության արժեքի շղթայի արտադրական խնդիրները, արտահանման հնարավորությունները և ՕՈՆ գրավչությունը:

### ***Մեթոդաբանությունը***



Շինարարությամբ և շինարարական նյութերի արտադրությամբ զբաղվող տեղական ընկերությունների ղեկավարությունից ընդհանուր

թվով հարցվել է 30 անձ՝ դեմ-առ-դեմ կամ հեռախոսային հարցազրույցների միջոցով: Հարցախույզի ընտրանքը կազմվել է այնպես, որ հնարավոր լինի ընդգրկել շինարարության արժեքի շրջայի բոլոր այն քայլերը, որոնք նպատակահարմար են այս հրապարակման համար. այսինքն՝ շինարարական նյութերի արտադրություն և շինարարություն: Քանի որ Հայաստանում այս ոլորտի փաստացի կառուցվածքի վերաբերյալ հուսալի տեղեկատվությունը բացակայում է, ընտրանքի կազմման մեթոդի հարցում վստահել ենք հարցախույզն իրականացնող տեղական կազմակերպության փորձի վրա: Վերջնական ընտրանքում ընդգրկվել են՝


- 15 ընկերություններ Երևանից, 4-ը՝ Կոտայքից, 3-ը՝ Արարատից, 3-ը՝ Շիրակից, 2-ը՝ Լոռիից, 1-ը՝ Արմավիրից, 1-ը՝ Սյունիքից և 1-ը՝ Տավուշից. այսպիսով՝ Հայաստանի 11 վարչական շրջաններից ընդգրկվել են 8-ը:
- 23 ընկերություններ զբաղվում էին շինարարական նյութերի արտադրությամբ, իսկ 7-ը՝ գլխավորապես շինարարությամբ:
- Շինարարական նյութեր արտադրող 23 ընկերություններից 6-ում աշխատողների թիվը 20-ից փոքր է, 4-ում՝ 20-ից 50, 11-ում՝ 50-ից 200, և միայն 2-ում՝ ավելի քան 200:
- Տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամություն հայտնած 12 ընկերություններից 4-ը նշել են, որ իրենց տարեկան շրջանառությունը կազմում է ոչ ավել քան 100 000 ԱՄՆ դոլար, 5-ը՝ 100 000-ից 1 միլիոն ԱՄՆ դոլար, և միայն 3-ի մոտ շրջանառությունը գերազանցել է 1 միլիոն ԱՄՆ դոլարը:

## Ընտրված արդյունքներ

### Ընտրանքի կազմը



**Աշխատողների միջին թիվը (2013)**




Ծանոթագրություն. դիտարկվել են միայն շինարարական նյութեր արտադրող ընկերությունները

*Որո՞նք են ձեր բիզնեսի հիմնական ծախսային տողերը:*


**Տարեկան ընդհանուր ծախսերի %**

(Հարցված ընկերությունների միջին ցուցանիշները )




Ծանոթագրություն. դիտարկվել են միայն շինարարությամբ զբաղվող ընկերությունները


*Ո՞ր գործոններն են խոչընդոտում արտասահմանյան գործընկերների հետ բիզնեսի ծավալներն ընդլայնելու ձեր կարողությանը:*




*Ստորև բերվածներից որո՞նք են ձեր ընկերության համար հիմնական խոչընդոտ:*



*Ըստ Ձեզ՝ որո՞նք են Հայաստանի առավելությունները շինարարական նյութերի ոլորտում:*




*Արտասահմանյան ներդրողների ներկայիս հետաքրքրվածությունը շինարարության արժեքի շղթայով*



*Ո՞ր գործոններն են համարվել հաջող ներդրման խոչընդոտ:*



*Շինարարության ոլորտում ուշադրություն էներգախնայողությանը*



## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 
- 1 «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն (1-ը հունվարի, 2011թ.)՝ ՀՀ կառավարությունը ՓՄՁ է համարում այն ընկերություններին, որոնց աշխատողների քանակը չի գերազանցում 250-ը և որը բավարարում է հետևյալ պայմաններից առնվազն մեկը. տարեկան առավելագույնը 1 500 միլիոն ՀՀ դրամ ապրանքաշրջանառություն, կամ առավելագույնը 1 000 միլիոն ՀՀ դրամ տարեկան հաշվեկշիռ:
  - 2 Կարողություններ եզրը վերաբերում է հմտություններին, տեխնոլոգիային և ինովացիոն հնարվորությանը:
  - 3 Ներառյալ փայտյա արտադրանքը:
  - 4 Շինության արտաքին թաղանթը շենքի ինտերիերի և դրսի միջավայրի ինտերֆեյսն է, ներառյալ՝ պատերը, կտուրը և հիմքը: Այն ծառայում է որպես ջերմային պատնեշ և կարևոր դեր է խաղում դրսի միջավայրի համեմատ՝ հարմարավետ ներքին միջավայր պահպանելու համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի քանակը որոշելու հարցում:
  - 5 Մրանք նախնական հաշվարկներ են, որոնք հիմնված են ներկայումս առկա սահմանփակ տվյալների վրա: Նույն աղբյուրի՝ USGS (ԱՄՆ երկրաբանական ուսումնասիրություն) 2012թ. տվյալների համաձայն ԱՄՆ-ում պեռլիտի պաշարները կազմում են 50 մլն. տոննա, կամ Հայաստանի պաշարների մեկ երրորդը, եթե համեմատելու լինենք ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից տրամադրված տվյալների հետ:
  - 6 Առևտրի և ներդրումների խթանման միացյալ կամ առանձին գերատեսչությունների հարաբերական առավելությունների/թերությունների վերաբերյալ մանրամասն քննարկման համար կարող եք հղում կատարել UNCTAD-ին, 2009 թ.:



ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏՀՀԿ-ը յուրօրինակ ֆորում է, որտեղ կառավարությունները միասին աշխատում են լուծելու գլոբալիզացիայով պայմանավորված տնտեսական, սոցիալական և բնապահպանական մարտահրավերները: ՏՀՀԿ-ի գործունեության կենտրոնում կառավարություններին հասկանալն ու օգնելն է, որպեսզի վերջիններս արձագանքեն նոր զարգացումներին և խնդիրներին, ինչպիսիք են կորպորատիվ կառավարումը, տեղեկատվական տնտեսությունը և ծերացող բնակչության խնդիրները: Կազմակերպությունը ապահովում է մի միջավայր, որտեղ կառավարությունները կարող են համեմատել քաղաքականության փորձը, փորձել պատասխաններ գտնել ընդհանրական հիմնախնդիրներին, նախանշել հաջող գործելակերպերը և աշխատել ներքին ու միջազգային քաղաքականությունների համակարգման ուղղությամբ: ՏՀՀԿ անդամ երկրներն են Ավստրալիա, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Չիլի, Չեխիայի Հանրապետություն, Դանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Իսրայել, Իտալիա, Ճապոնիա, Կորեա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Սլովակիայի Հանրապետություն, Սլովենիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա, Թուրքիա, Միացյալ Թագավորություն և Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Եվրոպական Միությունը մասնակցում է ՏՀՀԿ աշխատանքներին:

[www.oecd.org](http://www.oecd.org)

ՏՀՀԿ ԵՎՐԱՍԻԱՑԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՏՀՀԿ Եվրասիայի մրցունակության ծրագիրը, որը մեկնարկել է 2008 թվականին, օգնում է արագացնել տնտեսական բարեփոխումները և բարելավել գործարար միջավայրը տնտեսական կայուն աճի և զբաղվածության հասնելու համար երկու տարածաշրջաններում՝ Կենտրոնական Ասիա (Աֆղանստան, Ղազախստան, Կիրգիզիայի Հանրապետություն, Մոնղոլիա, Թուրքմենստան և Ուզբեկստան) և Արևելյան Եվրոպա ու Հարավային Կովկաս (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Մոլդովայի Հանրապետություն և Ուկրաինա):

[www.oecd.org/globalrelations/eurasia.htm](http://www.oecd.org/globalrelations/eurasia.htm)

Կոնտակտային անձ

Անտոնիո Սոմա

ՏՀՀԿ Եվրասիայի մրցունակության ծրագրի ղեկավար

**LINKING MULTINATIONAL  
ENTERPRISES AND  
ARMENIAN SMEs**

**The case of the construction  
materials sector**

Armenia's construction materials sector could tap into the expanding construction industry in the region neighbouring the country. Foreign direct investment can play a major role to support the modernization of this value chain, but challenges remain, related to demand side, investment promotion and SME capabilities. This Handbook presents recommendations to attract more FDI and develop local SMEs in the construction materials sector.

This Handbook was peer reviewed on 27 November 2014 at the OECD Eurasia Competitiveness Roundtable. The Roundtable is a policy network for knowledge sharing on the implementation of competitiveness reforms and gathers OECD members and Eurasian partner countries.



ԲԱԶՄԱԶԳ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ-ՆԵՐԻ  
ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ  
ՈՒՈՐՏՈՒՄ

Հայաստանի շինարարական նյութերի ոլորտը կարող է միանալ հարևան տարածաշրջանի ընդլայնվող շինարարական ոլորտին և օգտվել ընձեռվող հնարավորություններից: Օտարերկրյա ուղղակի ներդրումները կարող են կարևոր դեր կատարել այս արժեքի շղթայի արդիականացմանն օժանդակելու հարցում. բայց կանաչաբուս, պահանջարկի, ներդրումների խրախուսման և ՓՄՁ կարողությունների առումով դեռևս առկա են մարտահրավերներ: Այս ձեռնարկում ներկայացված են շինարարական նյութերի ոլորտում ավելի մեծ ծավալով ՕՈՒՆ-ի ներգրավմանը և հայրենական ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված առաջարկություններ:

Ձեռնարկն անկախ փորձագիտական գնահատման է ենթարկվել ՏՀԶԿ Եվրասիայի մրցունակության հարցերով կլոր սեղանի 2014 թվականի նոյեմբերի 27-ին կայացած նիստի ընթացքում: Կլոր սեղանը քաղաքականության հարթակ է, որտեղ հավաքվում են ՏՀԶԿ անդամ երկրները և Եվրասիական գործընկեր երկրներն ու միմյանց տեղեկատվություն են ներկայացնում մրցունակության բարեփոխումների իրականացման վերաբերյալ:



With the financial assistance  
of the European Union

